

Ուսումնական նյութերի ժողովածու

Բարձրագույն կրթության (ներառյալ անդրսահմանային բարձրագույն և տրանսազգային կրթությունը) որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներում ներգրավված անձնակազմի և ուսանողների շարունակական մասնագիտական զարգացման և վերապատրաստման համար

Մշակված ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող “Տրանսազգային կրթության որակի ապահովումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում” նախագծի աշխատանքային փաթեթ (ԱՓ) N 1 շրջանակում

Համակարգողներ

Անկա Գրիր	Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալություն (ՈԱԳ)	Միացյալ Թագավորություն
Միքաելա Մարտին	Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտ (ԿՊՄԻ)	Ֆրանսիա

Երախտիքի խոսք

Նախագծի ներդրյալ մասնակիցներն իրենց ներդրումն են ունեցել գործնական օրինակների շրջանակում, որոնք ներառվել են սույն ուսումնական նյութերի ժողովածուի (այսուհետ՝ ՈԻՆԺ) մեջ.

Ջուլիա Ֆորեսթ Julia Forrest	Բաթ Սպա համալսարան (Bath Spa University)	Միացյալ Թագավորություն
Իրմա Գրձելիձե Irma Grzelidze	Ակակի Ծերեթելիի անվան պետական համալսարան (Akaki Tsereteli State University)	Վրաստան
Նինո Կոպալեշվիլի Nino Kopaleishvili	Կրթության որակի խթանման ազգային կենտրոն (National Center for Educational Quality Enhancement)	Վրաստան
Շարիստան Մելկոնյան և Կաթերին Բուոն Sharistan Melkonian and Catherine Buon	Հայաստանի ամերիկյան համալսարան (American University of Armenia)	Հայաստան
Իրենա Մելուա Irena Melua	Կաուկասուս համալսարան (Caucasus University)	Վրաստան
Մարտին Պես և	Ժան Մուլին Լիոն 3 համալսարան	Ֆրանսիա

Ալիդա Սահլի Martine Pes and Alida Sahli	(University Jean Moulin Lyon 3)	
Սյուզաննա Շամախյան Suzanna Shamakhyan	Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարան (Russian-Armenian (Slavonic) University)	Հայաստան
Ռաֆ Շալլման Rafe Smallman	Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալություն (ՈԱԳ) (Quality Assurance Agency for Higher Education)	Միացյալ Թագավորություն
Քրիստոֆ Տերասս Christophe Terrasse	Մենեջմենթի զարգացման Եվրոպական հիմնադրամ (ՄՁԵՀ) (European Foundation for Management Development (EFMD))	Բելգիա
Ռուբեն Թոփչյան Ruben Topchyan	ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ) (National Center for Professional Education Quality Assurance Foundation (ANQA))	Հայաստան

Նախագիծը ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ ԵՀ) աջակցությամբ: Սույն ժողովածուն արտացոլում է միայն հեղինակների և մասնակիցների տեսակետները և ուստի ԵՀ-ն չի կարող պատասխանատվություն կրել սույն ժողովածուի մեջ զետեղված տեղեկատվության օգտագործման համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ	1
Գործողությունների ցանկ	3
Գործնական օրինակների ցանկ	4
Ներածություն	6
Ու՞մ համար է նախատեսված սույն Ժողովածուն	6
Ինչպե՞ս օգտագործել սույն Ժողովածուն	7
Առցանց մոդուլներ	12
Գլուխ 1 Որակը բարձրագույն կրթության ոլորտում: Հասկացությունների և եզրույթների շուրջ	
Գլուխ 2 Որակի արտաքին և ներքին ապահովման գործընթացներ	
Գլուխ 3 Բարձրագույն կրթության միջազգայնացում և անդրսահմանային գործընթացներ	
Գլուխ 4 Տրանսազգային կրթություն և որակի ապահովման կառուցակարգեր	
Ամփոփում Գործողությունների պլանավորում	
Հավելվածներ	

Հապավումների ցանկ

ԱԲԿԴ OBHE	Անսահման ԲԿ դիտարան
ԱԾՊՀ ATSU	Ակակի Ծերեթելիի անվան պետական համալսարան, Վրաստան
ԱՍԲԿ CBHE	Անդրսահմանային բարձրագույն կրթություն
ԲԿԵՏ EHEA	Բարձրագույն կրթության եվրոպական տարածք
ԲԳԴԱԱ AACSB	Բիզնեսի գործընկերային դպրոցների առաջխաղացման ասոցիացիա
ԲԿԵԿ	Բարձրագույն կրթության եվրոպական կենտրոն
ԲԿՄԱ AMBA	Բիզնես կառավարման մագիստրատուրայի ասոցիացիա
ԲԿՎ HER	Բարձրագույն կրթության վերանայում ՈԱԳ կողմից
ԲՍՀ BSU	Բաժ Սպա համալսարան, ՄԹ
Բուհ HEI	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳԱՓԾ DAAD	Գերմանական ակադեմիական փոխանակման ծրագիր
ԵՈՒԶ ESG	Եվրոպական ուղենիշներ և չափորոշիչներ, ՈԱԵԱ
ԺՄԼ JML	Ժան Մուլին Լիոն 3 համալսարան, Ֆրանսիա
ԿԿԵՀ ECTS	Կրեդիտների կուտակման ու փոխանցման եվրոպական համակարգ
ԿՈԽԱԿ NCEQE	Կրթության որակի խթանման ազգային կենտրոն, Վրաստան
ԿՊՄԻ IIEP	Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտ, Ֆրանսիա

ՀՌՀ RAU	Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարան, ՀՀ
ՄՁԵՀ EFMD	Մենեջմենթի զարգացման եվրոպական հիմնադրամ, Բելգիա
ՄՁՄՆԳ USAID	Միջազգային զարգացման Միացյալ Նահանգների գործակալություն
ՈԱ QA	Որակի ապահովում
ՈԱԱԿ ANQA	ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, Հայաստան
ՈԱԳ QAA	Միացյալ Թագավորության Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալություն
ՈԱԵԱ ENQA	Բարձրագույն կրթության ՈԱ եվրոպական ասոցիացիա
ՈԱՇ NQF	Որակավորումների ազգային շրջանակ
ՈԲԵՀ EQUIS	Որակի բարելավման եվրոպական համակարգ, ՄՁԵՀ
ՈԱԱ EQA	Որակի արտաքին ապահովում
ՈՆԱ IQA	Որակի ներքին ապահովում
Որակի կոդեքս Quality Code	Բարձրագույն կրթության Որակի կոդեքս, ՄԹ
ԾՄԱԸՀ GATS	Ծառայությունների մատուցման առևտրի ընդհանուր համաձայնություն
ՀԱՀ AUA	Հայաստանի ամերիկյան համալսարան, Հայաստան
ՀԻԿ LEPL	Հասարակական-իրավական կազմակերպություն (Վրաստան)

ՅՈՒՆԵՍԿՕ UNESCO	ՄԱ կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն
ՎՈՒՄ VLE	Վիրտուալ ուսուցման միջավայր
ՏԱԿ VLE	Տրանս-ազգային կրթություն
ՏԵՄՊՈՒՄ TEMPUS	Տրանս-ազգային շարժունության ծրագիր բուհերի համար
ՏՀԶԿ OECD	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀՏ ICT	Տեղեկատվական համակարգչային տեխնոլոգիաներ
ՈՒԱԱՔՀՀ WSCUC	ՈՒԱԱՔ ավագ քոլեջի և համալսարանի հանձնաժողով, ԱՄՆ
ՔՀ CU	Կաուկասուս համալսարան, Վրաստան
ՄԿՀ TLI	Մասնագիտական կրթական հաստատություն

Գործողությունների ցանկ

Գործողություն՝ փոխըմբռնման ձեռքբերում, ընդհանուր եզրութաբանության պարզաբանում	25
Գործողություն՝ ներկայացված հաստատությունների/կազմակերպությունների ՈԱ միջոցառումների բարելավման ոլորտները	39
Գործողություն՝ արտաքին պահանջներ և գործընկեր հաստատությունների արձագանքը վերջիններիս	31
Գործողություն՝ միջազգայնացումը և անդրսահմանային կրթությունը ԲԿԵՏ-ում	74
Գործողություն՝ անդրսահմանային/SU կրթության ՈԱ միջոցառումները և այն, թե վերջիններս ինչպես կարող են բարեփոխվել բուհերում	93
Գործողություն՝ անդրսահմանային/SU կրթության ՈԱ միջոցառումները կանոնակարգման շրջանակների ներքո	115
Գործողություն՝ ինչպես են բուհերն արձագանքում անդրսահմանային/SU կրթությանը ներկայացվող արտաքին պահանջներին	119
Գործողություն՝ SUԿ իրազեկությունների շրջանակը: Ի՞նչ կարելի է/պետք է պահպանել SUԿ մեթոդաբանության համար	121
Գործողություն՝ ՈԱ ծրագրերի մշակում	131

Գործնական օրինակների ցանկ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈՆԱ գործընթացներ, մեթոդներ և պահանջներ, Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ), ՀՀ	33
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈՆԱ գործընթացներ, մեթոդներ և պահանջներ, Ակակի Ծերեթեղիի անվան պետական համալսարան (ԱԾՊՀ), Վրաստան	36
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈԱԱ գործընթացներ, մեթոդներ և պահանջներ, Կրթության որակի իրաձեռնարկի ազգային կենտրոն (ԿՈԽԱԿ), Վրաստան	
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈԱԱ գործընթացներ, մեթոդներ և պահանջներ, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից	
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Բարձրագույն կրթության վերանայում (ԲԿՎ), ՈԱԳ, ՄԹ	53
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Միջազգայնացում: Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարան (ՀՌՀ), ՀՀ	63
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Միջազգայնացում և անդրսահմանային կրթություն, Կառուկասուս համալսարան (ԶՀ), Վրաստան	71
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Մասնագիտական հավատարմագրում, Մենեջմենթի զարգացման եվրոպական հիմնադրամ (ՄԶԵՀ), Բելգիա	73
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՏԱԿ հասկացություններ, մոտեցումներ, համակարգեր և հղման կետեր, ԲաՖ Սպա համալսարան (ԲՍՀ), ՄԹ	85
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՏԱԿ հասկացություններ, մոտեցումներ, համակարգեր և հղման կետեր, Ժան Մուլին Լիոն 3 համալսարան (ԺՄԼ), Ֆրանսիա	89
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Կարգավորման ազգային հիմքերը ՏԱԿ ՈԱ համար, ՈԱԱԿ, ՀՀ	102
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈԱԱ գործընթացներ, մեթոդներ և պահանջներ, ԿՈԽԱԿ, Վրաստան	107

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՏԱԿ ՈԱԱ մեթոդներ, չափորոշիչներ, չափանիշներ, ցուցիչներ,
ՀԱՀ ՈՒԱՍՔ ավագ քոլեջի և համալսարանի հանձնաժողովի հետ համատեղ
(ՈՒԱԱՔՀՀ),

ԱՄՆ 109

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՏԱԿ ՈԱԱ, Բարձրագույն կրթության որակի ապահովման
գործակալություն (ՈԱԳ), ՄԹ

112

Ներածություն

Սույն ՈՒՆԺ (այնուհետ՝ Ժողովածու) մշակվել է ՏԵՄՊՈՒՄ-ի «Տրանսազգային կրթության որակի ապահովումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում» նախագծի շրջանակներում: Սույն Ժողովածուի մեջ զետեղված տեղեկատվությունը վերցված է ԱՓ 1-ից, ինչպես նաև իրականացված թրեյնինգներից, որոնց կիրառման ընթացքում օգտագործվել է ուսուցման համակցված մոտեցումը (2014թ):

Ժողովածուն ներառում է ՈԱ 5 առցանց մոդուլ, որոնք առկա են անզլերենով և ֆրանսերենով և որոնք մշակվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի ԿՊՄԻ-ի կողմից և թարմացվել հատուկ այս թրեյնինգի համար: Այս մոդուլները նպատակ ունեն հնարավորություն ընձեռել մասնակիցներին նախօրոք ծանոթանալ հասկացություններին, տարբերակներին և բարձրագույն կրթության ՈԱ միջազգային լավագույն փորձին ընդհանուր առմամբ և ՏԱ կրթությանը՝ մասնավորապես:

Սույն Ժողովածուն նաև ներառում է մի շարք նյութեր, որոնց բովանդակությունը վերցված է Լիոնում և Գլոսթերում իրականացված 2 թրեյնինգներից (ԱՓ 1): Խորհուրդ է տրվում այս նյութերն օգտագործել բուհերում և/կամ ՈԱ կազմակերպություններում/լիազորված մարմիններում՝ խրախուսելու որակի արտաքին և ներքին ապահովման գործընթացներում ներգրավված անձնակազմի և ուսանողների մասնագիտական աճը:

Սույն Ժողովածուի կառուցվածքը հնարավորություն է ընձեռում առկա գործընթացների վերլուծություն և քննարկում իրականացնել՝ ուշադրությունը սևեռելով որակի ապահովման/խթանման և միջազգայնացման գործընթացների վրա՝ անդրսահմանային ԲԿ/ՏԱԿ ներգրավմամբ: Այստեղ նաև քննարկվում են ՏԱ կրթության որակի ապահովմանն ուղղված քայլերը, ինչպես նաև ՈԱ հասնելու գործընթացները:

Ու՞մ համար է նախատեսված սույն Ժողովածուն

Սույն Ժողովածուի նյութերը հարիր են բուհերում և ՈԱ կազմակերպություններում/լիազոր մարմիններում օգտագործման համար: Այս փաստաթղթում զետեղված առաջադրանքները երկու ուղղվածություն ունեն՝ ՈԱԱ և ՈՆԱ

գործընթացներ: Սույն Ժողովածուից օգտվող կազմակերպությունները կարող են նախընտրել օգտագործել սույն փաստաթղթում զետեղված նյութերից մի քանիսը միայն:

Ինչպե՞ս օգտագործել սույն Ժողովածուն

Սույն Ժողովածուն կարող է օգտագործվել անհատապես միննույն հաստատության/կազմակերպության կամ տարբեր հաստատությունների/կազմակերպությունների անձնակազմի և ուսանողների կողմից: Այդուհանդերձ, խմբային համագործակցությունը կարող է ավելի արդյունավետ լինել, քանզի այս պարագայում մասնակիցները հնարավորություն կունենան փոխանակել իրենց սպասելիքները և փորձը, ինչն իր հերթին, կարող է հանգեցնել ընթացակարգերի և գործընթացների վերաբերյալ թիմային առավել ընդգրկուն պատկերացմանը և ինստիտուցիոնալ/բաժանմունքային մակարդակում վերոգրյալ գործընթացների առավել արդյունավետ հարմարեցմանը:

Յուրաքանչյուր բաժին մեկնարկում է հիմնական թեմային վերաբերող հարցադրմամբ: Այնուհետև առանձնացված են տարբեր առաջադրանքներ, որոնք հարիր են ինչպես խմբային քննարկումների, այնպես էլ ֆոկուս խմբերի համար: Ավելին, այս Ժողովածուի մեջ զետեղված են նաև տարբեր օրինակներ, որոնք ներկայացված են նախագծի գործընկերների կողմից և ներառում են իրականացված տարբեր գործընթացների օրինակներ, որոնք վերաբերում են տարբեր ազգային/տարածաշրջանային համատեքստերին: Վերոգրյալ առաջադրանքները կարող են օգտագործվել ինչպես միննույն կազմակերպության/հաստատության, այնպես էլ տարբեր կազմակերպությունների/հաստատությունների մասնակիցների պարագայում: Վերջին դեպքում, կիրառվում է համեմատական մոտեցումը: Սույն փաստաթղթի բաժիններում նաև զետեղված են լինքեր, որոնց միջոցով կարելի է հավելյալ տեղեկատվություն ստանալ քննարկվող թեմաների շուրջ: Հավելվածում ներկայացված են ՏԵՄՊՈՒՄ-ի «Տրանսազգային կրթության որակի ապահովումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում» նախագծի մասնակիցների կողմից տրված պատասխանները (ԱՓ 1):

Ժողովածուի անհատական օգտագործում (անձնակազմի ներկայացուցիչների և ուսանողների կողմից)

ՈԱ կառուցվածքներում ներգրավված անձնակազմն ու ուսանողները, ի պաշտոնե և ելնելով իրենց հատկացված դերից և պատասխանատվության շրջանակից, կարող են օգտագործել սույն Ժողովածուն՝ խորացնելու ՈԱ վերաբերյալ իրենց գիտելիքներն ու պատկերացումները.

- իրականացնելով առցանց մոդուլներ,
- խորհելով ներկայացված հարցերի շուրջ իրենց դերակատարության և պատասխանատվության շրջանակներում,
- քննարկելով ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ները և իրականացնելով համեմատություն իրենց հաստատության հետ,
- իրականացնելով առաջադրանքներում ներկայացված գործընթացները:

Միևնույն կազմակերպությունը/հաստատությունը ներկայացնող մասնակիցների կողմից օգտագործում

Եթե իրականացվող թրեյնինգի հիմնական նպատակը միևնույն կազմակերպության/հաստատության ՈԱ թիմի զարգացումն է, ապա մասնակիցների ընտրությունը կիրականացվի կազմակերպությունում/հաստատությունում նրանց իրականացրած դերակատարության, ինչպես նաև թիմային/խմբային քննարկումներին նրանց ունեցած պոտենցիալ ներդրման համաձայն: Ի սկզբանե՝ մինչ խմբային աշխատանքների մեկնարկը, մասնակիցներին կհանձնարարվի իրականացնել առցանց մոդուլներն ինքնուրույն: Առցանց մոդուլներն ավարտելուց հետո, թրեյնինգավարները ձեռնամուխ կլինեն խմբային աշխատանքների նախաձեռնմանը՝ օգտագործելով սույն փաստաթղթում ներկայացված թեմային վերաբերող հարցադրումները, ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ը, ինչպես նաև առաջադրանքները որպես օգնություն: Սույն գործընթացի նպատակն է հասկանալ, թե ներկայումս որտեղ է կանգնած կազմակերպությունը/հաստատությունը (այդ թվում ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ի հետ համեմատությամբ), ինչպես նաև այն, թե ինչ իրատեսական նպատակներ այն կարող է ունենալ ապագայի համար: Սույն Ժողովածուն աջակցում է կազմակերպություններին/հաստատություններին առավել ռազմավարական մոտեցում

որդեզրել ՈԱ և խթանման ուղղությամբ, ինչպես նաև առաջնահերթություն տալ այն ուղղություններին, որոնք հարիր են հաստատության պլանավորմանն ու զարգացմանը: Առաջարկված գործընթացները հնարավորություն են ընձեռում արդյունավետ թիմային աշխատանքի համար և նպաստում, որպեսզի դրանց իրականացման ավարտին ՈԱ գործընթացներում ներգրավված անձնակազմը և ուսանողները կարողանան որպես թիմ հանդես գալ՝ ունենալով ընդհանուր պատկերացում և նպատակներ: Մույն ժողովածուն հնարավորություն է ընձեռում առավել դյուրին դարձնել թիմային համագործակցությունը, ներգրավվել կառուցողական բանավեճերում և իրականացվող գործընթացների վերաբերյալ դրսևորել քննադատական մտածողություն: Այն նաև ընձեռում է բարելավման և զարգացման հնարավորություններ: Թրեյնինգի ավարտին թիմը պետք է.

- առավել համապարփակ տեղեկատվություն ունենա ԲԿ ՈԱ ներկայիս իրավիճակի վերաբերյալ,
- առավել վստահ լինի ՈԱ պահանջների գիտակցման ուղղությամբ,
- առավել բաց լինի ՈԱ փորձի և վերլուծության տվյալների փոխանակման գործընթացներում,
- առավել գիտակ լինի զարգացումների պլանավորման գործընթացում՝ մասնավորապես ՏԱԿ ՈԱ ուղղությամբ, ինչը սույն նախագծի, ինչպես նաև սույն ժողովածուի հիմնական նպատակն է:

Տարբեր կազմակերպությունները/հաստատությունները

ներկայացնող մասնակիցների կողմից օգտագործում

Եթե իրականացվող թրեյնինգի հիմնական նպատակը տարբեր կազմակերպությունների/հաստատությունների միջև փորձի փոխանակումն ու համեմատումն է, մասնակիցները կարող են տարբեր կազմակերպություններից/հաստատություններից ընտրվել: Նման մոտեցումը հեշտացնում է կայուն համեմատական մոտեցումը և խթանում է ՈԱ ողջ գործընթացի առավել լայն գիտակցումն ինստիտուցիոնալ սահմաններից դուրս:

Ինչպես միևնույն կազմակերպություններից/հաստատություններից ընտրված մասնակիցների պարագայում, այնպես էլ այստեղ, մասնակիցներին նախ և առաջ կհանձնարարվի իրականացնել առցանց մոդուլներն ինքնուրույն՝ մինչ խմբային աշխատանքների մեկնարկը: Առցանց մոդուլներն ավարտելուց հետո, թրեյնինգավարները

ձեռնամուխ կլինեն խմբային աշխատանքների նախաձեռնմանը՝ օգտագործելով սույն փաստաթղթում ներկայացված թեմային վերաբերող հարցադրումները, ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ը, ինչպես նաև առաջադրանքները որպես օգնություն: Նման իրավիճակում կազմակերպիչները պետք է գիտակցեն, որ անհրաժեշտություն կա բավարար քանակությամբ ժամանակ հատկացնել համատեքստային յուրահատկությունների, տարբեր մոտեցումների մանրամասների, ինչպես նաև տարբեր մասնակիցների կողմից ներկայացվող կազմակերպությունների/հաստատությունների անցած ուղղու ուսումնասիրությանն ու քննարկմանը, քանզի դրա հիման վրա են ներկայումս ձևավորվել իրականացվող գործընթացները: Սույն գործընթացի նպատակն է տեղեկատվություն փոխանակել ներկա իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև առավել ընկալունակ լինել տարբեր մոտեցումների նկատմամբ: Ավելին, վերոգրյալ գործընթացը նպատակ է հետապնդում առավել վերլուծական մոտեցում ձևավորել տարբեր համատեքստերում ներկայացված և կիրառվող տարատեսակ լուծումների նկատմամբ: Նման քննարկումներն հնարավորություն են ընձեռում համապատասխան բարեփոխումների և փոփոխությունների փորձի օրինակներ քաղել և դրանց անդրադարձ կատարել մասնակիցների ներկայացրած կազմակերպություններում/հաստատություններում թեստավորման/փորձարկման, ինչպես նաև իրականացման համար: Վերոգրյալը նաև հնարավորություններ է ընձեռում միջհամալսարանական համագործակցության համար: Թրեյնինգի ավարտին մասնակիցները պետք է.

- առավել լավ պատկերացում ունենան առ այն, թե ինչպես է իրենց ինստիտուցիոնալ փորձը համեմատվում առավել լայն՝ ազգային/միջազգային հարթակում առկա փորձի հետ,
- առավել համապարփակ գիտելիք ունենան՝ քաղված այլոց գաղափարներից և առաջարկված լուծումներից,
- առավել խորը գիտակցեն, թե վերափոխման/փոփոխության ինչպիսի տոկոս է անհրաժեշտ, որպեսզի առաջարկված լուծումները կիրառելի լինեն իրենց համատեքստում,
- զինված լինեն համապատասխան գիտելիքով ՈԱ ռիսկերը մեղմելու, ինչպես նաև արտաքին պահանջներին արդյունավետ դիմակայելու համար:

ՏԵՄՊՈՒՄ ծրագրի շրջանակներում սույն ժողովածուն օգտագործել ենք տարբեր հաստատությունների/կազմակերպությունների ներկայացուցիչների՝ մասնավորապես Հասայսատնի, Վրաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի և ՄԹ բուհերի ներկայացուցիչների,

ինչպես նաև Հայաստանի, Ֆրանսիայի, Վրաստանի, Բելգիայի և ՄԹ ԲԿ ՈԱ կազմակերպությունների հետ աշխատելիս: Սույն Ժողովածուի հավելվածների բաժնում գետեղված է փորձի փոխանակման արդյունքում դուրս բերված տեղեկատվությունը:

Անկախ այն հանգամանքից, թե Դուք կնախընտրեք այս Ժողովածուն կիրառել անհատապես, թե թիմի/խմբի թրեյնինգների ընթացքում, հուսով ենք այստեղ գետեղված տեղեկատվությունն ու առաջարկված գործընթացները օգտակար կհամարեք տեղեկացվածության բարձրացման, ինչպես նաև ՈԱ և խթանման համակարգերի վերաբերյալ հաստատության գիտելիքի ընդլայնման ուղղությամբ:

Համակարգողներ

Առցանց մոդուլներ

Բուհերի և ՈԱ կազմակերպությունների անձնակազմի ներկայացուցիչներն ու ուսանողները, որոնք ներգրավված են և ՈՆԱ և ՈԱԱ գործընթացներում և ցանկություն ունեն մասնակցել սույն Ժողովածուի մեջ առաջարկվող թրեյնինգներին, պետք է նախ և առաջ մասնակցեն ԿՊՄԻ կողմից առաջարկվող «Որակի արտաքին ապահովում. բուհերի մենեջերների համար» մոդուլներին: Դրանք առկա են և՛ անգլերենով և՛ ֆրանսերենով և հատուկ այս ծրագրի համար թարմացվել են Ֆրանսիայում գործունեություն ծավալող ԿՊՄԻ-ի կողմից՝ որպես այս Ժողովածուի անքակտելի մաս:

Առցանց մոդուլներն հնարավորություն են ընձեռում ծանոթանալ ՈԱ միջազգային իրողություններին և հարթակ են նախապատրաստում ազգային յուրահատուկ համատեքստի հետագա վերլուծության համար: Մինչ խմբային քննարկումներն առցանց մոդուլների իրականացումը մասնակիցներին հնարավորություն է ընձեռում ընդհանուր գաղափար կազմել բանավեճի խնդրո առարկա թեմաների շուրջ, ինչպես նաև ամբողջական շրջանակ մշակել՝ մասնակիցների քննարկումներն առավել համատեղելի դարձնելու համար:

ԿՊՄԻ մասին, Ֆրանսիա

ԿՊՄԻ-ի նպատակն է խթանել երկրների կարողությունը՝ ուղղված իրենց կրթական համակարգի պլանավորմանն ու կառավարմանը: Այս կառույցը հիմնվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 1963թ. Փարիզում, Ֆրանսիա: Այն ՅՈՒՆԵՍԿՕ-ի անքակտելի մասն է կազմում, այդուհանդերձ, այն բավական մեծ ինքնավարություն ունի:

ԿՊՄԻ-ն թրեյնինգի և հետազոտության կենտրոն է, որը մասնագիտանում է կրթության պլանավորման և կառավարման մեջ: Վերոգրյալն իրականացվում է տարբեր երկրների կրթական համակարգերի զարգացման գործընթացում վերհանված կարիքների բարելավման միջոցով: Մինչ օրս ավելի քան 5000 փորձագետներ և կրթության ոլորտի ներկայացուցիչներ են վերապատրաստվել ԿՊՄԻ-ի կողմից:

ԿՊՄԻ-ին մշակել է առցանց մոդուլներ՝ աջակցելու ՈԱ զարգացող համակարգերին՝ ներառյալ SU կրթությունը: Այս մոդուլները կարող են մեկնարկային լինել բոլոր այն հաստատությունների համար, որոնք նախատեսում են SUԿ ՈԱ շրջանակի մշակման գործընթաց: Վերագրյալ մոդուլներից հսկայական քանակությամբ նյութեր են վերցվել նաև սույն Ժողովածուի համար: Հիմնական նպատակը կրթական համակարգերի զարգացման գործընթացում հաստատություններին և ՈԱ գործակալություններին աջակցելն է՝ կենտրոնանալով կրթության պլանավորման և կառավարման վրա:

Մոդուլ 1. ՈԱԱ համակարգերի հիմնական ընտրությունների կայացում

Մոդուլ 1-ում ընթերցողներին ներկայացվում են միջազգային այն ուժերը, որոնք խրախուսում են ազգային կառավարություններին (ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում) իրենց բուհերում հիմնել ՈԱ համակարգեր և ծրագրեր: Այստեղ ներկայացվում են նաև այն հիմնական որոշումները, որոնք ստիպված կլինեն ընդունել ՈԱԱ համակարգի հիմնական գործունեության և շրջանակի հետ կապված:

Մոդուլ 2. Հասկանալ և գնահատել որակը

Մոդուլ 2-ի շրջանակներում ընթերցողին ներկայացվում է ՈԱԱ հիմնական հարցադրումներից մեկը՝ ինչպես չափել որակը: Այս մոդուլում քննարկվում են որակի չափման հիմնական մոտեցումները (ինչպես օրինակ որակական և քանակական)՝ հիմնականում կենտրոնանալով որակի գնահատման ցուցիչների վրա:

Մոդուլ 3. ՈԱԱ գործընթացի վարումը

Մոդուլ 3-ում տրված են ՈԱ գործընթացի կազմակերպման տարբերակները: Չնայած այն հանգամանքին, որ առանցքային տարրերի շուրջ համաձայնություն է ձևեր բերվել, գործընթացի յուրաքանչյուր փուլ բազմազան տարբերակներ է առաջ քաշում՝ համեմված խոշոր փոփոխություններով:

Մոդուլ 4. ՈԱ գործակալության հիմնումն ու զարգացումը

4-րդ մոդուլը ընթերցողին է ներկայացնում ՈԱԱ աջակցման կառույցի/գործակալության դերերը և գործառույթները: Կառավարական պատկանելությանը, վարչարարությանը և կազմակերպմանը վերաբերող տարբերությունները, ինչպես նաև գործակալության հաշվետվողականության ապահովման ուղիներն ու մեթոդները:

Մոդուլ 5. Անդրասահմանային ԲԿ մատակարարների որակի ապահովումն ու կարգավորումը

5-րդ մոդուլը վերաբերում է անդրասահմանային ԲԿ մատակարարների որակի ապահովմանն ու կարգավորմանը: Այն ներկայացնում է ՈԱ և կարգավորման համակարգերի մշակման տարատեսակ մոտեցումներ: Այն ելնում է երկրի փորձից և ազգային քաղաքականության բազմազան նպատակներից՝ ինչպես օրինակ հասանելիության բարձրացում, վերապատրաստման հնարավորությունների դիվերսիֆիկացիա, սեփականաշնորհման խթանում և ԲԿ ոլորտում պետական ու մասնավոր հատվածների մրցակցության բարձրացում:

Ինչպես արդեն վերը նշվեց՝ ԿՊՄԻ մոդուլներն առկա են անգլերենով և ֆրանսերենով: Տե՛ս ներոգրյալ լինքերը.

Անգլերեն

www.iiep.unesco.org/en/promoting-quality-and-recognition-transnational-education-armenia-and-georgia-2663

Ֆրանսերեն

www.iiep.unesco.org/fr/promouvoir-la-qualite-et-la-reconnaissance-de-leducation-transfrontaliere-en-armenie-et-en-georgie

Հարցադրումներ

Թրեյնինգի մոդուլներն ավարտելուց հետո, նախագծի մասնակիցներին տրվում են ներոգրյալ հարցերը՝ հետագա մտորումների համար.

- Ի՞նչ հավելյալ գիտելիք և պատկերացում քաղեցիք:
- Ո՞ր ոլորտները կարող եք ադապտացնել այն համատեքստում, որտեղ գործունեությունն եք ծավալում: Ի՞նչը կօգնի հետագա զարգացումներ արձանագրել: Բացատրե՛ք, թե ինչու հենց այդ քայլերն են տեղին:
- Ինչպիսի՞ օ սահմանափակումներ ունեք Ձեր համատեքստում: Ինչպե՞ս դրանք կազդեն զարգացման հնարավորությունների վրա:

Գլուխ 1՝ Որակը բարձրագույն կրթության ոլորտում:

Հասկացությունների և եզրույթների շուրջ

Սույն գլխում ներկայացվելու են *որակի* և *որակի ապահովման* (ՈԱ) հասկացությունները՝ նպատակ ունենալով իրականացնել բարձրագույն կրթության որակի վերաբերյալ տեսակետների/կարծիքների փոխանակում, ինչպես նաև համաձայնեցնել ՈԱ ոլորտի այն եզրույթները, որոնց մասնակիցներն անդրադարձ են կատարելու իրենց քննարկումների ժամանակ: Սա պարարտ հող է նախապատրաստում Ժողովածուն ավարտին հասցնելու համար, քանզի հասկացությունների փոխանակումն այնուհետ օգտագործվելու է ՈԱ գործընթացների քննարկման, ձևավորման, պլանավորման, մշակման և ներդրման համար:

Այս գլուխը մեկնարկում է հարցադրմամբ. «Որո՞նք են Ձեր կարծիքով լավ հաստատության նախադրյալները» և «Դասավանդման որակի բարելավմանն ուղղված ինչպիսի՞ միջոցառումներ կամ պլաններ են առկա»: Այս հատվածում զետեղված է այն տեղեկատվությունը, որը նախօրոք հավաքագրվել էր ԿՊՄԻ-ի մոդուլներում ներգրվման արդյունքում:

ՈԱ գործընթացի մշակման ընթացքում կարևոր է համապատասխան սահմանումներով ընդհանուր եզրույթների ցանկ մշակել, որոնք հասկանալի կլինեն ներգրավված շահակիցների համար: Սույն Ժողովածուի մեջ զետեղված առաջադրանքների շրջանակում մասնակիցներին տրամադրվում է եզրույթների ցանկ,

որոնց վերաբերյալ վերջիններս պետք է ընդհանուր սահմանումներ տան, որոնք կիրառելի կլինեն ինչպես իրենց հաստատությունում, այնպես էլ իրենց ազգային համատեքստում՝ ուշադրությունը սևեռելով ՌԱ վրա՝ առավել լայն համատեքստում:

ՏԱ կրթությանը վերաբերող եզրութաբանությունը զետեղված է 4-րդ գլխում:

Հարցադրումներ

Մասնակիցներն անհատապես պատասխանում էին ներոգրյալ հարցերին և համապատասխան գրառումներ անում առանձնացված հատվածում: Նման մոտեցումը մասնակիցներին հնարավորություն է ընձեռում մատնանշել բարձրագույն կրթության որակի ապահովման վերաբերյալ իրենց տեսակետները, ինչպես նաև խմբային աշխատանքների համար բանավեճի հարթակ սահմանել:

Նշե՛ք երեք բնութագրիչ, որոնք, ըստ Ձեզ, բարձրորակ հաստատության գրավականն են.

1
2
3

Նշե՛ք երեք բնութագրիչ, որոնք, ըստ Ձեզ, բարձրորակ կրթական ծրագրի գրավականն են.

1
2
3

Նշե՛ք երեք բնութագրիչ, որոնք, ըստ Ձեզ, Ձեր հաստատությունն առանձնացնում/գրավիչ/յուրօրինակ են դարձնում ուսանողների և այլ շահակիցների աչքերում.

1

2

3

Եթե հնարավորություն ունենայիք ինչ-որ բան փոխել Ձեր հաստատությունում/կազմակերպությունում որակը խրախուսելու համար, ի՞նչը կփոխեիք: Արդյո՞ք հնարավոր կլիներ այդ փոփոխությունն անմիջապես իրականացնել: Եթե ոչ, ապա ինչու՞, ի՞նչը կխոչընդոտեր դրան.

Ինչպիսի՞ պլաններ ունի Ձեր հաստատությունը/կազմակերպությունը՝ ուղղված որակի խթանմանը.

Վերոգրյալ պլանների իրականացման համար հետագա ինչպիսի՞ տեղեկատվության/գիտելիքի/փորձառության կարիք կունենա Ձեր հաստատությունը/կազմակերպությունը: Կարո՞ղ եք տեղեկատվությանը/գիտելիքին/փորձառությանն անդրադառնալ ներոգրյալ ընդգրկուն թեմաների շրջանակներում.

- որակի ներքին ապահովում,
- որակի արտաքին ապահովում,
- բարձրագույն կրթության միջազգայնացում,
- տրանսազգային բարձրագույն կրթության անդրսահմանային գործողություններ,
- այլ (մատնանշել)

Տեղեկատվություն/գիտելիք/փորձառություն ... վերաբերյալ	Ո՞ր թեմային է այն վերաբերում	Դրանից ի՞նչ օգուտ կարող է քաղել Ձեր հաստատությունը

--	--	--

Որպեսզի կարողանաք Ձեր հաստատությանը/կազմակերպությանն առավելագույնս աջակցել վերոգրյալ ծրագրերի ներդրման գործում, Ձեզ ի՞նչ հետագա տեղեկատվություն/գիտելիքներ/փորձառություն անհրաժեշտ կլինի:

Կարող եք տեղեկատվությանը/գիտելիքին/փորձառությանն անդրադառնալ ներոգրյալ ընդգրկուն թեմաների շրջանակներում.

- որակի ներքին ապահովում,
- որակի արտաքին ապահովում,
- բարձրագույն կրթության միջազգայնացում,
- տրանսազգային բարձրագույն կրթության անդրսահմանային գործողություններ,
- այլ (մատնանշել)

Կարող եք կրկին անդրադարձ կատարել սույն ցանկին թրեյնինգի ավարտին՝ նշելու ձեռքբերումները:

Տեղեկատվություն/գիտելիք/փորձառություն ... վերաբերյալ	Ո՞ր թեմային է այն վերաբերում	Դրանք ինչպե՞ս կխթանեն Ձեր դերակատարությունը	Ձեռքբերումներ /լրացնել թրեյնինգի ավարտին/

--	--	--	--

Գործողություն՝ փոխըմբռնման ձեռքբերում, ընդհանուր եզրութաբանության պարզաբանում:

Թրեյնինգի շրջանակը

Իրականացնել խորքային քննարկում ՈԱ կառուցակարգերի և նախանշված գործընթացների առնչվող ՈԱ եզրույթների շուրջ, որոնք օգտագործվելու են նախագծի շրջանակներում: Համաձայնության գալ այն եզրութաբանության շուրջ, որը կիրառվելու է ՈԱ համակարգի զարգացման, ներդրման և խրախուսման համար:

Խմբային աշխատանք

Մասնակիցներն աշխատում են փոքր խմբերում (3-4), այնուհետ արդյունքները ներկայացվում են բոլոր մասնակիցներին: Յուրաքանչյուր խումբ զեկուցող է առաջադրում:

Առաջադրանք 1

Ընտրե՛ք խմբերից մեկը և տվե՛ք եզրերի Ձեր սահմանումը (հնարավորության դեպքում այն նաև համեմատելով միևնույն խմբում զետեղված այլ եզրույթների հետ): Այս հատվածում զետեղված եզրույթները զուտ առաջարկություն են: Առաջադրանքի ավարտին հնարավոր է ցանկ ներառել նաև այլ եզրույթներ:

Ձեր քննարկումներն ու որոշումներն ամրագրե՛ք ներոգրյալ աղյուսակում:

Խումբ 1	Սահմանում
Որակի ապահովում	
Որակի խթանում	
Որակի մշակույթ	
Որակի ներքին ապահովում	
Որակի արտաքին ապահովում	

Խումբ 2	Սահմանում
Հավատարմագրում	
Գնահատում	
Գնահատում/փոխգնահատում	
Փորձաքննություն	

Խումբ 3	Սահմանում
Որակի մոդել (չափորոշիչների համակարգ)	
Հղման կետեր	
Չափորոշիչներ	
Ուղեցույցներ	
Բենչմարք	
Չափանիշ	
Սպասելիքներ	
Ցուցիչներ	
Շեմային/սվազագույն չափորոշիչ	

Խումբ 4	Սահմանում
ԲԿ շրջանակ	
Ուսանողների ներգրավվածություն (ներկայացվածություն)	
Գործատուների ներգրավվածություն (աշխատանքի վրա հիմնված ուսուցում)	
Անձնակազմի զարգացում	
Դասավանդման նորարարական մեթոդներ	

Առաջադրանք 2

Ձեր սահմանումները համեմատե՛ք Հավելվածում ներկայացված սահմանումների հետ (էջ 83): Ընդգծե՛ք սահմանումների մեջ վերհանված ցանկացած խորքային տարբերություն: Անհրաժեշտության դեպքում, վերանայե՛ք Ձեր սահմանումները:

Առաջադրանք 3

Ստորև ներկայացված հրատարակություններին ծանոթանալով՝ առավել մանրազնին դիտարկեք Ձեր սահմանումները:

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա (ՈԱԵԱ)

ՈԱ եզրութաբանություն. դեպի համընդհանուր եվրոպական արժեքներ՝

www.enqa.eu/indirme/papers-and-reports/occasional-papers/terminology_v01.pdf

Harvey, L., 2004-14, *Analytic Quality Glossary*, Quality Research International
<http://www.qualityresearchinternational.com/glossary/>

Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալություն

Եզրերի բառարան

www.qaa.ac.uk/about-us/glossary

ՅՈՒՆԵՍԿՕ-ԲԿԵԿ

ՈԱ և հավատարմագրում. հիմնական եզրույթների և սահմանումների բառարան

<http://unesdoc.unesco.org/images/0013/001346/134621e.pdf>

Գլուխ 2. Որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներ

Սույն հատվածում խոսվելու է ՈԱ համակարգերի զարգացման մասին՝ ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ՝ ազգային մակարդակում: Նպատակն է մինչ անդրսահմանային կրթության/SU ԲԿ որակի ապահովմանն անդրադարձ կատարելը, համոզվել, որ առկա են որակի ներքին և արտաքին ապահովման համակարգեր:

Սույն հատվածը մեկնարկում է հարցադրմամբ. «<Որակի ապահովման ուղղությամբ պատասխանատվության ինչպիսի՞ շրջանակ է առկա հաստատությունում>>: Այստեղ նաև հարցադրում է արվում առ այն, թե ՈԱ համակարգերի մասնակիցները գործող ինչպիսի գործընթացներ ունեն ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ ազգային մակարդակում:

Հույժ կարևոր է, որպեսզի մշակվող ՈԱ համակարգերը համապատասխանեն պահանջներին, որոնք գործում են այն երկրներում, որտեղ գործունեություն են ծավալում մասնակիցները: Գործնական երկու օրինակները ներկայացնում են Հայաստանում և Վրաստանում ԲԿ ՈՆԱ համակարգերի օրինակներ՝ ներառելով դրանց բնութագրիչները և այն, թե ինչպես են դրանք գործում:

Ներկայացված օրինակները մասնակիցներին հորդորում են հաշվի առնել լավագույն փորձը, ինչպես նաև ինքնին հաստատության ներսում վերհանված բարելավման կարիք ունեցող ոլորտները՝ ազգային առկա համակարգերի հետ համադրմամբ: Առաջին առաջադրանքը մասնակիցներին հնարավորություն է ընձեռում փորձի փոխանակում իրականացնել, սովորել միմյանցից՝ ինչպես ուղղակի քննարկումների, այնպես էլ գործնական օրինակներից եզրակացություններ քաղելու միջոցով: Այն նաև հորդորում է մասնակիցներին ըստ կարևորության առանձնացնել ինչպես լավագույն փորձի օրինակներն, այնպես էլ այն ոլորտները, որոնք բարելավման կարիք ունեն և քննարկել այդ ոլորտների բարելավմանն ուղղված համապատասխան միջոցառումները:

ՈԱԱ համակարգի մշակումն ակնհայտ ազդեցություն ունի հաստատության ներսում իրականացվող գործընթացների վրա: Գործնական վերջին երեք օրինակները

վերաբերում են Վրաստանում, Հայաստանում և ՄԹ գործող ՈԱ համակարգերին: Վերոգրյալ օրինակները նաև ի ցույց են դնում այն համատեքստերը, որոնցում ՈԱ ազգային մարմինները գործունեություն են ծավալում, այդ անհատական համակարգերի յուրահատկություններն ու մեթոդաբանությունը, ինչպես նաև ազգային մակարդակում նրանց ստանձնած պատասխանատվությունները: Ուստի, երկրորդ առաջադրանքի շրջանակներում մասնակիցներին հանձնարարվում է քննարկել ՈԱ ազգային համակարգերը (իրենց երկրներում) և դրանց ազդեցությունը հաստատությունների վրա՝ հաշվի առնելով ինչպես դրական կողմերը, այնպես էլ մարտահրավերները:

Ինչպես գործնական օրինակների ուսումնասիրությունը, այնպես էլ առաջադրանքները միտված են խթանելու խմբային/թիմային քննարումների արդյունքում դուրս բերված որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակման գործընթացը:

Հարցադրումներ

Մասնակիցները կարող են անհատապես խորհել սույն հարցերի շուրջ, կամ թրեյնինգավարները կարող են սրանք օգտագործել որպես խմբային քննարկումների մեկնարկային հարցադրումներ: Թրեյնինգավարները պարտադրված չեն անդրադարձ կատարել բոլոր հարցադրումներին, փոխարենը, նրանք կարող են ներոգրյալ հարցերից առանձնացնել այնպիսիք, որոնք առավել սկզբունքային են այս կամ այն աշխատանքային խմբի համար.

- 1 Ինչպիսի՞ն է Ձեր ներգրավվածությունը Ձեր հաստատության որակի կառույցներում:
- 2 Ինչպիսի՞ պաշտոնական համատեքստերում/կառույցներում են որակին առնչվող հարցերը քննարկվում Ձեր հաստատությունում: Արդյոք Դուք ուղղակիորեն ներգրավվա՞ծ եք այդ կառույցներում:
- 3 Ինչպիսի՞ ոչ-պաշտոնական համատեքստերում են որակին առնչվող հարցերը քննարկվում Ձեր հաստատությունում: Արդյոք Դուք ուղղակիորեն ներգրավվա՞ծ եք այդ կառույցներում:

- 4 ՈԱԱ ինչպիսի՞ կառուցակարգեր են գործում Ձեր երկրում:
- 5 Ձեր կարծիքով, ՈԱԱ համակարգը ինչպիսի՞ ազդեցություն ունի Ձեր հաստատության ՈՆԱ համակարգի վրա:
- 6 Ձեր կարծիքով, ՈԱԱ կառուցակարգերն ինչպե՞ս կարող են հետագայում բարելավվել՝ աջակցելու Ձեր երկրում գործող հաստատություններին որակի ուղղությամբ:
- 7 Որո՞նք են ՈԱ այն կառուցակարգերը, որոնք պարտադիր են Ձեր հաստատություններում: Ո՞ր մակարդակում են դրանք գործում՝ ինստիտուցիոնալ, ծրագրային, այլ: Արդյո՞ք դրանք կապված են դասավանդվող առարկայի հետ: Ո՞ր կառույցն է պատասխանատու դրանց վերահսկման համար:
- 8 Որո՞նք են ՈԱ այն կառուցակարգերը, որոնք կամընտրական են և թողնված են Ձեր ընտրությանը: Ո՞ր մակարդակում են դրանք գործում՝ ինստիտուցիոնալ, ծրագրային, այլ: Արդյո՞ք դրանք կապված են դասավանդվող առարկայի հետ: Ո՞ր կառույցն է պատասխանատու դրա վերահսկման համար:
- 9 Արդյոք Ձեր հաստատությունը հետևու՞մ է ընդունող երկրի ՈԱԱ կառուցակարգերին: Եթե ոչ, ինչպիսի՞ չափանիշներ եք կիրառում:

ՈՆԱ համակարգեր, մեթոդներ և պահանջներ

Գործնական ներդրյալ օրինակներն ուսումնասիրելիս, մասնակիցները կարող են մտորել հետևյալ ասպեկտների շուրջ: ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ի հետագա վերլուծությունը առաջարկված է գալիք առաջադրաքներում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈՆԱ համակարգեր, մեթոդներ և պահանջներ

Ներկայացված՝ Հայաստանի Ամերիկյան Համալսարան-ի կողմից, Հայաստան

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին:

- ՀԱՀ-ում գործող համակարգերը ընդհանրություն ունեն արդյոք Ձեզ ծանոթ այն համակարգերի հետ, որոնք գործում են Ձեր իսկ համատեքստում: Արդյոք այդ համակարգերը կարո՞ղ են առավել զարգացվել: Նշված համակարգերից որո՞նք են նպատակահարմար պահպանել Ձեր իսկ համակարգի շրջանակներում:
- ՀԱՀ-ի կողմից նկարագրված ռեսուրսներն ընդհանրություն ունեն արդյոք Ձեր համատեքստում կիրառված ռեսուրսների հետ: Արդյոք կարո՞ղ են դրանք առավել զարգացվել: Դրանցից որո՞նք են նպատակահարմար պահպանել Ձեր իսկ համակարգի շրջանակներում:
- Ստորև ներկայացված մարտահրավերներն արդյո՞ք արդիական են նաև Ձեր համատեքստում: Ունեն՞ք արդյոք առաջարկություններ նման մարտահրավերները հաղթահարելու համար:

ՀԱՀ-ը ներկայացնում է գոյություն ունեցող ՔԱ կառույցների, գործընթացների և քաղաքականությունների ամփոփ նկարագիրը, ինչպես նաև դրանց կիրառման հետ կապված մարտահրավերները:

A Գոյություն ունեցող համակարգերը

- a ՀԱՀ-ի առաքելություն <http://aua.am/the-aua-mission/>
- b ՄԿԾ-ների վերանայման ուղեցույցներ <http://iro.aua.am/learning-assessment/>
- c Ուսումնաօժանդակ միավորումների ուղեցույցներ
<http://iro.aua.am/files/2012/04/Guidelines-for-Review-of-Academic-Support-Units-FINAL.docx>
- d Ուսանողների գնահատման տարեկան ուղեցույցներ.
 - i Բոլոր ՄԿԾ-ների շրջանակում ուսանողների տարեկան գնահատում
 - ii Պլաններ և զեկույցներ
 - iii Ամփոփում
- e Քաղաքականություններ՝ առցանց <http://aua.am/policies/>
- f Ֆինանսական աուդիտ
- g Տարեկան զեկույցներ
 - i Հավատարմագրում
 - ii Կրթության և գիտության նախարարություն
 - iii Տարբեր ասոցիացիաներ

B Ռեսուրսներ

- a ՀԱՀ առաքելություն <http://aua.am/the-aua-mission/>
- b Հետազոտության ինստիտուցիոնալ գրասենյակ <http://iro.aua.am/>
- c Գնահատման և հավատարմագրման գրասենյակ
- d Մեմինարներ, պրեզենտացիաներ, թրեյնինգներ (ներառյալ նյութերի առցանց գրադարան): <http://iro.aua.am/faculty-workshops/>
- e Հավատարմագրման կառավարման հանձնաժողով
- f Հավատարմագրման ընդհանրական գործընթացներ
 - i Հավատարմագրման ձեռնարկ
www.wascsenior.org/content/2013-handbook-accreditation
 - ii Հավատարմագրման չափանիշներ
www.wascsenior.org/resources/handbook-accreditation-2013/part-ii-core-commitments-and-standards-accreditation/wasc-standards-accreditation-2013
- g Դեկաններ, դեկանների օգնականներ, ամբիոններ, բաժանմունքների ղեկավարներ

- h Ձևաթղթեր
 - i Դասընթացի/առարկայի ուղեցույցի ձևաթուղթ
<http://iro.aua.am/files/2012/04/Course-Syllabus-Template-Final.docx>
 - ii Ուսանողների գնահատման պլան և զեկույց
Ձևաթղթեր <http://iro.aua.am/files/2012/04/SLAP-Template.docx>
 - iii Ծրագրի նպատակների համապատասխանությունը
կրթական ծրագրի, ինչպես նաև դասընթացի
վերջնարդյունքներին: Ձևաթուղթ (դասընթացի/առարկայի
ուղեցույցի ձևաթղթի մի հատված)
 - iv Ուսումնասիրություն և ստացված տվյալների օգտագործման
ձևաչափ

C Մարտահրավերներ

- a Ֆակուլտետի ծանրաբեռնվածությունն ըստ ծանրաբեռնվածության
քաղաքականության
 - i Կարողությունների ձևավորում
 - ii Կրթական ծրագրերին տրամադրվող վարչարարական
օժանդակություն (բյուժեի հետ առնչվող հարցեր)
 - iii Աուդիտի ենթարկվելու պատրաստակամություն և
կարողություն
- b Ծրագրերի ներդրման հետևողականություն

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈՆԱ համակարգեր, մեթոդներ և պահանջներ

Ներկայացված՝ Ակակի Ծերեթելիի պետական համալսարանի կողմից (ԱԾՊՀ), Վրաստան

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- ԱԾՊՀ-ի կողմից նկարագրվող ՈԱ դերերն ու պատասխանատվությունների շրջանակն արդյո՞ք ընդհանրություն ունի Ձեր իսկ համատեքստում գործող ՈԱ դերերի ու պատասխանատվությունների շրջանակի հետ: Արդյո՞ք սրանք հետագա զարգացման կարիք ունե՞ն: Նշված համակարգերից որո՞նք են նպատակահարմար Ձեր իսկ համակարգի շրջանակներում պահպանելու համար:
- Արդյո՞ք ծանոթ եք Ձեր համատեքստում իրականացվող ինքնագնահատման գործընթացներին: Եթե այո՝ արդյո՞ք դրանք համանման նպատակներ են հետապնդում: Արդյո՞ք ԱԾՊՀ-ի կողմից ներկայացված ինքնագնահատման գործընթացը հետագա զարգացման կարիք ունի: Նշված գործընթացներից որո՞նք են նպատակահարմար Ձեր իսկ համակարգի շրջանակներում պահպանելու համար:

Ակակի Ծերեթելիի պետական համալսարանը (ԱԾՊՀ) հիմնադրվել է 8 տասնամյակ առաջ՝ խթանելու.

- պատշաճ վարչարարությունն ու օրենքի գերակայությունը,
- նորարարական և միջառարկայական հետազոտությունը,
- կրթական և մասնագիտական ծրագրերը,
- մարդասիրական, ժողովրդավարական, ազգային և միջազգային արժեքների հիմնումը,
- անցյալի պահպանումն ու նորարարությունների զարգացումը:

ԱԿՊՀ-ում ՈԱ պլանավորում և կառավարում է ներոգրյալ գործընթացները.

- բակալավրի, մագիստրատուրայի և դոկտորանտուրայի ծրագրերի նախապատրաստում հավատարմագրման գործընթացին,
- ծրագրերի արտաքին և ներքին գնահատման խթանում,
- կրթության որակի խթանման ազգային կենտրոնի համար տարեկան ինքնագնահատման զեկույցների պատրաստում,
- ԱՕՊՀ-ի միջազգային կրթական տարածք ինտեգրման խթանում,
- կրեդիտների կուտակման ու փոխանցման եվրոպական համակարգի ներկայացում,
- դասավանդման, ուսուցման, կառավարման և հետազոտության որակի բարելավում՝ հարցումների, տվյալների վերլուծության և համապատասխան խորհրդատվության տրամադրման միջոցով,
- ԱՕՊՀ-ի անձնակազմի անձնական և մասնագիտական զարգացման կազմակերպում և այլ ուսումնական հաստատությունների և շահեկիցների հետ կապերի հաստատում,
- միջազգայնացում:



Կանոնավոր ինքնագնահատում ասելով՝ մենք ի նկատի ունենք.

- ինչպես ենք գործունեություն ծավալում և ինչ է անհրաժեշտ բարելավման համար,
- նախորդ տարում/տարիներին իրականացված ինստիտուցիոնալ կամ ազգային բենչմարքի հետ համեմատություն,
- մեր սովորողների և այլ խմբերի կարիքների վերհանում,
- մեր գործունեությանն առնչվող ողջ տեղեկատվության հավաքագրում,
- նախապատրաստում տարեկան վերանայման կամ ստուգումների:

Ինքնագնահատման գործընթացի իրականացման ընթացքում ուշադրության հանգրեճը կարող է փոփոխվել՝ խնդիրներից կախված: Ընդհանուր առմամբ, ուշադրությունը հիմնականում կենտրոնացված է դասավանդման, ուսուցման, ենթակառուցվածքների, կառավարման և հետազոտության վրա:

Ներոգրյալ հարցերն են առաջադրվում ինքնագնահատման գործընթացի ընթացքում.

- Արդյո՞ք գործընթացներն ավարտին հասվել են:
- Ի՞նչ ազդեցություն են դրանք ունեցել:
- Ի՞նչն է աշխատել:
- Ի՞նչը չի աշխատել:
- Ի՞նչ փոփոխություններ պետք է ներմուծենք որակի պլանավորման գործընթացն ավելի լավը դարձնելու համար:

Գործողություն՝ ներկայացված հաստատություններում/կազմակերպություններում ՈԱ միջոցառումների բարելավման ոլորտներ

Թրեյնինգի շրջանակը

Վեր հանել ներկայացված կազմակերպություններում/հաստատություններում ներդրված ՈԱ միջոցառումների իրականացման ներկայիս կառուցվածքներն ու գործընթացները և համաձայնության գալ լավագույն փորձի (ինչն է իրավամբ աշխատել), ինչպես նաև բարելավման կարիք ունեցող ոլորտների (ինչի վրա հատկապես ուշադրություն է անհրաժեշտ դարձնել) վերաբերյալ:

Խմբային աշխատանք

Մասնակիցներն աշխատում են փոքր խմբերում (3-4), այնուհետ արդյունքները ներկայացվում են բոլոր մասնակիցներին: Յուրաքանչյուր խումբ զեկուցող է առաջադրում:

Առաջադրանք 1

ՈԱ 5 ոլորտ առաջարկեք, որոնք կարելի է կամ լավագույն փորձի օրինակ համարել, կամ բարելավման կարիք ունեցող ոլորտ (ներկայացված ցանկն ըստ առաջնահերթության պետք է ներառի այն ոլորտները, որոնք վեր են հանվել Ձեր ներկայացված հաստատություններում): Ձեր կազմած ցանկը համեմատե՛ք ՏԵՄՊՈՒՄ ծրագրի գործընկերների ցանկի հետ, որը զետեղված է հալելվածում, **էջ 85:**

Առաջնահերթություն (նշե՛ք համարը)	Ոլորտ	Լավագույն փորձ կամ բարելավման կարիք ունեցող ոլորտ

Առաջադրանք 2

Վերանայե՛ք ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ները և որոշե՛ք, թե լավագույն փորձի, ինչպես նաև բարելավման կարիք ունեցող ինչպիսի ոլորտներ կարելի է վերհանել: Կրկին անդրադարձ կատարեք Առաջադրանք 1-ում ամրագրված առաջնահերթությունների ցանկին և որոշեք, թե ինչ փոփոխություններ են անհրաժեշտ՝ Առաջադրանք 1-ի եզրակացությունների վրա հիմնվելով: Ըստ անհրաժեշտության վերոգրյալ աղյուսակը փոփոխեք համապատասխանաբար:

Լավագույն փորձի օրինակներ	Բարելավման կարիք ունեցող ոլորտներ

Առաջադրանք 3

Առաջադրանք 1-ում զետեղված առաջնահերթությունների ցանկն օգտագործելով՝ մտորե՛ք թե զարգացման ուղղությամբ կոնկրետ ինչպիսի գործողություններ պետք է իրականացվեն և դրանք ամրագրեք գործողությունների պլանի ներդրյալ ձևաթղթում:

Գործողությունների պլանի ձևաթուղթ						
Ոլորտ (նշե՛ք համարը)	Ակնկալվող վերջնարդյունքներ	Գործողություններ, որոնք պետք է իրականացվեն ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու համար (համոզվե՞ք, որ ՈԱ ողջ շրջափուլը ներգրավված է)	Ամսաթիվ	Գործողություն ըստ (դերակատարության, ոչ ըստ անձանց)	Ում է գեկուցվելու	Ապացույց (ինչպես եք ցուցադրելու, որ այն իրականացմա ն փուլում է)

ՈԱԱ համակարգեր, մեթոդներ և պահանջներ

Գերծնական ներդրյալ օրինակներն ուսումնասիրելիս, մասնակիցները կարող են մտորել հետևյալ ոլորտների շուրջ: ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ի հետագա վերլուծությունը առաջարկված է գալիք առաջադրաքննարկում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈԱԱ գործընթացներ, մեթոդներ և պահանջներ

Ներկայացված՝ Կրթության որակի խթանման ազգային կենտրոնի կողմից, Վրաստան

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին:

- ԿՈՒՄԱԿ-ի գործընթացներից որո՞նք եք ամենահետաքրքիրը համարում և որոնց շրջանում եք ամենաշատ մարտահրավերներ տեսնում: Պարզաբանե՛ք:
- ԲԿ ՈԱ ստորև ներկայացված զարգացումներն արդյոք նմա՞ն են Ձեր համատեքստում իրականացվող զարգացումներին: Որո՞նք են տարբերությունները, որո՞նք՝ նմանությունները:
- Ձեր համատեքստում գործող ՈԱԱ լիազոր մարմինները արդյոք պատասխանատվությունների միևնույն շրջանա՞կն են ծածկում ԲԿ ոլորտում: Որո՞նք են տարբերությունները, որո՞նք՝ նմանությունները:

Կրթության որակի խթանման ազգային կենտրոնը, համաձայն իր առաքելությանը, շարունակական աշխատանք է ծավալում կրթության որակի հասկացույթի զարգացման, արդի չափանիշների ստեղծման և պահպանման ուղղությամբ: Այն նաև ապահովում է համապատասխան կառուցակարգեր՝ ուղղված երկրի ընդհանուր ռազամավարությանը համահունչ շարունակական բարելավմանը, ինչպես նաև միջազգային համայնքին ներգրավվելու նպատակներին:

ԿՈԽԱԿ-ը նպաստում է դասավանդման և ուսումնական պայմանների հաստատմանը բարձրագույն, մասնագիտական և ընդհանուր կրթական հաստատություններում:

ԿՈԽԱԿ-Ի տեսլականի համաձայն, Վրաստանում գործունեություն ծավալող բոլոր կրթական հաստատությունները պետք է հանդես գան որպես գիտելիքի հաստատուն և կայուն ցանց՝ միտված շարունակական զարգացմանը քաղաքակիրթ աշխարհի հետ համընթաց: ԿՈԽԱԿ-ը շարունակ հանդես է գալիս որպես հմուտ և անկախ անհատների ձևավորման գործընթացների ջատագով՝ նպաստելով երկրի գիտական, մշակութային, հասարակական և տնտեսական զարգացումներին:

ԿՈԽԱԿ-ը հիմնադրվել է 2010թ. սեպտեմբերին, որպես Կրթության հավատարմագրման ազգային կենտրոնի իրավահաջորդ և գործունեություն է ծավալում Վրաստանի Կրթության որակի խթանման օրենքի ներքո:

ԿՈԽԱԿ-ի իրականացրած հիմնական գործընթացներն են.

- կրթական հաստատությունների լիազորում
- ծրագրային հավատարմագրում
- կրթության ճանաչում (օտարերկրյա կրթություն, լիցենզավորված համալսարաններ, փախստականներ, աքսորվածներ),
- ապոստիլ, կանոնադրություն,
- բոլոնիայի գործընթացի ներմուծում և ԲԿ միջազգայնացման խրախուսում,
- ԲԿ և միջին մասնագիտական հաստատությունների ռեգիստրի պահպանում,
- միջին մասնագիտական կրթության համակարգի և կարողությունների հիմնում:

Վրաստանի համատեսքոր

ԿՈԽԱԿ-ի հիմնումը ուշադրությունը սևեռեց կրթության որակի վրա և նախաձեռնեց մի շարք փոփոխություններ ինչպես կիրառության մակարդակում, այնպես էլ օրենսդրական դաշտում:

Վրաստանի ԲԿ և Ընդհանուր կրթության օրենքներում իրականացված փոփոխությունների համաձայն (2010թ.) պարտադիր լիցենզավորումն ու իստիտուցիոնալ հավատարմագրումը փոխարինվել են լիազորման գործընթացներով:

Լիազորման չափորոշիչներ	http://eqe.ge/res/docs/2014120816204360562.pdf
Լիազորման գործընթացներ	http://eqe.ge/eng/static/153/accreditation/procedure

Հավատարմագրման բովանդակությունը ևս փոփոխության է ենթարկվել՝ փորձելով ապահովել կրթական ծրագրերի համադրելիությունը հավատարմագրման չափորոշիչներին և նպատակ է հետապնդում ներմուծել կանոնավոր կերպով իրականացվող ինքնագնահատում՝ կրթության որակի բարելավման և ՈԱ հետագա զարգացման համար: Լիազորման գործընթացը պարտադիր է բոլոր կրթական հաստատությունների համար, մինչդեռ հավատարմագրումը՝ կամավոր:

Հավատարմագրման չափորոշիչներ	http://eqe.ge/res/docs/2014120816393520902.pdf
Հավատարմագրման գործընթացներ	http://eqe.ge/eng/static/153/accreditation/procedure

Վրաստանի Կրթության և գիտության նախարարությունը ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի մեկնարկն ազդարարել է 2004թ, իսկ 2007թ. մարտի 27-ին հիմնադրվել է Կրթության հավատարմագրման ազգային կենտրոնը: Վորոգրյալ կենտրոնի լիազորությունների շրջանակը ներառում էր Վրաստանի բարձրագույն, միջին մասնագիտական և ընդհանուր կրթական հաստատությունների հավատարմագրումը:

Կրթական հաստատությունների լիազորման և ծրագրային հավատարմագրման գործընթացներն համանման են, չնայած չափորոշիչները տարբերվում են: Ընդհանուր առմամբ գործընթացը ներառում է.

- դիմումի ներկայացում, որին նախորդում է ինքնագնահատման գործընթացը,
- գործընկերային հանձնաժողովի կազմում,
- այց,

- գործընկերային զեկույցի պատրաստում և ներկայացում հետաքրքրված կողմերին,
- խորհրդի կողմից լսումների կազմակերպում,
- որոշման կայացում և հրատարակում:

ԿՈԽԱԿ-Ի հիմնումից ի վեր և վերջինիս ակտիվ մասնակցությամբ իրականացված օրենսդրական փոփոխությունները ներկայացված են ստորև.

- ՈԱՇ-ի որդեգրում Վրաստանի ԿԳՆ-ի 2010թ. դեկտեմբերի 10-ի, No. 120 որոշման համաձայն: Փաստաթուղթը ներառում է Վրաստանի ընդհանուր, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության բոլոր որակավորումներն ու տարբեր մակարդակները, ինչպես նաև հմտությունները: ՈԱՇ-ը սահմանում է, թե ինչ գիտելիք, հմտություն և արժեքներ պետք է ունենա անհատը որպեսզի նրան շնորհվի համապատասխան մակարդակի ավարտական փաստաթուղթ. դպրոցական վկայական (ատեստատ), միջին մասնագիտական կրթության դիպլոմ, ԲԿ դիպլոմ (ՈԱՇ http://eqe.ge/eng/education/national_qualifications_framework):
- Կրթության որակի խթանման մասին օրենք, որը սահմանում է օրինական կառուցակարգեր (ներքին և արտաքին)՝ ուղղված կրթության որակի խթանմանը:
- ԲԿ օրենքում փոփոխություններ, որոնք միտված են կրթական հաստատությունների լիազորմանը և ծրագրային հավատարմագրմանը: Սա հանգեցրեց լիազորման և ծրագրային հավատարմագրման կանոնակարգերի որդեգրմանը:
- ՈԱՇ-ի և որակավորումների ցանկի սահմանումը պարարտ հող նախապատրաստեց սեկտորային բենչմարքի զարգացման համար: Մինչ այժմ կանոնակարգված երեք մասնագիտությունների շրջանակներում որդեգրվել են համապատասխան բենչմարքներ՝ իրավագիտություն, բժշկություն և մանկավարժություն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈԱԱ գործընթացներ, մեթոդներ և պահանջներ

Ներկայացված՝ **ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից (ՈԱԱԿ), Հայաստան**

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- ՈԱԱԿ-ի նկարագրած ՈԱԱ գործընթացներից որո՞նք եք ամենահետաքրքիրը համարում և որոնց շրջանում եք ամենաշատ մարտահրավերներ տեսնում: Պարզաբանե՛ք:
- ՈԱԱ ներդրյալ գործընթացն ինչպե՞ս է համեմատվում Ձեր համակարգում կիրառվածներից: ՈԱԱԿ-ի գործընթացները արդյոք կարո՞ղ են հետագայում ավելի զարգացվել: Ո՞ր գործընթացներն են նպատակահարմար պահպանել Ձեր իսկ համակարգում:
- Փոխգնահատման ինչպիսի՞ փորձ ունեք: Ինչպե՞ս է այն համեմատվում ներդրյալ համակարգի հետ:

ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը ՈԱ գործակալություն է, որն անկախ է ինչպես ՀՀ կառավարությունից, այնպե՛լ էլ ՀՀ տարածքում գործունեություն ծավալող բուհերից: ՈԱԱԿը փորձում է խթանել հասարակական վստահությունն ու միասնությունը, հավասարությունը, պատասխանատվությունը և մրցունակությունը բուհերի զարգացմանն ուղղված համակարգված գործընթացների ապահովման միջոցով:

Ըստ ՈԱԱԿ-ի, որակը սահմանվում է որպես է «համապատասխանություն նպատակին»: Այս հասկացության համաձայն, արտաքին գնահատումը պետք է սահմանի, թե մատուցվող ծառայություններն ու արտադրանքն ինչքանով են համապատասխանում նախորոշված նպատակներին:

Բուհերի ՈՆ ապահովումը հայաստանյան ՈԱ շրջանակի հիմնաքարային տարրերից է: Սա մի գործընթաց է, որի միջոցով բուհը հավաստում է ինքն իրեն և իր շահակիցներին, որ այն իր գործունեության բոլոր ոլորտներում առաջնորդվում է բարձր չափանիշներով: Հաշվետվողականության ոլորտում, ՈՆԱ օգտագործվում է որպես վերահսկման կառուցակարգ: ՈՆԱ գործիք է, որը հավաստում է, որ բուհը իրականացնում է հասարակության պահանջներն ու կարիքները: Այն նաև ապահովում է բուհերի գործունեության առանցքային ինքնավարությունը:

Վերոգրյալից զատ, այն նաև մատնանշում է, որ անհրաժեշտ է բուհերի հասարակական պատասխանատվություն, ինչպես նաև ՈՆԱ քաղաքականության և ընթացակարգերի թափանցիկություն և արտաքին գնահատում: ՈԱ չափորոշիչները, չափանիշներն ու գործընթացները մշակվել են վերոգրյալը վերահսկելու նպատակով:

ՈԱ հայկական գործակալությունը իրականացնում է երկու տեսակի հավատարմագրում: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր գործընթաց է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բուհերի համար: Մույն հավատարմագրումը հնարավորություն է ընձեռում գնահատել, թե ինչպես է բուհը գործում և թե արդյոք այն ծառայում է իր իսկ առաքելությանը, որի իրականացման համար էր այն հիմնադրվել: Ծրագրային հավատարմագրումը կամավոր գործընթաց է՝ չնայած որ այն պարտադիր է բժշկական ծրագրերի համար ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բուհերի շրջանում:

Ծրագրային հավատարմագրումը ապահովում է շնորհված որակավորումների ճանաչում ինչպես ազգային, այնպես էլ միջազգային հարթակում՝ ներառյալ վավեր կրեդիտների կուտակում և փոխանցում: Այն նաև հնարավորություն է ընձեռում դիմել ՀՀ կառավարության ֆինանսավորմանը: Ուստի, ծրագրային հավատարմագրումն անհրաժեշտ նախապայման է ֆինանսավորման համար: Այդուհանդերձ, սա չի նշանակում, որ հավատարմագրման պարագայում ֆինանսավորումն ինքնաբերաբար է իրականացվում: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը նախապայման է ծրագրային հավատարմագրման համար: ՈԱԱԿ-ը ՀՀ կառավարության կողմից լիազորված միակ կառույցն է, որը պատասխանատու է ՈԱԱ ապահովման համար:

Ինչպես ծրագրային, այնպես էլ ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է 3 հաջորդական քայլերով.

Առաջին փուլ	Բուհի կողմից իրականացվող ինքնագնահատում
Երկրորդ փուլ	Արտաքին փորձագիտական խմբի կողմից իրականացված այց
Երրորդ փուլ	Փորձագիտական խմբի կողմից պատրաստված զեկույց և ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի կողմից ընդունված որոշում:

Ինքնավերլուծությունը մի գործընթաց է, որը ինչպես բուհը, այնպես էլ ՄԿԾ-ն պետք է իրականացնեն տարեկան կտրվածքով: Հավատարմագրումը բազմազան փուլերից է բաղկացած, որոնցից մեկը ինքնավերլուծությունն է: Բուհն իրականացնում է արտաքին գնահատում՝ գնահատելու համար իր ռազմավարության իրականացման արդյունավետությունը, ինչպես նաև վեր հանելու խնդիրներն ու բարելավման կարիք ունեցող ոլորտները: Ըստ նախանշված չափորոշիչների և չափանիշների, ինքնավերլուծությունն իրականացվում է վերջին 5 տարիների տվյալների հիման վրա (ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ ծրագրային հավատարմագրման պարագայում):

Համալսարանը պետք է փորձի հասկանալ թե.

- ի՞նչ է պլանավորել/ցանկանում է/փորձում է անել չափորոշիչների շրջանակների ներքո,
- իրականում ինչպիսի՞ գործընթացներ են ներդրված համալսարանում,
- ինչպե՞ս է համալսարանը համոզվում, որ գործող կառուցակարգերը արդյունավետ են, ինչպես է գնահատում այդ կառուցակարգերը, հավաքագրված տվյալները, իրականացված վերլուծությունը և վերջնարդյունքների վրա հիմնված հետագա զարգացումները,
- համալսարանում ինչպիսի՞ փոփոխություններ են իրականացվել գործընթացները բարելավելու ուղղությամբ

ՈԱԱԿ-ի որոշումն է ընդունել, թե մերժել ինքնավերլուծությունը՝ ուղղորդվելով հավատարմագրման կանոնակարգի պահանջներով:

Փոխգնահատման հանձնաժողովն այնուհետ ուսումնասիրում է ինքնագնահատման զեկույցը, որպեսզի.

- վեր հանի բուհի/կրթական ծրագրի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, յուրաքանչյուր չափորոշի համար դուրս բերի ապացույցներ, սահմանի ոչ լիարժեք կամ բացակայող փաստաթղթերը, ինչպես նաև ոչ հարիր կամ անկանոն ապացույցները,
- ընդժի հետագա ուսումնասիրման և գնահատման կարիք ունեցող ոլորտները,
- ընդժի իրականացվելիք գործողությունների շրջանակը, ինչպես նաև համապատասխան խնդիրների/հարցադրումների շրջանակը, որոնք պետք է պարզաբանվեն այցելության ժամանակ:

Փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում, փորձագիտական խումբը փորձում է գտնել հետևյալ հարցադրումների պատասխանները, որոնք այնուհետ զետեղվելու են նախնական զեկույցում: Այդ հարցերը ներառում են.

- Արդյո՞ք ինքնավերլուծությունը ապահովում է իրավիճակի խորքային վերլուծություն՝ վեր հանելով հաստատության դասավանդման և ուսումնասիրության ուժեղ և թույլ կողմերը:
- Արդյո՞ք ինքնավերլուծության զեկույցը բավարար հիմքեր ապահովում է վերլուծության համար:
- Արդյո՞ք ինքնավերլուծությունը հիմնվում է համապատասխան չափորոշիչների/բենչմարքերի վրա:
- Արդյո՞ք փաստերը վստահելի աղբյուրներից են սերում:
- Արդյո՞ք ինքնագնահատումը տրամադրում է գործողությունների ցանկ՝ միտված բարելավման կարիք ունեցող ոլորտներին:

Ինքնավերլուծության և այլ փաստաթղթերի ուսումնասիրման գործընթացում փորձագետների խումբն առաջնորդվում է ՊԻՌԻԲ սկզբունքով: Այդուհանդերձ, իրականացվում է այցելություն.

- ստուգելու ինքնագնահատման փաստաթղթի վավերությունը,
- գնահատելու սարքավորումները,
- անձնակազմի և ուսանողների հետ շփումների արդյունքում նոր տեղեկատվություն ստանալու,
- հետևելու ուսումնական գործընթացին,
- վեհանելու փաստաթղթերը,

- ուսումնասիրելու ուսանողների ձեռքբերումների շոշափելի ապացույցները:

Փորձագետների վերջնական զեկույցը բաղկացած է մի քանի բաժիններից: Բացահայտումները փաստեր և տվյալներ են, որոնք դուրս են բերվել ինքնագնահատման զեկույցից, կամ վեր են հանվել այցի ընթացքում: Փաստեր կարող են նաև վեր հանվել կից փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում, ինչը հնարավորություն կընձեռի չափորոշի գնահատման համար: Դիտողությունները հիմնված են վեր հանված փաստերի վրա և ծառայում են եզրակացության հանգնմանը: Դրանք մատնանշում են, թե արդյոք բուհը համապատասխանում է նախանշված չափորոշիչին և պարարտ հող են նախապատրաստում խորհրդատվությունների համար: Այս հատվածում փորձագիտական խումբն առանձնացնում է այն ոլորտները/գործընթացները, ինչպես նաև այն խնդիրները, որոնք բարելավման կարիք ունեն: Եզրակացությունը սահմանում է, թե արդյոք համալսարանը համապատասխանում է առանձին չափորոշիչների պահանջներին, թե՛ ոչ:

Յուրաքանչյուր զեկույց ներառում է *փոխզնահատում* կոչվող մի հատված, որն իրականացված է միջազգային չափորոշիչներին համապատասխան և ներառում է մի շարք դիտարկումներ և խորհրդատվություններ՝ կապված համալսարանի՝ ԲԿԵՏ ինտեգրվելու հետ: Նախ և առաջ փորձագիտական խումբը մատնանշում է համալսարանի վերաբերյալ մի քանի ընդհանուր դիտարկումներ, այնուհետ առաջ է քաշում մի շարք խորհրդատվություններ, որոնք կարող են համալսարանին օգնել շարժվելու ԲԿԵՏ ինտեգրվելու ուղղությամբ: Այս խորհրդատվությունների մեծամասնությունը խրախուսում է համալսարաններին շարունակել իրկանացնել այն աշխատանքը, որն արդեն իրականացվել է: Հիմնականում փորձագիտական խմբի խորհրդատվությունները վերաբերում են այն խնդիրներին, որոնք ի հայտ են գալիս Բոլոնիայի գործընթացին համապատասխան փոփոխությունների ներդրման ճանապարհին: Հիմնականում վերոգրյալ փոփոխությունները վերաբերում են.

- արտաքին շահակիցների հետ առավել արդյունավետ հարաբերությունների հաստատմանը,
- կրթական եզրույթի հետագա մոդերնիզացմանը,
- հետազոտական աշխատանքների ծավալի և որակի բարելավման կայուն ջանքերի գործադրմանը,

- միջազգայնացման ոլորտում հետագա ներդրմանը¹:

Վերջնական զեկույցի ներկայացումից հետո, համալսարանը ձեռնամուխ է լինում խորհրդատվությունների վրա հիմնված հաջորդող գործողությունների ծրագրի կազմմանը: Այս ծրագիրը գնահատվում է փորձագիտական խմբի կողմից և ուղարկվում է Հավատարմագրման Հանձնաժողով: Պայմանական հավատարմագրման պարագայում, համալսարանը հաջորդող գործողությունների ծրագիր է ներկայացնում 6 ամիսը մեկ անգամ, իսկ ոչ-պայմանականի պարագայում՝ 2 տարին մեկ²:

¹<http://www.anqa.am/en/Portals/0/ANQA%20Accreditation%20Manual.pdf>

²<http://www.anqa.am/en/Portals/0/STATUTE%20ON%20STATE%20ACCREDITATION.pdf>.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ԲԿՎ

Ներկայացված՝ ԲԿ ՈԱԳ կողմից, ՄԹ

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- ՈԱԱ նկարագրած համակարգերից որո՞նք եք ամենահետաքրքիրը համարում և որոնց շրջանում եք ամենաշատ մարտահրավերներ տեսնում: Պարզաբանե՛ք:
- Ինչպե՞ս է ներկայացված մեթոդանաբությունը համեմատվում Ձեր երկրում կիրառվող մեթոդաբանությանը: ՈԱԳ մեթոդաբանությունը կարո՞ղ է հետագայում ավելի զարգացվել: Ո՞ր գործընթացներն են նպատակահարմար պահպանել Ձեր իսկ համակարգում:
- Փոխգնահատման գործընթացների ինչպիսի՞ փորձ ունեք: Ինչպե՞ս է այն համեմատվում ներոգրյալ համակարգի հետ:

Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունը (ՈԱԳ) իրականացնում է վերանայման գործընթացները՝ առաջնորդվելով ՄԹ ԲԿ Որակի կոդեքսով³: Սույն փաստաթուղթը հիմնաքարային է ՄԹ ԲԿ բոլոր մատակարարների համար, քանզի այն հստակ նշում է, թե ԲԿ մատակարարներն ինչ պետք է անեն, ինչ կարող են ակնկալել միմյանցից, և ինչ կարող է հասարակությունն ակնկալել վերջիններիցս: Որակի Կոդեքսը վերաբերում է ՄԹ բոլոր 4 երկրներին և ՄԹ ԲԿ արտերկրում մատակարարող բոլոր կառույցներին: Այն պաշտպանում է բոլոր ուսանողների շահերն անկախ այն հանգամանքից, թե նրանք առկա, թե հեռակա համակարգերում են ուսանում, բակալավրի, թե մագիստրատուրայի, կամ ասպիրանտուրայի ուսանողներ են:

³ More information on the Quality Code is available here:
www.gaa.ac.uk/assuring-standards-and-quality/the-quality-code

Վերանայման ամենավերջին մեթոդը, որով աշխատում է ՈԱԳ, կոչվում է Բարձրագույն կրթության վերանայում (ԲԿՎ): Այն մի շարք փուլեր է ներառում, որոնք մանրամասն ներկայացված են ԲԿՎ ձեռնարկում:⁴ Դրանք ներառում են.

- ինքնագնահատման փաստաթղթի ներկայացում՝ համապատասխան ապացույցներով ուղեկցված,
- փաստաթղթային վերլուծություն, որն իրականացվում է վերանայման թիմի կողմից՝ բաղկացած ինչպես անձնակազմից, այնպես էլ ուսանողներից,
- այց,
- բացահայտումներ ներառող զեկույցի կազմում և հրապարակում,
- զեկույցի վրա հիմնված գործողությունների ծրագրի մշակում (շաբաթների քանակի համար, տե՛ս ժամանակացույցը):

-16	• Preparatory meeting
-12	• Document upload; desk-based analysis begins
-9	• Request for additional evidence
-6	• Provider uploads additional evidence
-4	• First team meeting
0	• Review visit
+2	• Key findings letter
+6	• Draft report
+9	• Provider comments on draft report
+12	• Report published
+22	• Provider publishes action plan

Գնահատման 4 ոլորտ կա, որոնց ԲԿ մատակարարները պետք է համապատասխանեն.

- կրթական չափորոշիչների պահպանում,
- կրթական հնարավորությունների ապահովում,
- տեղեկատվության ապահովում,
- ուսանողների կրթական հնարավորությունների որակի խթանում:

⁴ More information on Higher Education Review is available here: www.gaa.ac.uk/en/Publications/Documents/HER-handbook-14.pdf

Գործողություն՝ Արտաքին պահանջները և գործընկեր հաստատությունների արձագանքը

Թրեյնինգի շրջանակը

Քննարկել ՈԱԱ և ՈՆԱ միջև կապը՝ փորձելով վերհանել այն առավելություններն ու մարտահրավերները, որ ՈԱԱ պահանջները ներկայացնում են ՈՆԱ գործողություններին: Որոշել, թե ՈԱԱ ինչպես կարող է առավել արդյունավետ աջակցել ՈՆԱ:

Խմբային աշխատանք

Մասնակիցներն աշխատում են փոքր խմբերում (3-4), այնուհետ արդյունքները ներկայացվում են բոլոր մասնակիցներին: Յուրաքանչյուր խումբ զեկուցող է առաջադրում:

Առաջադրանք 1

Բուհերի և ՈԱ գործակալությունների/կազմակերպությունների դիտանկյունից երեք խոշոր առավելություն և երեք մարտահրավեր սահմանեք, որ որակի արտաքին ապահովումն ունի որակի ներքին ապահովման վրա: Դրանք ամրագրե՛ք ներոգրյալ աղյուսակում: Ստացված ցանկը համեմատե՛ք ՏԵՄՊՈՒՄ ծրագրի գործընկերների կազմած ցանկի հետ (տե՛ս հավելված, էջ **page 87**): Արդոք ՏԵՄՊՈՒՄ ծրագրի գործընկերներն առանձնացրե՞լ են այնպիսի հավելյալ առավելություններ/մարտահրավերներ, որոնց շուրջ Դուք չեիք խորհել:

Առավելություններ	Մարտահրավերներ

Առաջադրանք 2

Վերլուծե՛ք վերոգրյալ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ները: Համաձայնության եկե՛ք առ այն, թե որ ոլորտներն են աջակցում բուհերին և որոնց շրջանում են առավել շատ մարտահրավերներ նկատելի:

Աջակցություն	Մարտահրավեր
--------------	-------------

--	--

Առաջադրանք 3

Եթե Դուք ինքներդ կազմելու լինեիք կանոնակարգման շրջանակը՝ գործնական վերոգրյալ օրինակներում զետեղված երեք համակարգերից որո՞նք կպահպանեիք Ձեր ընթացակարգում և որոնցից կազատվեիք:


Պահպանել	Ազատվել

--	--

Առաջադրանք 4

ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների համար երեք խորհրդատվություն ձևակերպեք, որպեսզի ապահովվի ՈՆԱ առավել աջակցող մոտեցում: Ստացված ցանկը համեմատե՛ք ՏԵՄՊՈՒՄ ծրագրի գործընկերների կազմած ցանկի հետ և համապատասխան փոփոխություններ իրականացրեք Ձեր իսկ ցանկում, եթե դրա կարիքը կա:

Խորհրդատվություններ



Հավելյալ նյութեր

ՈԱԵԱ

Եվրոպայի ԲԿ թափանցիկության ապահովումը ՈԱ հասարակական զեկույցների միջոցով

[www.enqa.eu/indirme/papers-and-reports/occasional-papers/Transparency per cent20of per cent20European per cent20higher per cent20education per cent20through per cent20public per cent20quality per cent20assurance per cent20reports per cent20\(EQArep\).pdf](http://www.enqa.eu/indirme/papers-and-reports/occasional-papers/Transparency%20of%20European%20higher%20education%20through%20public%20quality%20assurance%20reports%20(EQArep).pdf)

ՈԱԳ

ԲԿ վերանայման մեթոդները ՄԹ-ում

www.qaa.ac.uk/reviews-and-reports/how-we-review-higher-education

ԿՈԽԱԿ

Հավատարմագրման չափորոշիչները և չափանիշները Վրաստանում

<http://eqe.ge/res/docs/2014120816393520902.pdf>

ԳԼՈՒԽ 3

ԲԿ միջազգայնացումը և անդրսահմանային գործողությունները

Այս հատվածում քննարկվում են միջազգայնացման նպատակները և այն, թե ինչպես են անդրսահմանային ԲԿ գործընթացները տեղավորվում հաստատության կամ երկրի ԲԿ միջազգայնացման ընդհանուր ռազմավարության մեջ: Նպատակն է համոզվել, որ կա գիտակցում առ այն, թե ինչու է միջազգայնացումը կարևոր և որ առկա է համապատասխան պլանավորում նախանշված նպատակներին հասնելու համար:

Սույն հատվածը մեկնարկում է հարցադրմամբ. «Որո՞նք են միջազգայնացման առանցքային բնութագրիչները և անդրսահմանային գործողությունները և ինչպես են սրանք կապվում ՈԱ հետ>>: Այստեղ նաև հարցադրումներ են արվում այս ոլորտների առավելությունների և մարտահրավերների վերաբերյալ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ներից առաջին երկուսը միջազգայնացման համալսարանական մոտեցման օրինակներ են, որոնք մասնավորապես վերաբերում են անդրսահմանային գործողություններին: Երրորդ օրինակը քննարկում է մասնագիտական հավատարմագրման կարևորությունը:

Ներկայիս գլոբալ աշխարհում հույժ կարևոր է, որպեսզի ԲԿ հաստատությունները միջազգայնացման հստակ քաղաքականություն ունենան՝ ներառյալ անդրսահմանային միջոցառումներ՝ մինչ ՈԱ գործընթացների նախաձեռնումը: Այս հատվածում զետեղված բոլոր գործողությունները միտված են միջազգայնացման հիմնական նպատակների քննարկմանը, որոնք տարբեր են տարբեր երկրներում և տարբեր հաստատություններում: Վերոգրյալից զատ, այն հնարավորություն է ընձեռում պլաններ մշակել միջազգայնացման համար, որոնք կարևոր կլինեն մասնակիցների հաստատությունների/կազմակերպությունների համար:

Հարցադրումներ

Մասնակիցները կարող են անհատապես խորհել սույն հարցերի շուրջ, կամ թրեյնինգավարները կարող են սրանք օգտագործել որպես խմբային քննարկումների մեկնարկային հարցադրումներ: Թրեյնինգավարները պարտադրված չեն անդրադարձ կատարել բոլոր հարցադրումներին, փոխարենը, նրանք կարող են ներոգրյալ հարցերից առանձնացնել այնպիսիք, որոնք առավել սկզբունքային են այս կամ այն աշխատանքային խմբի համար:

- 1 Ձեր կարծիքով որո՞նք են միջազգայնացման առանցքային բնութագրիչները: Որո՞նք են առավելությունները և մարտահրավերները:
- 2 Ինչպե՞ս կնկարագրեիք ԲԿ անդրսահմանային գործողությունները: Որո՞նք են առանցքային բնութագրիչները:
- 3 Արդյոք Ձեր հաստատությունը ներգրավվա՞ծ է անդրսահմանային ԲԿ գործողություններում: Եթե այո, ինչպե՞ս է որակը ապահովվում: Նկարագրե՛ք ներքին և արտաքին կառուցակարգերը:
- 4 Ձեր կարծիքով, որո՞նք են անդրսահմանային ԲԿ գործողությունների մարտահրավերները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Միջազգայնացում

Ներկայացված՝ Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանի (ՀՌՀ) կողմից, ՀՀ

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- ՀՌՀ-ի կողմից նկարագրված միջազգայնացման գործընթացներին վերաբերող համակարգերն արդյոք նմա՞ն են Ձեր համատեքստում կիրառվող համակարգերին: Արդյոք դրանք կարո՞ղ են հետագայում բարելավվել: Ի՞նչ է նպատակահարմար պահպանել Ձեր իսկ համակարգում:
- Վերոգրյալ մարտահրավերներից կարո՞ղ եք արդյոք տարանջատել նրանք, որոնք իրական են Ձեր համատեքստում: Կարո՞ղ եք հավելյալ առաջարկություններ ներկայացնել դրանց հաղթահարման ուղղությամբ:
- Ի՞նչ եք մտածում միջազգայնացման ռազմավարությանն ուղղված ներոգրյալ ընդհանրական խորհրդատվությունների վերաբերյալ: Արդյոք կա՞ն այնպիսիք, որոնք կարող եք հավելել՝ Ձեր փորձառությունից ելնելով:

Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանը (ՀՌՀ) Հարավային Կովկասի տարածաշրջանում գործող առաջատար բուհերից է, որը հիմնադրվել է 1997թ. Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության համատեղ համաձայնությամբ: Կրթական գործունեություն իրականացնելու համար ՀՌՀ-ը լիցենզավորում ունի ինչպես ՀՀ, այնպես էլ ՌԴ ԿԳ նախարարություններից: Առանձին ՄԿԾ-ներ իրականացնելու լիցենզավորումը տրամադրվում է ՌԴ ԿԳ-ի կողմից, ուստի բոլոր ծրագրերը իրականացվում են ՌԴ օրենսդրությանը համահունչ: Համաձայն համալսարանների հիմնման միջկառավարական համաձայնագրի, ՀՀ ԿԳ նախարարությունը ավտոմատ կերպով ճանաչում է ՌԴ ԿԳ նախարարության ՄԿԾ-ների լիցենզավորումը: Նման ՄԿԾ-ների շրջանում ուսանողները կրկնակի դիպլոմ են ստանում՝ վավերացված **/անգլերեն տարբերակում գրված է *accredited*/** ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի ԿԳՆերի կողմից:

Ուսանողների առաջին ընդունելությունը տեղի է ունեցել 1999թ. փետրվարին Իրավագիտության, Հասարակական և մունիցիպալ կառավարման և Լրագրության շրջանակներում: Այս ժամանակից ի վեր, ՀՌՀ-ը շարունակաբար ընդլայնվել է՝ ներգրավելով նորանոր ոլորտներ: 2005թ. Հայաստանն անդամակցեց Բոլոնիայի գործընթացին: Ներկայումս ՀՌՀ-ում գործում են 5 հաստատություն 31 բաժիններով՝ առաջարկելով տարատեսակ ծրագրեր ավելի քան 70 ոլորտներում: ՀՌՀ-ն իրականացնում է նախաբուհական կրթություն 18 մասնագիտություններով, 4 մագիստրոսական ծրագրեր (շրջանավարտները ստանում են որակավորված մասնագետի դիպլոմ, ուսումնառության տևողությունը 5-6 տարի), 42 մագիստրոսական և 50 ասպիրանտական ծրագիր:

Առկա ուսուցմամբ ծրագրերին զուգահեռ, 2013թ. ի վեր ՀՌՀ-ն իրականացնում է հեռակա ուսուցում 9 նախաբուհական և 5 մագիստրոսական ծրագրերով:

Համալսարանն ունի 5 ինստիտուտ.

- Բիզնեսի և Էկոնոմիկայի,
- Իրավագիտության և քաղաքականության,
- Հումանիտար գիտությունների,
- Մաթեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների,
- Մեդիայի, գովազդի և կինոյի:

Միջազգայնացման գործընթացն իրականացվում է ապակենտրոնացված: Ընդհանուր առմամբ այս գործընթացը համակարգվում է Միջազգային համագործակցության բաժնի կողմից⁵, չնայած միջազգային համագործակցության մենեջերներ նշանակվում են նաև ՀՌՀ-ի ինստիտուտներում, ինչպես նաև Հետազոտության և նորարարության բաժանմունքում: Վերոգրյալից գատ, քանզի ներկայումս ՀՌՀ-ն մասնակցում է ավելի քան 10 ՏԵՄՊՈՒՄ ծրագրի, ռեկտորի հատուկ հրամանով արտաքին և ներքին հարցերով զբաղվող ընդհանուր պրոֆիլի հատուկ համակարգողներ են նշանակվել՝ ՀՌՀ ՏԵՄՊՈՒՄ ծրագրերի ներդրման և կառավարման համընդհանուր մոտեցման ապահովման նպատակով: Ավելին, յուրաքանչյուր միջազգային ծրագիր (TEMPUS, Erasmus Mundus, Erasmus+, Visegrad Foundation, EaP grants, DAAD) ունի իր տեղական համակարգողն ու աշխատանքային խումբը:

Մինչ 2011թ. Միջազգային համագործակցության բաժնի ստեղծումը, նմանատիպ բաժանմունք չկար, որը կզբաղվեր միջազգայնացման ռազմավարության, ինչպես նաև

⁵ More information available here: <http://international.rau.am/eng>

ՀՌՀ-ում իրականացվող միջազգային ծրագրերի վերահսկման աշխատանքներով: Նման կառույցի ստեղծումը բավական արդյունավետ էր, քանզի ընդամենը 4 տարիների ընթացքում միջազգային համագործակցությունների և ծրագրերի թվաքանակը (ներառյալ միջազգային շարժունությունը) կտրուկ աճել է:

Մինչև 2011թ. ՀՌՀ-ն 97 գործընկեր հաստատություն ուներ աշխարհի 14 երկրներում, չնայած որ ՌԴ-ն շարունակում էր մնալ հիմնական գործընկեր երկիր: ՀՌՀ-ն միայն 9 գործընկեր ուներ ԵՄ տարածքում: ՀՌՀ-ն ներգրավված էր միայն 1 ՏԵՄՊՈՒՄ և 1 ՄԶՄՆԳ ծրագրում: ՀՌՀ-ն մագիստրոսական մի ծրագիր էր իրականացնում Շվեյցարիայի բիզնես դպրոցի⁶ հետ համատեղ՝ ՀՀ տարածքում լինելով նման մագիստրոսական ծրագիր իրականացնող առաջին բուհը:

2014թ. դեկտեմբերի դրությամբ, ՀՌՀ-ն համագործակցում է 196 գործընկերների հետ աշխարհի 41 երկրներից, որոնցից 64-ը ԵՄ 24 երկրներից են⁷: Ավելին, ՀՌՀ-ն մասնակցում է 10 ՏԵՄՊՈՒՄ ծրագրի այլ ծրագրերի հետ մեկտեղ (Erasmus Mundus, FP7, DAAD, Twinning, USAID, Visegrad Foundation EaP)⁸: Ինչպես ներգնա, այնպես էլ արտագնա ուսանողների և անձնակազմի հոսունությունը զգալի կերպով մեծացել է: ՀՌՀ-ն արդեն իսկ համատեղ մագիստրոսական երկրորդ ծրագիրն է սկսել Գլասգոի համալսարանի հետ համատեղ⁹:

Ծրագրերի և ծառայությունների միջազգայնացման գործընթացում բուհերը հիմնականում հանդիպում են հետևյալ ռիսկերին և խոչընդոտներին.

Միջազգայնացման ռազմավարության բացակայություն

Հուլիս կարևոր է ունենալ միջազգայնացման ռազմավարություն, որը հաստատության ընդհանուր ռազմավարության մաս կկազմի: Սա կարևոր հանգամանք է ոչ միայն այն պատճառով, որ պարզաբանում է միջազգայնացման նպատակները, բայց նաև այն պատճառով, որ հաստատության բարձր լիազոր մարմինները որդեգրում են այն և ուստի միջազգայնացման ռազմավարության իրականացումը դառնում է հաստատության նպատակ:

⁶ More information available here: <http://bs.rau.am/?cid=13>

⁷ RAU partners: <http://international.rau.am/eng/partners>

⁸ RAU international partners: <http://international.rau.am/eng/international-projects>

⁹ RAU Joint Degree Programmes: <http://international.rau.am/eng/study-abroad/joint-programmes>

Ղեկավար անձնակազմի նվիրվածության պակաս

Հաճախ ղեկավար անձնակազմը, որը հիմնականում ուսումնական ծառայություններ է մատուցել տեղական մակարդակում, դժկամությամբ է համաձայնում համապատասխան միջոցներ (ֆինանսական և մարդկային) հատկացնել միջազգայնացման ռազմավարության մշակման և ներդրման համար: Ըստ այդմ, նրանք կրթության միջազգայնացման խթանման կարիքը չեն տեսնում:

Միջազգայնացման գործընթացների թույլ կառավարում

Միջազգային գործընթացների կառավարման համակարգի բացակայությունը կարող է հանգեցնել որոշակի գործընթացների անարդյունավետության: Այս գործընթացների կառավարումը կարող է լինել ինչպես կենտրոնացված այնպես էլ ապակենտրոնացված, բայց անպայման պետք է հարմարեցված լինի բուհի կարիքներին և ռեսուրսներին:

Ուսումնական և վարչական անձնակազմի նվիրվածության և մոտիվացիայի պակաս

Կրթության միջազգայնացման մոտեցումները փորձարկելիս, ընդունված է հաստատությունում արդեն իսկ աշխատող ուսումնական և վարչական անձնակազմին որոշակի առաջադրանքներ դրելեզացնել՝ կապված միջազգայնացման գործընթացների հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ պետական բուհերի մեծամասնությունում ուսումնական և վարչական անձնակազմը գերծանրաբեռնված է և դրա դիմաց բավական ցածր է վարձատրվում (ի համեմատություն շուկայական միջին աշխատավարձին), անձնակազմը կարող է պատասխանատվությունների նոր շրջանակ, կամ հավելյալ աշխատանք ստանձնելիս նվիրվածության և մոտիվացիայի պակաս ունենալ:

Փորձի պակաս

Անգամ նվիրում և մոտիվացիա ունեցող անձնակազմի պարագայում, մեկ այլ խոչընդոտ է հանդիսանում անձնակազմի փորձի պակասը ծրագրերի առաջարկներ գրելու, ծրագրերի կառավարման, միջմշակութային հաղորդակցության և այլնի ուղղությամբ: Միևնույն ժամանակ, ուսանողների մեծամասնությունը միջազգային ծրագրերում մասնակցության, կամ դիմումներ, փաստաթղթեր ներկայացնելու փորձառություն չունեն:

Լեզվական խոչընդոտներ

Ավելին, ինչպես անձնակազմի, այնպես էլ ուսանողների մոտ նկատելի է լեզվական գիտելիքների պակաս: Չնայած նոր սերնդի աշխատակիցների մեծամասնությունը օտար լեզվի տիրապետման բավարար մակարդակ ունեն, այդուհանդերձ, միջին տարիքի աշխատակիցների մոտ այն բավարար մակարդակ չունի, ինչը հավելյալ խոչընդոտներ է ստեղծում միջազգային ծրագրերի նախաձեռնման և կիրառման գործընթացներում՝ անգամ եթե տվյալ անձնակազմն ունի տվյալ գործընթացի իրականացման հնարավորություններ և հմտություններ:

Մշակութային տարբերություններ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգայնացման ցանկացած գործընթաց ներառում է տարբեր ազգությունների և տարբեր մշակույթների ներկայացուցիչների մեծամասշտապ շփում, ինչպես անձնական, այնպես էլ բիզնես հաղորդակցության ընթացքում ի հայտ եկած մշակութային տարբերությունները կարող են որոշակի խորչընդոտների տեղիք տալ:

Շարժունության ծրագրերի ցածր հոսքը

Թե՛ անձնակազմի և թե՛ ուսանողների շարժունությունը միջազգային ծրագրերի կարևորագույն մասն է կազմում: Այդուհանդերձ, հաշվի առնելով ԵՄ, ՌԴ և այլ երկրներ ճանապարհորդելու և կեցություն հաստատելու ծախսերը, շատ քիչ հայեր կարող են իրենց հաշվին նման ծրագրերում մասնակցություն ունենալ: Ավելին, համալսարանները հիմնականում շարժունությունը խթանող հատուկ ֆոնդեր չեն հատկացնում: Վերոգրյալից զատ, սովորույթները, մշակութային գծերը և ընտանիքը ևս կարող են միջազգային ծրագրերին մասնակցության նվազեցման պատճառ հանդիսանալ:

Վերոգրյալը հաշվի առելով՝ ստորև ներկայացնում ենք հետևյալ խորհրդատվությունը.

Միջազգայնացման ռազմավարության որդեգրում

Համալսարանի ղեկավարությանը խրախուսեք մշակել և որդեգրել միջազգայնացման ռազմավարություն՝ ներառելով ոչ միայն ոլորտի փորձագետներին, այլ նաև ուսումնական և վարչական անձնակազմին նրանց ներգրավվելով միջազգայնացման ռազմավարության ներդրման փուլում:

Առաջադրանքները ճիշտ դելեգացում

Մշակեք կառավարման արդյունավետ համակարգ՝ հարմարեցված հաստատության պահանջներին և ռեսուրսներին: Փոքր հաստատությունների, ինչպես նաև սահմանափակ ֆինանսական միջոցներ ունեցող հաստատությունների պարագայում, խորհուրդ է տրվում կիրառել կառավարման ապակենտրոնացված մոտեցումը՝ առաջադրանքները բաշխելով համապատասխան ֆակուլտետների և բաժինների միջև:

Անձնակազմի պատրաստման և վերապատրաստման ռազմավարության և գործիքակազմի մշակում

Անձնակազմի շրջանում փորձառության պակասը հաղթահարելու և մոտիվացիան բարձրացնելու նկատառումներով, խորհուրդ է տրվում մշակել համապատասխան ռազմավարություն և գործիքակազմ վերջիններիս պատրաստման և վերապատրաստման համար: Շատ կարևոր է խթանել ուսումնական անձնակազմի վարչարարական և կառավարման հմտությունները, որպեսզի նրանք ի վիճակի լինեն նախաձեռնել և մասնակցել միջազգային նախագծերին:

Անձնակազմի խթանման գործիքակազմի ստեղծում

Անձնակազմի խթանման և մոտիվացման համապատասխան գործիքակազմ ևս պետք է ստեղծվի, որը չպետք է սահմանափակվի միայն ֆինանսական խրախուսմամբ, այլ նաև պետք է հնարավորություն ընձեռի մասնակցել միջազգային շարժունությանը, կամ, օրինակ, անձնակազմի դասակարգման համակարգում հատուկ միավորներ հատկացնի և այլն:

Անձնակազմի լեզվական հմտությունները զարգացնելու համար համապատասխան գործիքակազմի ստեղծում

Համապատասխան մոտեցում մշակե՛ք անձնակազմի շրջանում լեզվական հմտությունների խթանման համար, ինչպես օրինակ լեզվական կուրսերի կազմակերպում կամ որոշակի ժամանակահատվածում լեզվական իմացության համապատասխան փաստաթուղթ (ինչպես օրինակ լեզվական կենտրոնի կողմից տրված վկայական կամ թեստի արդյունքներ):

Միջազգային ծառայություններ մատուցեք

Ստեղծե՛ք հասարակական ենթակառուցվածք կամ նշանակե՛ք հատուկ անձնակազմ, որը աջակցություն կցուցաբերի ներգնա և արտագնա ուսանողներին և անձնակազմին միջազգային նախագծերին դիմելու և մասնակցելու գործընթացներում՝ ներառյալ շարժունության ծրագրերը: Նման ծառայությունները պետք է ներառեն ոչ միայն ուսումնական և կազմակերպչական ծառայություններ, այլ նաև աջակցություն վիզաների և կեցության վայր գտնելու գործընթացներում:

Միջազգային գործընկերների տվյալների բազայի ստեղծում

Միջազգային գործընկերների վերաբերյալ համապատասխան բազա ստեղծեք, որտեղ զետեղված կլինի համապարփակ տեղեկատվություն և անհրաժեշտ մանրամասներ իրականացվող գործընթացների վերաբերյալ: Տվյալների բազան պետք է հասանելի լինի բոլոր ֆակուլտետներին, բաժանմունքներին և անձնակազմին՝ տեղեկատվությունը թափանցիկ դարձնելու համար: Տվյալների բազան պետք է կանոնավոր կերպով թարմացվի:

Կայքերի և էլ. հարթակների ստեղծում

Մշակեք և պարբերաբար թարմացրեք Ձեր կայքի անգլերեն տարբերակը, որը հարմարեցված կլինի օտարերկրյա ուսանողների և միջազգային գործընկերների հետաքրքրություններին և որը հնարավորություն կընձեռի անխոչընդոտ մուտք գործել դեպի անհրաժեշտ տեղեկատվություն: Շարժունության բարձր մակարդակի պարագայում ստեղծեք հատուկ էլ. հարթակ կամ ներքին ցանց՝ շարժունության ծրագրերը համակարգված ձևով կառավարելու համար:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Միջազգայնացում և անդրսահմանային կրթություն

Ներկայացված՝ **Կաուկասուս համալսարանի (ԿՀ) կողմից, Վրաստան**

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- Ինչքանո՞վ են ստորև նկարագրված մոտեցումը և միջազգայնացման գործընթացները համեմատելի ձեր համատեքստում կիրառվածներին:
- Արդյոք դրանք կարո՞ղ են հետագայում բարելավվել: Ի՞նչ է նպատակահարմար պահպանել Ձեր իսկ համակարգում:
- Արդյոք գործընկեր հարաբերությունների հաստատման համար ներկայացված պահանջները նմա՞ն են Ձեր համատեքստում առկա պահանջներին: Որո՞նք են տարբերությունները: Որո՞նք են նմանությունները:

Կաուկասուս համալսարանը (ԿՀ) միջազգային համագործակցության երկար պատմություն ունի: Այն կրկնակի դիպլոմ, համատեղ և փոխանակման ծրագրեր է իրականացնում հետևյալ մասնագիտություններով.

- Բիզնես կառավարում,
- Իրավագիտություն,
- Մեդիա,
- Կառավարում,
- Տուրիզմ,
- Տնտեսագիտություն և առողջապահություն,
- Տեղեկատվական տեխնոլոգիա,
- Հումանիտար գիտություններ:

Համալսարանի 2014-2020 ռազմավարական ծրագիրը ևս ի ցույց է դնում վերջինիս միջազգայնացման նկրտումները: Համալսարանի ՄԿԾ-ների մեծամասնությունը մշակված են և հաստատված վրացերենով և անգլերենով: Անգլերենի իմացությունը անհրաժեշտ է ուսուցման բոլոր մակարդակներում: ԿՀ-ը անգլերենի ինտենսիվ

դասընթացներ է իրականացնում բակալավրի բոլոր, ինչպես նաև մագիստրոսական որոշ ծրագրերում:

2005թ. ի վեր, ԿՀ-ը գործընկերային հարաբերություններ է հաստատել ավելի քան 96 համալսարանների հետ ԱՄՆ-ում, Կանադայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, ՄԹ-ում, Ավստրիայում, Նիդեռլանդներում, Հոլանդիայում, Հունաստանում, Ճապոնիայում, Հարավային Կորեայում և Լիտվայում: Համալսարանը ներդրել է 5 համատեղ ծրագրեր բակալավրում և մագիստրատուրայում: Վերոգրյալներն իրականացվել են Ավստրիայի (Upper Austria University), Լիսաբոնի (Lisbon University Institute (Պորտուգալիա)), Գրենոբլի (Graduate School of Business (Ֆրանսիա)), Թալինի (Tallinn University of Technology (Էստոնիա)) համալսարանների հետ համատեղ: Բոլոր ծրագրերը հաջողակ ուսանողներին կրկնակի դիպլոմ են շնորհում:

Վրաստանի համալսարանները մի քանի պարտադիր քայլեր պետք է իրականացնեն համագործակցային հարաբերություններ հաստատելու համար: ԿԳ նախարարությունը տեղեկատվություն է պահանջում բոլոր այն ծրագրերի վերաբերյալ, որոնք պետք է օտար լեզվով իրականացվեն և որոնք համալսարանը պլանավորում է ներմուծել, որից հետո ԿԳՆ պետք է թույլատվության նամակ ուղարկի: Այնուհետև, համալսարանը պետք է պատասխան նամակ ուղարկի նախարարություն՝ ծրագրի վերաբերյալ հետագա տեղեկատվություն տրամադրելով և կցելով գործընկեր համալսարանների միջև կնքված փոխըմբռնման համաձայնագրի օրինակը: Կրկնակի դիպլոմ շնորհող և փոխանակման ծրագրերը պետք է նախօրոք գրանցվեն, այնուհետ ծրագրային հավատարմագրում ստանան:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ մասնագիտական հավատարմագրում

Ներկայացված՝ Մենեջմենթի զարգացման եվրոպական հիմնադրամի (ՄՁԵՀ), կողմից, Բելգիա

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- Մասնագիտական հավատարմագրման ի՞նչ փորձ ունեք: Արդյոք Ձեր հաստատությունը/կազմակերպությունը ներգրավվա՞ծ է, ճանաչու՞մ կամ խրախուսու՞մ է կամավոր հավատարմագրման նման գործընթացները:
- Ձեր կարծիքով արդյոք առկա՞ են այնպիսի ռիսկեր, որոնք կասկածի տակ են դնում ստորև նկարագրված ԲԿ ՄԿԾ-ների միջազգային մասնագիտական հավատարմագրման առավելությունները:
- Ներոգրյալներից որո՞նք են ԲԿ միջազգայնացման բնութագրիչները: Արդյոք դրանց շարքում կա՞ն այնպիսիք, որոնք առկա են նաև Ձեր համատեքստում: Որո՞նք են տարբերությունները: Որո՞նք են նմանությունները:

Մենեջմենթի զարգացման եվրոպական հիմնադրամը Որակի ապահովման եվրոպական համակարգը (ՈԱԵՀ) ստեղծել է 1997թ. իր անդամների համար, որոնք ՈԱ համակարգի և կրթության կառավարման միջազգային հավատարմագրման կարիք ունեն:

Այդ ժամանակահատվածում Եվրոպական բիզնես դպրոցների շրջանում այնպիսի մտավախություն կար, որ գոյություն ունեցող հավատարմագրման երկու խոշոր սխեմաները (ԲԳԴԱԱ և ԲԿՄԱ) բավարար կերպով անդրադարձ չէին կատարում եվրոպական բուհերի բազմազանությանը, մինևույն ժամանակ հավատարմագրման գոյություն ունեցող ազգային համակարգերը բավարար չափով միջազգային չէին:

Ներկայումս ՈԱԵՀ-ը դիտարկվում է որպես միջազգային ՈԱ և հավատարմագրման գոյություն ունեցող առաջատար երեք կառուցակարգերից մեկը: Այն հավատարմագրում է իրականացրել 144 հաստատությունների շրջանում, աշխարհի 39 երկրներում: Չնայած իր ստեղծման տահին ՈԱԵՀ-ը համարվում էր եվրոպական, ներկայումս այն իրավամբ վերածվել է գլոբալ մի կառույցի՝ ներկայումս այն արագ զարգացում ապրելով Ամերիկայում և Ասիայում:

ՈԱԵՀ-ի ամենակարևոր բնութագրիչն այն է, որ ՈԱ այս համակարգը լիովին ճանաչում և խթանում է բազմազանությունը: Ի հակադրություն հավատարմագրման այն կառույցների, որոնք նախապես մշակվել և ներդրվել են մեկ երկրում, այնուհետ ադապտացվել համաշխարհային համատեքստում, ՈԱԵՀ-ը ի սկզբանե ստեղծվել էր եվրոպական ողջ իրականությունը պարփակելու նկատառումով:

ՈԱԵՀ-ը ինստիտուցիոնալ գնահատում է: Գնահատվում է ամբողջ կառույցը՝ ներառյալ բոլոր ՄԿԾ-ները, հետազոտությունը և այլ գործընթացները: Սա ներառում է ինչպես որակավորում շնորհող, այնպես էլ մնացած բոլոր ծրագրերը, ինչպես նաև կառավարիչների համար կազմակերպված դասընթացները:

ՈԱԵՀ-ը սերտ կապակցված է ինչպես կրթական, այնպես էլ կորպորատիվ կարիքների հետ: Բոլոր մակարդակներում այն ներգրավում է և՛ կրթական և՛ կորպորատիվ շահեկիցներ, հավասարակշռում է կրթական և մասնագիտական հմտությունները՝ շեշտադրելով անհատի զարգացումը: Կորպորատիվ կապերը հավատարմագրման հիմնաքարային չափորոշիչներն են:

ՈԱԵՀ-ը կարելի է համարել առաքելամետ (առաքելությանը միտված) հավատարմագրում: Այն ուսումնասիրում է հաստատության ռազմավարությունը և կառավարումը և փորձառու դեկաններին ներգրավվում է փոխգնահատման խմբերում:

ՈԱԵՀ-ն միջազգայնացումը հաստատության առանցքային կետերից մեկն է համարում: Հավատարմագրման գործընթացն իրականացվում է միջազգային փորձառու թիմի կողմից: Այն նաև ուշադրության կենտրոնում է պահում բազմազանությունը՝ հատկապես ուս. պլանի և բովանդակության, ինչպես նաև ֆակուլտետի կազմի դիտանկյուններից:

Գործողություն. Միջազգայնացումը և անդրսահմանային կրթությունը Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում

Թրեյնինգի շրջանակը

Քննարկել բարձրագույն կրթության միջազգայնացման գործընթացները: Ընդհանուր հայտարարի գալ միջազգայնացման նպատակների, ինչպես նաև այն գործընթացների շուրջ, որոնք անհրաժեշտ են միջազգայնացման հաջող ընթացքի համար՝ ներառյալ անդրսահմանային գործընթացների դերակատարությունը:

Խմբային աշխատանք

Մասնակիցներն աշխատում են փոքր խմբերում (3-4), այնուհետ արդյունքները ներկայացվում են բոլոր մասնակիցներին: Յուրաքանչյուր խումբ զեկուցող է առաջադրում:

Առաջադրանք 1

Ներոգրյալ ցանկից ընտրե՛ք միջազգայնացման նպատակներն ըստ կարևորության (ըստ անհրաժեշտության ավելացրե՛ք այլ նպատակներ ևս).

Ըստ կարևորության	Միջազգայնացման նպատակների ցանկ
	գրավել տեղական և միջազգային ուսանողներ. բուհի դիրքավորումը ազգային և միջազգային համատեքստում
	խթանել ինստիտուցիոնալ պրոֆիլը
	խթանել բազմալեզվությունը (հասարակական, քաղաքացիական, միջմշակութային հմտություններ, աշխատունակություն)
	շրջանավարտների մեջ զարգացնել անհրաժեշտ մրցակցային հմտություն
	նոր հնարավորություններ ընձեռել աշխատաշուկա մուտք գործելու ուղղությամբ, օր.՝ խթանել աշխատանքի ընդունման հնարավորությունները
	ֆինանս հայթայթել
	կառավարական համաձայնագրերի միջոցով այլ երկրների հետ

	զարգացնել տնտեսական և մշակութային համագործակցություն
	խթանել ուսումնական ապագա հետազոտությունը և մասնագիտական ցանցի հաստատումը,
	զարգացնել միջմշակութային փոքրձաքնությունը
	զարգացնել բարձրագույն կրթության եվրոպական/միջազգային առավել լայն ընդգրկվածություն:

Առաջադրանք 2

Վերոգրյալ 5 առաջնահերթ նպատակներից ընտրե՛ք երկուսը և սահմանե՛ք այն ոլորտները, որոնք առավել կարիք ունեն ներդրման և գործընթացների՝ նախանշված նպատակներին հասնելու համար (մի գուցե Դուք արդեն ներդրում եք ունեցել հիշյալ ոլորտներում, կամ պլանավորում եք իրականացնել), ինչպես նաև նախանշե՛ք, թե ինչպիսի ներդրումներ կլինեն ամենահամապատասխանը: Այդ ոլորտները կարող են վերաբերել անդրսահմանային գործընթացներին:

Միջազգայնացման նպատակ	Ներդրման ոլորտներ	Անհրաժեշտ գործընթացներ

--	--	--

Առաջադրանք 3

Քննարկելով գործնական վերոգրյալ օրինակները՝ որոշե՛ք, թե որ առանցքային կետերը կպահպանեիք միջազգայնացմանն ուղղված հետագա գործողությունների պլանավորման և զարգացման համար:

Առանցքային կետեր

Հավելյալ աղբյուրներ

Միջազգային բարձրագույն կրթության կենտրոն

Անդրսահմանային բարձրագույն կրթություն

www.bc.edu/research/cihe/cbhe/

Անսահման բարձրագույն կրթության դիտարան (ԱԲԿԴ)

Միջազգային մասնաճյուղային կամպուսներ, տվյալներ և զարգացումներ

www.obhe.ac.uk/documents/view_details?id=894

Բրիտանական խորհուրդ և Ակադեմիական փոխանակման գերմանական ծառայություն

SUԿ ազդեցություններն ընդունող երկրներում

www.britishcouncil.org/sites/britishcouncil.uk2/files/tne_study_final_web.pdf

Բրիտանական խորհուրդ

Գալիք երևույթների ձևը՝ SUԿ էվոլյուցիան, տվյալներ, սահմանումներ,

հնարավորություններ և ազդեցությունների վերլուծություն

www.britishcouncil.org/sites/britishcouncil.uk2/files/the_shape_of_things_to_come_2.pdf

Գլոբալ բարձրագույն կրթություն

ԱՄՆ մասնաճյուղային կամպուսներն արտերկրում. Նպատակաուղղված

հետազոտությունների արդյունքները

<http://globalhighered.wordpress.com/2010/05/02/u-s-branch-campuses-abroad-results-of-a-targeted-survey/>

Բարձրագույն կրթության ակադեմիա

Խթանելով ուսանողների ուսումնառությունը և դասավանդողների զարգացումը SU

կրթության ոլորտում

<https://www.heacademy.ac.uk/enhancing-student-learning-and-teacher-development-transnational-education>

Գլուխ 4

Տրանսազգային կրթության և որակի ապահովման կառուցակարգեր

ՏԱԿ և անդրսահմանային բարձրագույն կրթության սահմանումները մի շարք հեղինակային աշխատություններում.

ՏԱԿ սահմանումն ըստ ՅՈՒՆԵՍԿՕ և ԵԽ, 2001


<<Բարձրագույն կրթության բոլոր տեսակի ուսումնական ծրագրերը, դասընթացները, կամ կրթական ծառայությունները (ներառյալ հեռավար ուսուցումը), որտեղ ուսանողները տեղակայված են մի երկրում, որը որակավորում շնորհող երկիրը չէ: Սույն ծրագրերը կարող են պետության կրթական համակարգի մաս կազմել (տարբեր ուղարկող երկրից), ինչպես նաև կարող են անկախ գործունեություն ծավալել՝ մաս չկազմելով որևէ ազգային համակարգի>>:

Անդրսահմանային բարձրագույն կրթության սահմանումը ըստ ՅՈՒՆԵՍԿՕ/ ՏՀԶԿ ուղեցույցների, 2005

<<Անդրսահմանային բարձրագույն կրթությունը ներառում է այն ԲԿ-ն, երբ դասախոսը, ուսանողը, ծրագիրը, հաստատությունը/մատակարարը կամ դասընթացի նյութերը հատում են ազգային իրավական սահմանները>>

ՏԱԿ սահմանումն ըստ ՈԱԳ

<<Կրթական և ուսումնական հնարավորություններ, որոնք մատակարարվում են մեկ երկրում: ՄԹ ԲԿ Որակի կողմից համատեքստում մասնավորապես վերաբերում է ՄԹ որակավորում շնորհող մարմնի բարձրագույն կրթության մատակարարմանը ՄԹ սահմաններից դուրս երկրում՝ հաճախ այնպիսի կազմակերպության կողմից, որը չի հանդիսանում որակավորում շնորհող կազմակերպությունը>>:



Սույն հատվածը վերաբերում է ՌԱ ներքին և արտաքին համակարգերին՝ ուղղված մասնավորապես ՏԱ կրթության ապահովմանը:

Կարևոր է հաշվի առնել և՛ ՏԱԿ ընդունող հաստատություններին և՛ այն գործընկերներին, որոնք որակավորումներ են շնորհում այն երկրում, որը փաստացի տարբերվում է ընդունող երկրից, որտեղ կրթություն են ստանում ուսանողները: Գործնական օրինակներում ներկայացված են հաստատությունների և գործակալությունների կողմից ներդրված համակարգերի օրինակներ, որոնք ուղղված են համալսարանների միջև իրականացվող ՏԱ կրթության որակի ապահովման աջակցությանը:

Հաստատությունները պետք է հստակ պատկերացում ունենան մատակարարվող ՏԱ կրթության տեսակի վերաբերյալ: Ազգային գործակալությունները ևս պետք է հստակ պատկերացում ունենան առ այն, թե ինչպիսի ՌԱ գործընթացներ են իրականացվում և ուղիներ փնտրեն՝ ուղղված դրանց բարելավմանը: Խմբային առաջին առաջադրանքի ընթացքում քննարկվում են այս հարցերը և մասնակիցներն ըստ առաջնահերթության մատնանշում են այն ոլորտները, որոնք առանցքային են ՏԱ կրթության հաջող ապահովման համար:

Ինչպես վերը նշվեց, ՌԱԱ համակարգը ակնհայտ ազդեցություն ունի հաստատությունում ընթացող գործընթացների վրա, և ՏԱ կրթությունը բացառություն չէ: Ուստի խմբային երկրորդ առաջադրանքի ընթացքում մասնակիցներին հանձնարարվում է քննարկել իրենց երկրներում գործող որակի ապահովման ազգային համակարգերը և դրանց ազդեցությունը ՏԱԿ մատակարարման վրա: Այնուհետև մասնակիցները քննարկում են, թե ինչպես կարող են այս պահանջները հետագայում զարգացվել սույն հատվածի նախորդ խմբային քննարկման արդյունքում վեր հանված առանցքային ոլորտների խնդիրները հարթելու համար:

Ի վերջո, այս հատվածում հղում է արվում մի շարք կետերի, որոնք կարող են (երբեմն նաև պետք է) օգտագործվեն ՏԱԿ ՌԱ գործընթացներում: Սույն հղման կետերը կարող են աջակցել ՏԱԿ մատակարարող հաստատություններին, (ընդունող

հաստատություններ) ներդնել նման համակարգեր, ինչպես նաև վերջիններիս ուղորդել առ այն, թե ինչպես են նման շրջանակներն օգտագործվել այլ երկրների կողմից (ուղարկող երկիր) որոնք որակավորումներ են շնորհում:

Իրազեկության նման շրջանակների կիրառության ժամանակ կարևոր է պարզաբանել, թե որ կետերն են գործում և որոնք՝ ոչ այն միջավայրում, որտեղ մասնակիցները գործունեություն են ծավալում:

Հարցադրումներ

Մասնակիցները կարող են անհատապես խորհել սույն հարցերի շուրջ, կամ թրեյնինգավարները կարող են սրանք օգտագործել որպես խմբային քննարկումների մեկնարկային հարցադրումներ: Թրեյնինգավարները պարտադրված չեն անդրադարձ կատարել բոլոր հարցադրումներին, փոխարենը, նրանք կարող են ներգրյալ հարցերից առանձնացնել այնպիսիք, որոնք առավել սկզբունքային են այս կամ այն աշխատանքային խմբի համար:

- 1 Ինչպե՞ս է SU կրթության ՈԱ-ն կապվում ինչպես հաստատությունների ներսում, այնպես էլ ազգային մակարդակում իրականացվող ՈԱ առավել լայն գործընթացների հետ:
- 2 Գործընկեր հաստատությունների և ազգային գործակալությունների հետ ներկայումս ինչպիսի՞ գործունեություն էք ծավալում SU կրթության որակն ապահովելու համար:
- 3 SU կրթության վերաբերյալ ինչպիսի՞ տեղեկատվություն և տվյալներ են առկա Ձեր հաստատությունում և երկրում:
- 4 SU կրթության ապահովման համար ի՞նչ տարբեր մոտեցումներ պետք է որդեգրեն ընդունող և ուղարկող կրթական հաստատությունները:
- 5 Արդյո՞ք ընդունող և ուղարկող հաստատությունների ՈԱԱ կազմակերպությունները պետք է տարբեր մոտեցումներ որդեգրեն SU կրթության ապահովման ուղղությամբ: Եթե այո, ապա որո՞նք են այդ տարբերությունները:

- 6 Ինչպիսի հղման կետեր եք օգտագործում SU կրթության որակի ապահովման համար: Ինչպես են այդ հղման կետերը տարբերվում, կամ ինչպես եք դրանք ադապտացնում Ձեր օգտագործած այլ ՈԱ գործընթացների համեմատությամբ:

- 7 Ինչպես ուղարկող, այնպես էլ ընդունող երկրների կազմակերպությունների SU կրթության ՈԱԱ գործընթացներից ստացված ինչպիսի զեկույցներ, կամ այլ ելքային փաստաթղթեր կուզենայիք տեսնել:

Ուղարկող հաստատության անդրսահմանային ԲԿ/տրանսազգային կրթության ՈՆԱ

Ներոգրյալ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ն ուսումնասիրելիս, մասնակիցները կարող են խորհել նաև հետևյալ ոլորտների շուրջ: ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ-ի վերաբերյալ հետագա վերլուծությունը ներառված է ներոգրյալ առաջադրանքներում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Տրանսազգային կրթության եզրույթներ, մոտեցումներ, համակարգեր և հղման կետեր

Ներկայացված՝ **Բաֆ Սպա համալսարանի կողմից (ԲՄՀ), ՄԹ**

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- Արդյոք ԲՄՀ-ի կողմից նկարագրված համակարգերը նմա՞ն են այն համակարգերին, որոնք գործում են Ձեր համատեքստում՝ կապված ուղարկող հաստատության միջազգայնացման և տրանսազգային ԲԿ գործընթացների ՈԱ հետ:
- Մտածեք, թե այս համակարգերն ինչպե՞ս կարող են բարելավվել: Դրանցից որո՞նք կպահպանեիք Ձեր համակարգերում:
- Ստորև նկարագրված մարտահրավերներից կա՞ն այնպիսիք, որոնք առկա են նաև Ձեր համատեքստում: Կարո՞ղ եք ստորև ներկայացված խորհրդատվություններին ավելացնել այնպիսիք, որոնք թույլ կտան հաղթահարել այդ մարտահրավերները:

ԲՄՀ-ն ունի երեք լայն նպատակ, որոնք խթանում են վերջինիս տեսլականը և միջազգայնացման ռազմավարությունը;

- ԲՄՀ-ը ներկայացնել որպես համաշխարհային համալսարան,

- պատրաստել այնպիսի շրջանավարտներ, որոնք կլինեն հասարակայնորեն ներգրավված գլոբալ քաղաքացիներ,
- ավելացնել օտարերկրյա ուսանողների քանակը:

SU կրթական գործընթացները համալսարանի տեսլականի և ռազմավարության մաս են կազմում: ԲՄՀ-ում իրականացվող գործընթացները մշակվում են ՈԱԳ-ի և վերջերս նաև ՄԹ ԲԿ Որակի կոդեքսի 10-րդ գլխի պահանջներին համապատասխան: Որակի կոդեքսը SU կրթության իրականացման պատասխանատվությունը հստակ դնում է որակավորում շնորհող հաստատության ուսերին: Որակի կոդեքսը համապատասխան ցուցիչների միջոցով ուղղորդում է հաստատություններին առ այն, թե ինչպես պետք է ընդհանուր սպասելիքներն իրականացվեն: Վերոգրյալ ցուցիչներն օգտագործվում են ԲՄՀ-ի ՈԱԳ ուղենիշերին համահունչ մշակցած գործընթացներն ու գործողություններն ուղղորդելու համար:

ԲՄՀ-ը մի շարք գործընթացներ ունի՝ միտված SU կրթության ապահովման կառավարմանը: Սույն գործընթացների հիմքում ընկած է այն գաղափարը, որ վերջիններս պետք է խելամիտ և համապատասխան լինեն: ԲՄՀ-ը (ի լրումն SU և համագործակցային կրթության ապահովման գործընթացներում ներգրավված ՄԹ համալսարանների մեծամասնության) մշակել է հատուկ ռիսկային համագործակցությանն ուղղված մի շարք համապատասխան գործընթացներ:

Համագործակցության ապահովման հանձնաժողովի հիմնական առաքելություններից է ապահովել որպեսզի <<ԲՄՀ-ի և գործընկերների միջև ձեռք բերված համաձայնությունները պաշտպանեն ԲՄՀ-ի որակավորումների շնորհման չափորոշիչները, ինչպես նաև այդ որակավորումներին գրանցված ուսանողների ուսուցման հնարավորությունների որակը>>: Համագործակցության ապահովման հանձնաժողովը մշակում է այնպիսի համակարգեր, որոնք ճկուն են և կարող են ըստ անհրաժեշտության փոփոխվել: Սա հնարավորություն է ընձեռում հաշվարկել հնարավոր ռիսկերը և անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան գործողություններ: Նույն տրամաբանությամբ, փոքր ռիսկերի պարագայում առավել թեթև գործընթացներ են իրականացվում: Գործընթացները պետք է լինեն արդյունավետ և լինեն ազդեցիկ, բայց դրանք նաև պետք է լինեն ճկուն, քանզի ՏԱԿ-ը շարունակում է ադապտացվել և փոփոխվել: SU կրթության ոլորտում գործընկերության հաստատման

գործընթացն իրականացվում է 4 փուլերով: Հաշվի են առնվում ռազմավարական համապատասխանությունը, համապատասխան աշխատանքը (ուսումնական, ֆինանսական, իրավական), դիտարկումը բիզնեսի դիրքերից և կրթական համաձայնությունը: Այս փուլերից յուրաքանչյուրի պարագայում ձեռք է բերվում համաձայնություն: Սույն գործընթացի վերջին փուլը հաստատումն է, որը հաճախ իրականացվում է գործընկերոջ կողմից՝ համապատասխան հանձնաժողովի միջոցով: Վերոգրյալ հանձնաժողովի կազմում ներառված են ինչպես համալսարանի ուսումնական անձնակազմը, այնպես էլ արտաքին մասնակիցներ, իսկ ուսանողների ձայնը լսելի է դառնում ուսանողական ներկայացուցչի միջոցով:

Երբ համաձայնությունը ձեռք է բերվում, ԲՄՀ-ը ձեռնամուխ է լինում իր տարեկան գործընթացների բնականոն ռիթմին՝ վերանայում, ինքնավերլուծություն, ստուգում: Սրանք համալսարանի ՈԱ գործընթացներն են, որոնք պարփակում են բոլոր ոլորտները, սրանք շրջափուլային են և իրականացվում են գոյություն ունեցող մոդուլների հետ միախառնված, ինչպես օրինակ՝ տարեկան մոնիթորինգ, զեկույցի պատրաստում արտաքին դիտարկողի կողմից, խորհում և պատասխան, մոդուլի գնահատում, գործընկերային պարբերական վերանայում:

Այն մարտահրավերները, որոնց ստիպված է դիմակայել Համագործակցության ապահովման հանձնաժողովը համընդհանուր են ՄԹ տարածքում ՏԱ կրթություն իրականացնող շատ հաստատությունների համար և վերջիններս ի հայտ են եկել դրանց հաղթահարման համապատասխան լուծումների հետ մեկտեղ: ՏԱ կրթությունը պետք է նախապես պլանավորվի և մանրակրկիտ ֆինանսական հաշվարկների ենթարկվի, քանզի այն կարող է բավական բարդ և թանկ գործընթաց լինել և հաճախ ավելի շատ ժամանակ կարող է տանել համաձայնեցման համար, քան նախատեսված էր: Անհրաժեշտ է համապատասխան գործընկերների հետ իրատեսական ժամկետներում ակնկալիքների կառուցում իրականացնել՝ ապիովելու նպատակի և դրա իրականացման վերաբերյալ համընդհանուր և երկուստեք հպատկերացում: Հաստատությունները պետք է տեղեկացված լինեն յուրաքանչյուր անհատական նախագծի ռիսկերի մասին և պատրաստ լինեն մեղմել դրանք: Ծրագրի կառավարման և մատակարարման գործընթացում ներգրավված հաստատությունների անձնակազմի դերերն ու

պատասխանատվությունները պետք է հստակ բաշխված լինեն: Կարևոր է նաև համաձայնեցման գործընթացում ներգրավվել ուսանողների և արտաքին փորձագետների:

Երբ խոսքը վերաբերում է ուսանողներին, ՏԱ կրթության պարագայում երկու խոշոր մարտահրավերներ են առկա: Առաջին այն է, որ ուսանողները պետք է կարողանան իրնց ընկալել որպես որակավորում շնորհող հաստատության ուսանողներ, պետք է համապատասխան հնարավորություններ ստանան որակավորում շնորհող հաստատության գործընթացներում ներգրավվել և համալսարանական հասարակության մաս կազմել (անգամ եթե նրանք ուսանում են արտերկրում): Երկրորդ մարտահրավերը վերաբերում է որակավորում շնորհող և մատակարարող հաստատությունների միջև հավասարությանը, երբ խոսքը վերաբերում է ուսանողական կյանքին, որը պետք է լինի համադրելի և հաշվի առնի ուսումնական միջավայրի, ուսումնական աղբյուրների, ակադեմիական տարվա կառուցվածքի և մատակարարման մեթոդների տարբերությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Տրանսազգային կրթության եզրույթներ, մոտեցումներ, համակարգեր և հղման կետեր

Ներկայացված՝ **Ժան Մուլին Լիոն 3 (ԺՄԼ) համալսարանի կողմից**

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- Արդյոք ԺՄԼ-ի կողմից նկարագրված համակարգերը նմա՞ն են այն համակարգերին, որոնք գործում են Ձեր համատեքստում՝ կապված ուղարկող հաստատության միջազգայնացման և տրանսազգային ԲԿ գործընթացների ՈԱ հետ:
- Մտածեք, թե այս համակարգերն ինչպե՞ս կարող են բարելավվել: Դրանցից որո՞նք կպահպանեիք Ձեր համակարգերում:
- Ստորև նկարագրված մարտահրավերներից կա՞ն այնպիսիք, որոնք առկա են նաև Ձեր համատեքստում: Կարո՞ղ եք ստորև ներկայացված խորհրդատվություններին ավելացնել այնպիսիք, որոնք թույլ կտան հաղթահարել այդ մարտահրավերները:

Ժամ Մուլին Լիոն 3 (ԺՄԼ) համալսարանը ներկայումս ունի 4400 օտարերկրյա ուսանողներ աշխարհի 112 երկրներից՝ 275 օտարերկրյա ասպիրանտներ, 208 ուսանողներ ԷԲԱԶՄՈՒՄ ծրագրի շրջանակներում գործընկեր համալսարաններից, 254 ուսանող ԷԲԱԶՄՈՒՄ ծրագրով (առանց համաձայնության), 1985 գրանցված ուսանող 47 տեղակայված ծրագրերից, 709 ֆրանսիացի ուսանող, որոնք ուսանում են արտերկրում:

ԺՄԼ համալսարանի՝ կրթական ծրագրերին ներկայացվող միջազգայնացման նպատակները հետևյալն են.

- զարգացնել համալսարանի դերակատարությունը միջազգային հարթակում,
- այլ համալսարանների հետ համապատասխան գործընկերային կապեր հաստատել՝ վերապատրաստումների և աշխատանքի տեղավորման խնդիրների շուրջ,
- համալսարանի գրավչությունը բարձրացնելու նպատակով ուսումնական ծրագրեր առաջարկել անգլերենով (ՈՒԱԼՖ՝ ուսանի՛ր անգլերենով, Լիոն, Ֆրանսիա) (SELF: Study in English, Lyon France)
- զարգացնել միջազգային հետազոտությունը համատեղ իրականացված սեմինարների, նախագծերի, հետազոտական նկրտումների և գնահատման միջոցով:

Գործընկերակցության շրջանում ներկայացված ծրագրերը կարող են լինել.

- արտերկրում իրականացվող ծրագրեր,
- կրկնակի դիպլոմ շնորհող ծրագրեր,
- եվրոպական ծրագրեր, ինչպես օրինակ ՏԵՄՊՈՒՄ, Համատեղ մագիստրոսական որակավորում, Էրազմուս Մունդուս 2 (Tempus, JMD, Action 2 Erasmus Mundus).

Արտերկրում իրականացվող ծրագրերը ֆրանսիական որակավորումներ են ԲԿ առաջին և երկրորդ մակարդակներում: Նման ծրագրերի նպատակն է ուսանողներին համապատասխան հմտություններով զինել, որպեսզի վերջիններս դառնան երկմշակույթ մասնագետներ՝ օժտված համապատասխան ունակություններով ստեղծելու ինստիտուցիոնալ, արդյունաբերական և առևտրային կապեր այն երկրների հետ, որտեղ իրականացվում է ծրագիրը, օրինակ՝ Ասիա, Մերձավոր Արևելք, Արևելյան Եվրոպա և Հարավային Աֆրիկա:

SUԿ ՈԱ-ը ԺՄԼ համալսարանում

Ֆրանսիական համալսարաններում գործող SU կրթության որակի կանոնները զետեղված չեն Որակի Կոդեքսում, ինչպես օրինակ ՄԹ դեպքում է: SU կրթության աջակցության նպատակով ՈԱ ներքին կառույցներ հիմնելու ոչ մի պարտավորվածություն չկա: Որակը ԺՄԼ համալսարանի յուրաքանչյուր անդամի պարտականությունն է և այն վերապահված չէ առանձին մարմնի կամ թիմի:

Անդրսահմանային դիպլոմների ներդրման ներքին գործընթացները ներառում են որոշումների կայացման մի քանի մակարդակ: Նախ առաջարկը ծնվում է որևէ դասախոսի մոտ, ով այնուհետ նախագծի որակին վերաբերող հարցերը պետք է համաձայնեցնի ԺՄԼ համալսարանի միջազգային կապերի և իրավաբանական ծառայությունների հետ: Այդուհետ, առաջարկը պետք է հաստատվի ինչպես ֆակուլտետի, այնպես էլ համալսարանի խորհրդի կողմից:

Ի հավելումն նոր նախագծերի ընդունման վերոգրյալ գործընթացների, իրականացվող որակավորումները ենթակա են Կրթության հանձնաժողովի և Բարելավման հանձնաժողովի կողմից տարեկան կամ երկու տարին մեկ իրականացվող աուդիտի: Կրթության հանձնաժողովի կազմը ներառում է համապատասխան առարկաների մասնագետներ, իսկ Բարելավման հանձնաժողովում ներգրավված են նաև արտաքին մասնագետներ, որոնք համապատասխան փորձառություն ունեն ոլորտում: Հանձնաժողովը ուսումնասիրում է որակավորման շնորհման ողջ ընթացքը և դիտարկումներ է անում արդյունաբերության հետ դրա շարունակական կապակցվածության վերաբերյալ:

Այլ մատակարարների հետ համատեղ շնորհվող որակավորումները նաև ենթակա են գործընկեր երկրում իրականացվող ՈԱ գործընթացներին: Գործընկերային գործընթացներն իրականացվում են Համաձայնության Ուղենիշներ կոչվող փաստաթղթի համաձայն, որը սահմանում է այն կանոնները, որոնք ապահովում են տարբեր մատակարարների կողմից շնորհվող որակավորումների որակը և չափորոշիչները:

Կրթական կանոնները կանոնակարգում են ուսանողներին տրամադրվող դասավանդման որակը, կրթական ծրագրերի բովանդակությունը, ինչպես նաև ուսանողների և ուսումնական անձնակազմի ընտրության գործընթացները:

Վարչարարական կանոնները ապահովում են մի շարք ոլորտներում ուսանողներին տրամադրվող տեղեկատվության որակը, որը ներառում է տեղեկատվություն ուսանողների ընտրության և գրանցման, քննական պայմանների, բողոքարկման գործընթացների և այլնի վերաբերյալ:

Տինանսական կանոնները հավաստում են պլանավորած տնտեսական մոդելների կարևորությունը:

ԺՄԼ համալսարանի կողմից օգտագործվող ՈԱ գործիքները ներառում են.

- **Գործընկերային համաձայնության ուղեցույց.** ներառում է ընդհանուր շրջանակ, որը ըստ ձեռք բերվող համաձայնության տեսակի հնարավոր է ադապտացնել (այն վերաբերում է ինքնությանը, իրավական խնդիրներին, ուսումնական բովանդակությանը, պարբերաբար իրականացվող վերանայումներին և այլն),
- **Փոխըմբռնման համաձայնագրի ձևաթուղթ,**
- **Կիրարկման համաձայնագիր** (վերաբերում է ուսանողների փոխանակմանը և ծրագրային որոշակի գործընթացներին),
- **Միջազգային համագործակցության համաձայնագիր,** որը ներակայումս վերանայվում և վերակառուցվում է օգտագործելով Բիզնես գործընթացի կառավարման նոտացիա համակարգը (Business Process Management Notation),
- **Վիճակագրության բաժին** (համապատասխան գործիքակազմ է ապահովում աշխատանքի տեղավորման, հաջողության ցուցանիշների, աշխատավարձերի և այլնի վերաբերյալ վերլուծության և որոշումների կայացման համար):

Գործողություն՝ անդրսահմանային/SU կրթության ՈԱ միջոցառումների և բուհերում դրանց բարելավման վերաբերյալ

Թրեյնինգի շրջանակը

Սահմանել հաստատություններում իրականացվող SU կրթության տեսակները և քննարկել ՈԱ այն միջոցառումները, որոնք իրականացվում են դրանք ադապտացնելու համար: Սահմանել, թե որոնք կարելի է որպես լավագույն փորձի օրիինակներ համարել և որոնք կարիք ունեն բարելավման:

Խմբային աշխատանք

Մասնակիցներն աշխատում են փոքր խմբերում (3-4), այնուհետ արդյունքները ներկայացվում են բոլոր մասնակիցներին: Յուրաքանչյուր խումբ զեկուցող է առաջադրում:

Առաջադրանք 1

Սույն առաջադրանքը կարելի է տարանջատել երկու մասի՝ բուհերի և ՈԱԱԼՄ միջև: Նրանցից յուրաքանչյուրն աշխատանք կձևավալի հետևյալ ուղղություններով.

Բուհեր. կազմե՛ք քննության առարկա բուհերում իրականացվող SUԿ տեսակների ցանկը: Ստորև ներկայացված աղյուսակն օգտագործե՛ք դրանք գրառելու համար:

ՈԱԱԼՄ. կազմե՛ք Ձեր երկրներում/տարածաշրջանում իրականացվող SUԿ տեսակների ցանկը: Ստորև ներկայացված աղյուսակն օգտագործե՛ք դրանք գրառելու համար:

SUԿ տիպերը	Տիպաբանություն (ինչպես զետեղված է Առաջադրանք 2-ում)

--	--

Առաջադրանք 2

Վեր հանված միջոցառումները/գործողությունները գետեղե՛ք ստորև տրված տարակարգերից մեկում: Որոշե՛ք, թե տվյալ տարակարգերից որն է լավագույնս արտացոլում վերը նշված Ձեր միջոցառումները/գործողությունները: Քննարկե՛ք ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ ծրագրային մակարդակը, ինչպես նաև Ծառայությունների մատուցման առևտրի ընդհանուր համաձայնության ձևը (տե՛ս էջ 56)

Անդրսահմանային մատակարարների շարժունության տիպաբանություն (Knight, 2005):

Տարակարգ	Շարժունության ձևի/տեսակի նկարագրություն
Մասնաճյուղային կամպուս	Ա երկրի մատակարարը Բ երկրում մասնաճյուղային կամպուս է հիմնում Բ երկրի ուսանողներին (Ա երկրի ուսանողները ևս կարող են Բ երկրում ուսանել մեկ կիսամյակ կամ ինչ-որ դասընթացի գրանցվել) դասընթացներ կամ ծրագրեր մատակարարելու: Որակավորումները շնորհվում են Ա երկրում տեղակայված մատակարարի կողմից:
Անկախ հաստատություն	Օտար Ա մատակարարը (ավանդական համալսարան,

	առևտրային կազմակերպություն կամ միություն(ցանց) Բ երկրում հիմնում է ինքնավար բուհ, որը դասընթացներ/ծրագրեր է տրամադրում և որակավորումներ շնորհում:
Կլանում/միացում	Օտար Ա մատակարարը գնում է Բ երկրի բուհը մասնակի, կամ ամբողջությամբ:
Ուսուցման/դասավանդման կենտրոն	Օտար Ա մատակարարը Բ երկրում հիմնում է ուսուցման կենտրոններ՝ աջակցելու դասընթացների/ծրագրերի գրանցվել ցանկացող ուսանողներին: Ուսուցման կենտրոնները կարող են ակախ գործունեություն ծավալել, կամ համագործակցել Բ երկրի տեղական մատակարարների հետ:
Անդամակցում/ցանց	Տարբեր երկրներում գործունեություն ծավալող տարատեսակ <i>հասարակական</i> և <i>մասնավոր, ավանդական</i> և <i>նոր</i> մատակարարները ներգրավվում են գործընկերային նորարարական հարաբերություններում՝ հիմնելու ցանցեր/հաստատություններ ինչպես տեղում, այնպես էլ օտար երկրներում թե՛ հեռավար և թե՛ առկա ձևերով դասընթացներ/ծրագրեր իրականացնելու համար:
Վիրտուալ համալսարան	Մատակարար, ով կրեդիտ շնորհող դասընթացներ և որակավորում շնորհող ծրագրեր է իրականացնում այլ երկրում տեղակայված ուսանողներին հեռավար ուսուցմամբ:

Անդրասահմանային ծրագրերի շարժունության տիպաբանություն

Տարակարգ	Շարժունության ձևերի/տեսակների նկարագրություն
<p>Համալիր ձեռնարկատիրական հաստատությունը /Franchise/</p>	<p>Համաձայնություն, ըստ որի Ա երկրի կրթության մատակարարը լիազորում է Բ երկրին իրենց դասընթացը/ծրագիրը/ծառայությունը մատուցել Բ երկրում կամ այլ երկրներում: Որակավորումը շնորհվում է Ա երկրի մատակարարի կողմից:</p> <p>Սա սովորաբար շահույթ հետապնդող առևտրային համաձայնություն է:</p>
<p>Կրկնօրինակումը /Twinning/</p>	<p>Իրավիճակ, երբ Ա երկրի կրթության մատակարարը, համագործակցում է Բ երկրի մատակարարի հետ՝ մշակելու համակցման մի ծրագիր, որը ուսանողին հնարավորություն կընձեռի դասընթացի կրեդիտներ կուտակել Ա կամ Բ երկրում: Շնորհվում է միայն մեկ որակավորում Ա երկրի կողմից: Սա կարող է և շահույթ չհետապնդել:</p>
<p>Միասնական/Կրկնակի դիպլոմի շնորհումը / Double/ Joint degree/</p>	<p>Համաձայնություն, ըստ որի տարբեր երկրների կրթության մատակարարները համագործակցում են ծրագրեր մատուցելու ուղղությամբ, և որի արդյունքում ուսանողին կամ շնորհվում է կրկնակի դիպլոմ մատակարարներից յուրաքանչյուրի կողմից, կամ համատեղ դիպլոմ:</p> <p>Հիմնականում սրա հիմքում կրթական փոխանակումներն են:</p>
<p>Ծրագրային տեղաբաշխումը /Articulation/</p>	<p>Տարբեր տեսակի համակցային համաձայնություններ տարբեր երկրներում գործունեություն ծավալող կրթության մատակարարների կողմից, որոնք ուսանողներին հնարավորություն են ընձեռում կրեդիտներ կուտակել համագործակցող մատակարարների կողմից առաջարկվող դասընթացների/ծրագրերի շրջանակում:</p>
<p>Հավաստումը /Validation/</p>	<p>Տարբեր երկրներում գործունեություն ծավալող կրթության մատակարարների միջև վավերացման համաձայնագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում ընդունող՝ Բ երկրի</p>

	հաստատությանը շնորհել ուղարկող՝ Ա երկրի որակավորում:
Վիրտուալ / հեռավար ուսուցումը /Virtual/Distance/	Համաձայնագրեր, ըստ որոնց կրթության մատակարարները տարբեր երկրներում ուսանողներին դասընթացներ/ծրագրեր են առաջարկում՝ հեռահար և առցանց մոդուլների տեսքով: Մրանք կարող են համակցվել տեղական բուհում գործող ուսանողներին առերես տրվող աջակցությամբ:

ԾՄԱԸՀ կրթական տիպեր.

- Տիպ 1** անդրսահմանային մատակարարում (հեռահար ուսուցում, վիրտուալ կրթական հաստատություններ, կրթական ծրագրային ապահովում և S2S միջոցով կորպորատիվ թրեյնինգ),
- Տիպ 2** սպառում արտերկրում (ուսանողներ, ուսուցում արտերկրում),
- Տիպ 3** առևտրային ներկայացուցչություն (օր. տեղական համալսարան կամ կամպուս, լեզվի ուսուցման կազմակերպություններ, անհատական թրեյնինգի կազմակերպություններ) կամ ծրագրային, ինստիտուցիոնալ շարժունակություն,
- Տիպ 4** ֆիզիկական անձանց ներկայություն (արտերկրում աշխատող պրոֆեսորներ, դասախոսներ, հետազոտողներ):

Առաջադրանք 3

Համեմատե՛ք Ձեր համատեքստում իրականացվող վեր հանված միջոցառումները ինդրո առարկա վերոգրյալ օրինակներում զետեղված անդրսահմանային բարձրագույն/SU կրթության միջոցառումների հետ: Դրանք դասակարգե՛ք և ամփոփե՛ք այն հիմնարար կետերը, որոնք պետք է պահպանվեն Ձեր հաստատության/կազմակերպության ապագա զարգացումների համար:

Գործնական օրինակ	Տիպաբանություն (ըստ 2-րդ առաջադրանքի)	Հիմնական դրույթներ
ԲՄՀ		
ԺՄԼ		

--	--	--

Առաջադրանք 4

Մատնանշե՛ք 5 ոլորտ/գործընթաց, որոնք հիմնաքարային են ՏԱԿ ապահովման համար և դասակարգե՛ք դրանք ըստ առաջնահերթության: Բուհերն ու որակի արտաքին ապահովման լիազոր մարմինները (ՈԱԱԼՄ) համատեղ են աշխատում այս գործընթացի վրա: Դուրս բերված ոլորտները համեմատե՛ք ՏԵՄՊՈՒՍ նախագծի գործընկերների հետ: Արդյոք ՏԵՄՊՈՒՍ նախագծի գործընկերների մոտ առկա՞ են այնպիսի ոլորտներ, որոնք Դուք հաշվի չեիք առել: Ըստ անհրաժեշտության վերանայե՛ք Ձեր ցանկը:

Ոլորտ/գործընթաց, որոնք հիմնաքարային են ՏԱԿ ապահովման համար (ըստ առաջնահերթության)	
1	
2	
3	
4	

5	

Առաջադրանք 5

Սույն առաջադրանքը կարելի է տարանջատել երկու մասի՝ բուհերի և ՈԱԱԼՄ միջև: Նրանցից յուրաքանչյուրն աշխատանք կձևավալի հետևյալ ուղղություններով.

Բուհեր. քննարկե՛ք Ձեր հաստատությունում գործող ՈՆԱ այն գործընթացները, որոնք կարող են հարմարեցնել/հեշտացնել ՏԱԿ ապահովումը: Այնուհետ դրանք դասակարգե՛ք՝ ա. որպես լավագույն փորձ, բ. որպես բարելավման կարիք ունեցող ոլորտ:

ՈԱԱԼՄ. քննարկե՛ք Ձեր հաստատությունում գործող ՈԱԱ այն կանոնակարգային համակարգը, որը կարող է հարմարեցնել/հեշտացնել ՏԱԿ ապահովումը: Այնուհետ դրանք դասակարգե՛ք՝ ա. որպես լավագույն փորձ, բ. որպես բարելավման կարիք ունեցող ոլորտ:

Բուհերի և ՈԱԱԼՄ-ի համար. իրականացրե՛ք սույն գործունեության վերաբերյալ Ձեր եզրակացությունների փոխանակում՝ քննարկելով ներքին և արտաքին հիմնական գործընթացները և կենտրոնանալով դրանց համադրելիության մակարդակի վրա:

ՈԱ գործընթացներ, որոնք կարելի է որպես	ՈԱ գործընթացներ, որոնք բարելավման
---------------------------------------	-----------------------------------

լավագույն փորձի օրինակներ դիտարկել	կարիք ունեն

Ներմուծվող անդրսահմանային բարձրագույն/SU կրթության ՈԱԱ

Գործնական ներոգրյալ օրինակները քննարկելիս՝ մասնակիցները կարող են խորհել հետևյալ ոլորտերի շուրջ: Գործնական օրինակների հետագա վերլուծությունն առաջարկվում է իրականացնել ներոգրյալ առաջադրանքներում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՏԱԿ ՈԱ կարգավորման հիմքերը

Ներկայացված՝ ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից (ՈԱԱԿ)

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- Արդյոք ՈԱԱԿ-ի կողմից նկարագրված համակարգերը նմա՞ն են այն համակարգերին, որոնք գործում են Ձեր համատեքստում միջազգայնացման և ՏԱ կրթության գործընթացների ուղղությամբ: Անհրաժեշտություն կա՞ արդյոք դրանք առավել զարգացնելու: Ի՞նչը կցանկանայիք պահպանել Ձեր ներկայիս համակարգից:
- Ստորև նկարագրված մարտահրավերներից կա՞ն այնպիսիք, որոնք առկա են նաև Ձեր համատեքստում:
- Կարո՞ղ եք ստորև ներկայացված խորհրդատվություններին ավելացնել այնպիսիք, որոնք կապահովեն ՏԱԿ ՈԱ գործընթացների հաջող ընթացքը:

ՈԱԱԿ-ը ներկայացնում է ՏԱ կրթությանն աջակցող համատեքստը:

ՏԱԿ սպասումները

Ուսանողների դիտանկյունից ամենակարևոր հանգամանքը միջազգայնորեն մրցունակ լինելն ու միջազգայնորեն ճանաչված կրթություն ստանալն է: Գործատուների դիրքերից՝ ՏԱ կրթության միակ ակնկալիքը միջազգայնորեն ճանաչված հմտություններով օժտված շրջանավարտների պատրաստումն է, ինչը կնպաստի բիզնեսի կայունությանն ու միջազգայնացմանը և հիմք կհանդիսանա միջազգային հաճախորդների գրավման համար:

Հայաստանյան իրավիճակի ամփոփ ակնարկ

Անդրսահմանային կրթություն իրականացնող ցանկացած կրթական հաստատություն կամ ծրագիր համապատասխան լիցենզիա ունի՝ տրված ՀՀ ԿԳՆ կողմից: Որակավորումների շնորհումը տարբեր կերպ է կարգավորվում՝ կախված

համալսարանների ունեցած համաձայնագրերից: Ներկայումս ՏՄ կրթություն իրականացնող համալսարանները հավատարմագրում և ատեստավորում են ստանում ուղարկող երկրի համապատասխան հաստատության կողմից: Չնայած ընդունող երկրների համալսարանները ինքնավար են և կարող են գործունեություն ծավալել իրենց երկրի չափորոշիչների համապատասխան, նրանք, այդուհանդերձ, գործում են ուղարկող երկրի կանոնակարգերի և չափորոշիչների ներքո: Նրանք իստիտուցիոնալ հավատարմագրում են անցնում ուղարկող երկրի չափորոշիչների համապատասխան: Ոչ մի շեշտադրում չի իրականացվում տեղական հարցադրումների վրա: Վերոգրյալի իրականացման համար ծրագրային հավատարմագրումը նախապայման չէ, ինչը հարցականի տակ է դնում ծրագրերի որակը: Համաձայն Համաշխարհային բանկի 2012թ. վերլուծության, 12,000 ուսանող է ներգրավված անդրսահմանային կրթության մեջ (սովորողների ընդհանուր քանակի 10% ավելին):

ՀՀ-ում լիցենզավորումն իրականացվում է ըստ բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի և ըստ մատուցվող կրթության ձևի (հատկանշական է, որ հեռավար ուսուցման պարագայում այն կիրառություն չի ունեցել): Լիցենզավորման գործընթացի կարգավորման համար առկա են հետևյալ 3 պահանջները՝ հիմնական (օրինակ՝ դասավանդող անձնակազմի որակավորումները), ծրագրային նկարագրություն (օրինակ՝ համապատասխանություն պետական չափորոշիչներին) և ռեսուրսներ (շինություն, սարքավորումներ և լաբորատորիաներ):

Հավատարմագրում

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի համաձայն, կրթական հաստատությունները և դրանց մասնաճյուղերը հաստատված են Հայաստանում՝ Հայաստանի և այլ պետությունների մասնակցությամբ: Բոլոր բուհերն ու կազմակերպությունները իրավահավասար են՝ ներառյալ պետական բուհերը, և հավատարմագրվում ու լիցենզավորվում են ՀՀ օրենքների համաձայն¹⁰: Սույն օրենքը նախատեսված է ՀՀ միջազգային պայմանագրերում:

Հայաստանի ՌԱԱ գործընթացները նախատեսում են երկու տեսակի հավատարմագրում՝

- ինստիտուցիոնալ հավատարմագրում, որը պարտադիր գործընթաց է ինչպես մասնավոր, այնպես էլ պետական բուհերի համար,

¹⁰ More information available here: www.armenic.am/?laid=1andcom=moduleandmodule=menuandid=97.

- ուսումնական ծրագրի հավատարմագրում, որը բուհերի նախաձեռնությամբ իրականացվող կամավոր գործընթաց է¹¹:

Ճանաչում, հավատարմագրում և SUԿ

Համաձայն Պետական հավատարմագրման կարգի, հաստատությունը (ներառյալ SU կրթություն իրականացնող հաստատությունները) կարող են դիմել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման այն գործակալությունների միջոցով, որոնք գրանցված են Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում, կամ ՀՀ ԿԳՆ կողմից սահմանված հավատարմագրման գործակալությունների ցանկում: ՈԱԱԿ-ը այդ մասին պետք է նախօրոք տեղեկացվի: Հավատարմագրման արդյունքները գրանցվում են հավատարմագրման պետական ռեգիստրում: Եթե ՈԱԱԿ-ը նախօրոք չի տեղեկացվել, հավատարմագրման արդյունքները չեն ճանաչվում և չեն գրանցվում հավատարմագրման պետական ռեգիստրում:¹²

SU կրթությունն իրականացվում է հետևյալ տարակարգերով.

- ֆրանչայզինգ,
- կրկնակի դիպլոմ,
- մասնաճուղային կամպուսներ,
- անկախ հաստատություն,
- վիրտուալ համալսարան,
- միջկառավարական հաստատություններ (երկու տարբեր երկրների կառավարությունները/մասնավոր սեկտորի ներկայացուցիչները համաձայնության են գալիս միջկառավարական համալսարան հիմնելու ուղղությամբ: Համալսարանի գործողությունները կանոնակարգվում են երկու երկրների օրենքներով, ինչպես նաև այն հավատարմագրում, լիցենզավորում է ստանում երկու երկրների համապատասխան մարմինների կողմից):

¹¹<http://www.anqa.am/en/Portals/0/ANQA%20Accreditation%20Manual.pdf>

¹²<http://www.anqa.am/en/Portals/0/STATUTE%20ON%20STATE%20ACCREDITATION.pdf>

Մարտահրավերները և խոչընդոտները

Ներկայումս Հայաստանն անցումային շրջանում է: Պետական կանոնակարգման համակարգված մոտեցմանն անցնելու դեռ երկար ճանապարհ կա: Այդուհանդերձ, ՈԱ պրակտիկան ավելի առաջ է, քան պաշտոնական կանոնակարգերը: Օրինական/նորմատիվ ակտեր գոյություն ունեն, բայց դրանց կիրառման լավագույն փորձի օրինակներ դեռևս դուրս չեն բերվել: Ճանաչման և որակի գնահատման կապը պետք է ամրապնդել: ՏԱԿ որակավորումների ճանաչման հետ կապված դժվարությունները մի կողմից ազգային յուրահատուկ կանոնակարգերի բացակայության արդյունք են, մյուս կողմից՝ որակի հսկողության համընդհանուր ուղեցույցերի և մոտեցումների բացակայության:

Ինչ պետք է հաշվի առնել.

- ՏԱԿ գործընթացները պետք է համահունչ լինեն թե՛ ուղարկող, թե՛ ընդունող երկրների բարձրագույն կրթության ազգային օրենսդրություններին,
- թե՛ ուղարկող, թե՛ ընդունող երկրների կրթական որակը և չափորոշիչները պետք է առնվազն համադրելի լինեն,
- ՏԱԿ հաստատությունների քաղաքականությունը և ռազմավարությունը պետք է հրապարակվեն,
- որակավորում շնորհող հաստատության տեղեկատվությունը պետք է լինի ճշգրիտ, համահունչ և վստահելի,
- անձնակազմը պետք է ունենա համապատասխան որակավորում, տիրապետի դասավանդման, հետազոտական հմտությունների և այլ մասնագիտական փորձի,
- որակավորում շնորհող հաստատությունը պետք է պատասխանատվություն կրի որակավորման շնորհման համար և պետք է պարզ և թափանցիկ տեղեկատվություն ապահովի դիպլոմի հավելվածում,
- ուսանողների ընդունելությունը պետք է նույնը, կամ համադրելի լինի որակավորում շնորհող հաստատության հետ,
- ՏԱԿ իրականացնող հաստատությունների պարագայում նախընտրելի է համատեղ հավատարմագրման իրականացում, քանզի սա հնարավորություն կընձեռի հաշվի առնել համալսարանների յուրահատկությունները, ինչպես նաև տեղական տարբերությունները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՈԱԱ գործընթացները, մեթոդները և պահանջները
Ներկայացված՝ Վրաստանի Կրթության որակի խթանման ազգային կենտրոնի կողմից
(ԿՈԽԱԿ)

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- ԿՈԽԱԿ-ի կողմից ներկայացված իրավական և կանոնակարգման համատեքստը նմա՞ն է արդյոք այն միջավայրին, որտեղ Դուք գործունեություն եք ծավալում:
- Ըստ Ձեզ, որո՞նք են այն մարտահրավերները, որոնք ի հայտ կգան համատեղ կրթական ծրագրերի ազգային ճանաչման գործընթացում, այն բանից հետո, երբ վերջիններս հավատարմագրում անցնեն ինչպես արտերկրում, այնպես էլ՝ Վրաստանում: Կարո՞ղ եք այնպիսի գործողություններ մտաբերել, որոնք կմեղմեն այս մարտահրավերները:

ԿՈԽԱԿ-ն իր գործունեությունը ծավալում է Վրաստանի կանոնակարգման հենքի վրա:

Բարձրագույն կրթության 49-րդ հոդվածում ասվում է, որ «Համատեղ կրթական ծրագրերը կարող են իրականացվել Վրաստանի կողմից լիազորված բարձրագույն ուսումնական հաստատության/հաստատությունների և օտար օրենսդրությամբ ճանաչված բուհի միջև»:

Ներկայումս ՏԱԿ ծրագրերի ոչ մի չափորոշիչ/չափանիշ սահմանված չէ՝ բացի պետականորեն ճանաչված հավատարմագրման չափորոշիչների: Ուստի, համատեղ ծրագրերը պետք է հավատարմագրում անցնեն ազգային մակարդակում:

Հավատարմագրում

Բարձրագույն կրթության ծրագրային հավատարմագրման 5 չափորոշիչ գոյություն ունի¹³.

- կրթական ծրագրի նպատակը, ուսումնառության վերջնարդյունքները և ծրագրի համապատասխանությունը վերջիններիս,
- մեթոդաբանություն և դասավանդման կազմակերպում, ծրագրի գնահատման համապատասխանությունը,
- ուսանողները և նրանց հետ տարվող անհատական աշխատանքը,
- դասավանդման ռեսուրսների ապահովումը,
- կրթության որակի հետագա զարգացման ներուժը:

2015թ. հունվարի դրությամբ Վրաստանի տարածքում գործող 1,489 հավատարմագրված ծրագրերից, ընդամենը 12 են համատեղ:

Ապագա զարգացումները

ՏԱԿ ծրագրերի մասնաբաժինը հավատարմագրված ծրագրերի շրջանում բավական փոքր է: Այդուհանդերձ, ակնկալվում է, որ օտարերկրյա հավատարմագրում ստացած հաստատություններին պետական ճանաչում կտրվի: Այս գործընթացը կաջակցի և կխթանի անդրասահմանային կրթությունը:

¹³Accreditation Standards and Criteria for Higher Education:
<http://eqe.ge/res/docs/2014120816393520902.pdf>

Ուղարկվող անդրասահմանային բարձրագույն/SU կրթության ՈԱԱ

Գործնական ներոգրյալ օրինակները քննարկելիս՝ մասնակիցները կարող են խորհել հետևյալ ոլորտերի շուրջ: Գործնական օրինակների հետագա վերլուծությունն առաջարկվում է իրականացնել ներոգրյալ առաջադրանքներում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ ՏԱԿ ՈԱԱ մեթոդներ, չափորոշիչներ, չափանիշներ, ցուցիչներ

Ներկայացված՝ Հայաստանի Ամերիկյան Համալսարան (ՀԱՀ), ՈՒԱԱՔ ավագ քոլեջի և համալսարանի հանձնաժողով (ՈՒԱԱՔՀՀ), ԱՄՆ

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարրմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- ՀԱՀ կողմից նկարագրված ՈԱ համակարգերը արդյոք կիրառելի՞ են այն համատեքստում, որտեղ Դուք գործունեություն եք ծավալում: Պարզաբանե՞ք:
- Ինչպիսի՞ մարտահրավերների առջև կկանգնեիք, եթե ընտրեիք ՈՒԱԱՔՀՀ հավատարմագրումը: Կարո՞ղ եք այնպիսի գործողություններ մտաբերել, որոնք կմեղմեն այս մարտահրավերները:

ՀԱՀ հավատարմագրված է **ՈՒԱԱՔ** ավագ քոլեջի և համալսարանի հանձնաժողովի կողմից:

ՈՒԱԱՔՀՀ հավատարմագրումը կամավոր է: Հավատարմագրման գործընթացը նախագծված է.

- ապացույցների մշակույթի կազմավորման,
- ինստիտուցիոնալ բարելավման հանձնառության խթանման,
- ինստիտուցիոնալ ամբողջականության հաստատման,

- հավատարմագրման գործընթացի բարելավմանն ուղղված հետադարձ կապի ապահովման համար:

Չնայած այն հանգամանքին, որ ՌԻԱԱՔՀՀ-ն հաստատության որակի համար սահմանում է մինիմալ չափորոշիչներ, նրա հիմնական ուշադրությունն ուղղված է գերազանց կրթության խթանմանը: Յուրաքանչյուր հաստատություն իրավասու է սահմանել որակի և գերազանցության իր չափանիշները և ապացույցներ ներկայացնելու, որ այն արձանագրել է նման որակ և գերազանցություն:

Հավատարմագրման գործընթաց.

- վերանայման (ինստիտուցիոնալ ինքնավերանայում),
- իրականացված հավատարմագրման չափորոշիչներ,
- հիմնական կենտրոնական ոլորտների վերհանում (ընտրված հաստատության և հավանության արժանացած հավատարմագրողի կողմից),
- արդյունավետության ցուցադրում (ներառյալ այց գնահատվող մասնագիտական հաստատություն),
- հավատարմագրման չափորոշիչներին համապատասխանության ցուցադրում,
- հիմնական հանձնառություններ (վերցված 2013թ. Հավատարմագրման ձեռնարկից),
- կենտրոնացում խորհրդատվության առարկա բարեփոխումների վրա,
- ներքին շրջանառության հաշվետվություններ՝ միտված հետադարձ կապին և բարեփոխումներին,
- հրապարակային հաշվետվություն և թափանցիկություն,
- հրապարակային հայտարարություններ:

Ուսանողների ուսումնառությունն ու հաջողությունն ապահովելու համար, հաստատություններն ունեն հստակ կրթական նպատակներ և ուսումնառության վերջնարդյունքներ: Որպես ուսանողների ձեռքբերումների և հաջողության գնահատման միջոց հաստատություններն հավաքագրում, վերլուծում և մեկնաբանում են տարատեսակ տվյալներ և ուսումնառության վերաբերյալ վստահելի փաստեր: Հաստատությունները աջակցում են բոլոր ուսանողների հաջողությանը և փորձում են հասկանալ և բարելավել այն:

Հաստատությունները, իրենց կրթական բոլոր գործընթացներում առաջնորդվում են որակի բարձր չափորոշիչներով: Նրանք համապատասխան տեղեկատվություն են օգտագործում ուսուցման, ուսումնառության և հաստատության ընդհանուր արդյունավետության բարելավման համար: Ռազմավարական և ներառական պլանավորման միջոցով, հաստատություններն ի ցույց են դնում իրենց կարողությունները, ներկայիս պարտականությունների, ինչպես նաև բարելավման հետագա կարիքների ու հնարավորությունների իրականացման համար:

Ինստիտուցիոնալ ամբողջականություն, կայունություն և հաշվետվողականություն

Հաստատությունները հավաստում են, որ հասարակությունն իրենց է վստահել ԲԿ արժեքների պահպանման և հասարակության բարօրությանը նսպաստելու պատասխանատու դերակատարությունը: Նրանք ներգրավվում են առողջ գործնական հարաբերություններում, ցուցադրում են ինստիտուցիոնալ ամբողջականություն, թափանցիկ գործունեություն են ծավալում և ադապտացվում են փոփոխվող պայմաններին:

Հավատարմագրման չափորոշիչները.

- Չափորոշիչ 1 Ինստիտուցիոնալ նպատակների սահմանում և կրթական նպատակների ապահովում:
- Չափորոշիչ 2 Հիմնական գործառույթների միջոցով կրթական նպատակների իրականացում:
- Չափորոշիչ 3 Որակի և կայունության ապահովման նպատակով ռեսուրսների և կազմակերպական կառույցների զարգացում և կիրառում:
- Չափորոշիչ 4 ՈԱ-ը միտված կազմակերպության ստեղծում, ինստիտուցիոնալ ուսումնառություն և բարելավում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ՝ Տրանսազգային կրթության ՈԱԱ

Ներկայացված՝ Բարձրագույն կրթության ՈԱԳ կողմից, ՄԹ

Հարցադրումներ

Սույն հարցերը հավասարապես վերաբերում են բուհերի և ՈԱԱ լիազոր մարմինների/կազմակերպությունների ներկայացուցիչներին.

- Արդյո՞ք արտահանվող ՏԱ կրթության համար կիրառվող ՄԹ կանոնակարգերը օգտակար կլինեն այն համատեքստում, որտեղ Դուք գործունեություն եք ծավալում: Պարզաբանե՛ք:
- Որո՞նք են այն մարտահրավերները, որոնք կարող են ի հայտ գալ երկիր առ երկիր ՏԱԿ վերանայման մոտեցումների արդյունքում, որոնք խթանվում են ուղարկող երկրի ՈԱԱ լիազոր մարմինների կողմից:
- Ինչպիսի՞ համագործակցություն պետք է հաստատվի ուղարկող և ընդունող երկրների լիազոր մարմինների միջև: Այս քայլով ի՞նչ մարտահրավերներ կարող են մեղմվել: Ինչպիսի՞ դժվարություններ կարող են ի հայտ գալ:

Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունը ներկայացնում է այն ուղիները, որոնց միջոցով ՏԱ կրթությունը վերանայվում է Միացյալ Թագավորությունում:

ՏԱ կրթությունը ՄԹ բարձրագույն կրթության սեկտորի անքակտելի մասն է կազմում: ՄԹ բարձրագույն կրթության ոլորտում ուսանողների 20% որակավորումներ են ստանում երկրից դուրս, իսկ ՄԹ հաստատությունների 75% իրականացնում է ՏԱ կրթություն: Նմանօրինակ կրթության ապահովման համար կարևոր է որակի պահպանումը, ինչը նպաստում է և՛ ՄԹ ՏԱԿ բարձր չափորոշիչների ահապովմանը և՛ կայուն աճին:

ՄԹ-ում ՏԱ կրթությունը յուրաքանչյուր հաստատությունում վերանայվում է ՈԱԳ ինստիտուցիոնալ վերանայման գործընթացի միջոցով: ՄԹ բարձրագույն կրթության որակի կողմնորոշիչ գլուխ B10-ը կենտրոնանում է այլոց հետ հաստատության

համագործակցության ապահովման վրա և ակնկալում է, որ. «Որակավորում շնորհող մարմինները ամբողջական պատասխանատվություն են կրում ուսումնական չափորոշիչների և ուսումնառության հնարավորությունների որակի համար՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է ուսուցումն իրականացվում և ովքեր են դրա մատակարարները: Այլ կազմակերպությունների հետ (ոչ որակավորում շնորհողները) ուսուցում իրականացնելու պայմանավորվածությունները պետք է ապահով իրականացվեն և արդյունավետ կերպով կառավարվեն»: Այս սպասելիքների հետ համատեղ տրվում են մի շարք ցուցիչներ: Ցուցիչները համարվում են ուղենիշ բուհերի համար, իսկ գլուխ B10-ի ցուցիչները հատկապես վերաբերում են ՏԱԿ համագործակցությանը և առողջ բանավեճի պարարտ հող են նախապատրաստում նման համագործակցության մեկնարկի, զարգացման և գնահատման համար:¹⁴

ՈԱ գործակալությունը բուհերի ներպետականորեն իրականացրած վերանայումը լրացնում է արտերկրում իրենց մատակարարած ՏԱ կրթության վերանայմամբ: ՈԱԳ-ը վերանայումն իրականացնում է ըստ երկրների, որի ընթացքում մի երկրում (աշխարհի բազմաթիվ տարածք) կրթության ապահովման օրինակը վերանայվում է միևնույն միջազգային այցի ընթացքում: Սույն համակարգը կիրառվում է ավելի քան 10 տարի:

ՏԱԿ վերանայման գործընթացը նպատակ ունի վեր հանել և լուծել զանազան խնդիրներ, ինչպես նաև խթանել լավագույն փորձը և կրթության մատակարարման գրավչությունը: Այն նաև նպատակ է հետապնդում ուսանողներին և ՄԹ հաստատություններին ապահովագրել այն ռիսկերից, որոնք կարող են ի հայտ գալ արտերկրում գործունեություն ծավալող գործընկերների կողմից իրականացվող վատ որակի կրթության մատակարարման արդյունքում: Այն նաև նպատակ ունի միջազգային հարթակում առավել տեսանելի դարձնել ՄԹ ՈԱ գործընթացները:

Նմանօրինակ վերանայման գործընթացը կարող է հետևյալ կերպ ամբողջացվել. նախ իրականացվում է փաստաթղթային նախնական վերլուծություն՝ հասկանալու, թե որոնք են տարածաշրջանի այն բուհերը, որոնց շրջանում վերանայում է իրականացվելու:

¹⁴All 19 indicators can be found at: www.qaa.ac.uk/assuring-standards-and-quality/the-quality-code/quality-code-part-b

Այդուհանդերձ, վերոգրյալ հաստատություններից ստացվում է իրենց գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն՝ առավել մանրագնին փաստաթղթային վերլուծության համար: Մանրամասն վերլուծությունը և դրան հետևող վերանայումն իրականացվում է փոխգնահատման թիմով, որը կազմավորվում է ՄԹ-ում: ՄԹ հաստատություններ իրականացվելիք այցը կազմակերպվում է հավելյալ տեղեկատվություն ստանալու համար այն կետերի շուրջ, որոնց վերաբերյալ խմբի անդամները կցանկանան պարզաբանումներ ստանալ: Այնուհետ, կազմակերպվում է այցելություն արտերկիր, տեղեկատվություն ստանալու այն կետերի շուրջ, որոնք չեն կարող պարզաբանվել ՄԹ-ում: Վերջում, հաշվետվությունը և քննության առնված դեպքերի օրինակները հրատարակվում են վերանայման արդյունքների հետ մեկտեղ: Սրանք ներառում են խորհրդատվություններ, բայց ոչ պաշտոնական քննադատություն:

2014թ. փետրվարին, ՈԱ գործակալությունն իրականացրեց Միացյալ Արաբական Էմիրություններում ՏԱ կրթության վերանայում, որի ընթացքում ուշադրության կենտրոնում էին ՄԹ հաստատությունները, որոնք այնտեղ մասնաճյուղային կամպուսներ էին հիմնել: Այցելությունների ընթացքում մանրամասն ուսումնասիրվում էր նաև այն, թե ինչպես են մատակարարվում բիզնեսի կառավարման ծրագրերը՝ հատուկ շեշտադրելով Բիզնես կառավարման մագիստրոսական ծրագիրը: 2014թ. աշնանը վերանայում իրականացվեց Տրինիդադում (Կարիբյան տարածք) քննության առնելով հատկապես ՄԹ հեռահար ուսուցման մատակարարումը և այն, թե ինչպես է հեռահար ուսում ստացող ուսանողների փորձը համեմատվում ՄԹ-ում ավանդական ուսում ստացող ուսանողների փորձի հետ:

ՏԱԿ վերանայման գործընթացի մի շարք հիմնաքարային կետերը ներառում են.

- ինչպես կապել իրականացված բացահայտումները ՄԹ ինստիտուցիոնալ վերանայման գործընթացի հետ,
- ինչպես աշխատանք ծավալել և միևնույն ժամանակ հաշվի նստել տեղական մշակութային և կանոնակարգային պահանջների հետ և ինչպես պահպանել ճկուն մի գործընթաց, որը կճանաչի և հաշվի կնստի այս տարբերությունների հետ,
- ինչպես պահպանել ՄԹ ՏԱ կրթության վերաբերյալ օգտակար տեղեկատվական բազա, որը կվերաբերի կրթության մատակարարման տեսակների

բազմազանությանը և ընդհանուր սահմանումներ մշակելու մարտահրավերներին:

Գործողություն՝ անդրսահմանային/տրանսազգային կրթության ՈԱ միջոցառումները իրազեկությունների շրջանակի համատեքստում

Թրեյնինգի շրջանակը

Ուսումնասիրել տարբեր ազգային համատեքստերում գոյություն ունեցող կանոնակարգերը և որոշել, թե ինչպիսի բարեփոխումներ պետք է իրականացվեն անդրսահմանային բարձրագույն/տրանսազգային կրթությունն իրականությանն առավել հարմարեցնելու համար:

Խմբային աշխատանք

Մասնակիցներն աշխատում են փոքր խմբերում (3-4), այնուհետ արդյունքները ներկայացվում են բոլոր մասնակիցներին: Յուրաքանչյուր խումբ զեկուցող է առաջադրում:

Առաջադրանք 1

Քննարկե՛ք այն, թե ներկայումս ինչպիսի կանոնակարգեր են գործում Ձեր համատեքստում: Որոշե՛ք, թե նկարագրված կանոնակարգերից որոնք են կարող կիրառվել Հայաստանի, Վրաստանի, ԱՄՆ և ՄԹ օրինակներում: Ապագա զարգացումների մասին մտորելիս՝ ի՞նչ կանոնակարգ կնախընտրեիք Ձեր համատեքստում: Կարո՞ղ եք Ձեր պատասխանը հիմնավորել վերոգրյալ օրինակների հետ համեատառությամբ:

Բուհերն ու որակի արտաքին ապահովման լիազոր մարմինները (ՈԱԱԼՄ) համատեղ են աշխատում այս գործընթացի վրա:

Կանոնակարգի մոտեցումը	Իմաստը
Քանակապես սակավ կանոնակարգեր, կամ	Օրատերկրյա մատակարարներին պարտադրվող քանակապես սակավ կանոնակարգեր, կամ դրանց ի սպառ

դրանց ի սպառ բացակայություն (laissez-faire)	բացակայություն: Օրատերկրյա մատակարարներին տրվում է գործունեության ազատություն:
Լիբերալ	Օրատերկրյա մատակարարները պետք է գրանցված լինեն և/կամ ունենան ուղարկող երկրի հավատարմագրում:
Միջին մակարդակ	Քրանցում և/կամ համաձայնություն կամ լիազորություն տրված կոմպետենտ տեղական կամ ընդունող լիազոր մարմնի կողմից:
Սահմանափակող կանոնակարգեր	Օրատերկրյա մատակարարները պարտավոր են ընդունող երկրի հավատարմագրում ստանալ:

	Ներկայիս մոտեցում	Ապագա մոտեցում
Մասնակիցների համատեքստ 1		
Մասնակիցների համատեքստ 2		
Մասնակիցների համատեքստ 3		
Հայաստան		
Վրաստան		
ԱՄՆ (ՈՒԱԱՔՀՀ)		
ՄԹ		

Առաջադրանք 2

Սույն առաջադրանքը կարելի է տարանջատել երկու մասի՝ բուհերի և ՈԱԱԼՄ միջև: Նրանցից յուրաքանչյուրն աշխատանք կձևավալի հետևյալ ուղղություններով.

Բուհեր. ուսումնասիրե՛ք վերոգրյալ գործնական օրինակները և իմի բերեք բոլոր այն հիմնարար պահանջները, որոնց ստիպված կլինեք հետևել Ձեր հաստատության մակարդակում ՏԱ կրթության ապագա զարգացումները դիտարկելիս: Ի՞նչը պետք է ուղղորդի ապագա ՏԱԿ միջոցառումների զարգացումը:

ՈԱԱԼՄ. ուսումնասիրե՛ք վերոգրյալ գործնական օրինակները և իմի բերեք բոլոր այն հիմնարար կետերը, որոնք կցանկանաք պահպանել Ձեր համատեքստում: Ո՞ր ոլորտներն են արժանի կրկնօրինակման Ձեր ներկայացրած ՈԱԱ համակարգերում:

Հիմնարար կետեր

Առաջադրանք 3

Սույն առաջադրանքը կարելի է տարանջատել երկու մասի՝ բուհերի և ՈԱԱԼՄ միջև: Նրանցից յուրաքանչյուրն աշխատանք կձևավալի հետևյալ ուղղություններով.

Բուհեր. որոշե՛ք, թե արդյոք Ձեր հաստատությունը համապատասխանում է վերոգրյալ պահանջներին: Արդյոք առկա՞ են այնպիսի զարգացումներ, որոնց պետք է ձեռնամուխ լինել մոտ ապագայում՝ վերոհիշյալ պահանջներին Ձեր հաստատության համապատասխանությունն ապահովելու համար:

ՈԱԱԼՄ. որոշե՛ք, թե արդյոք առկա՞ են այնպիսի ոլորտներ, որոնք կնախընտրեիք որդեգրել/ներդնել Ձեր մեթոդանաբության մեջ: Արդյո՞ք կունենայիք լավագույն փորձի օրինակներ, որպեսզի այն փոխանակեիք ՈԱԱԿ, ԿՈԽԱԿ, ՌԻԱԱՔՀՀ և ՈԱԳ համապատասխան լիազոր մարմինների հետ՝ խթանելու վերջիններիս մոտեցումը անդրսահմանային բարձրագույն/տրանսազգային կրթությանը:

Զարգացումներ, ոլորտներ որոնք պետք է որդեգրվեն/ներդրվեն	Փոխանակում

--	--

Գործողություն՝ Ինչպե՞ս են բուհերն արձագանքում անդրսահմանային/տրանսազգային կրթության արտաքին պահանջներին

Թեյնինգի շրջանակը

Քննարկել այն օգուտներն ու մարտահրավերները, որոնք ի հայտ են գալիս տրանսազգային կրթության զարգացման խթանման/աջակցության նկատառումներով բուհերին պարտադրվող արտաքին պահանջների արդյունքում:

Խմբային աշխատանք

Մասնակիցներն աշխատում են փոքր խմբերում (3-4), այնուհետ արդյունքները ներկայացվում են բոլոր մասնակիցներին: Յուրաքանչյուր խումբ զեկուցող է առաջադրում:

Առաջադրանք 1

Ստորև ներկայացրե՛ք այն օգուտներն ու մարտահրավերները, որոնք ի հայտ են գալիս տրանսազգային կրթության իրականացման նկատառումներով բուհերին պարտադրվող արտաքին պահանջների արդյունքում: Ստացված ցանկը համեմատե՛ք ՏԵՄՊՈՒՍ ծրագրի գործընկերների կազմած ցանկի հետ (Տե՛ս հավելված, էջ **page 92**):

Օգուտներ	Մարտահրավերներ
----------	----------------

--	--

Առաջադրանք 2

Օգտագործելով վերոգրյալ առաջադրանքում վերհանված 5 ոլորտները/գործողությունները՝ որոշե՛ք, թե արտաքին պահանջներն ինչպես պետք է ձևակերպվեն հիշյալ ոլորտները հասցեագրելու համար:

Արտաքին պահանջներն ինչպե՞ս պետք է ձևակերպվեն վերոգրյալ ոլորտները հասցեագրելու համար:	
1	

2	
3	
4	
5	

Գործողություն՝ ՏԱԿ իրազեկության շրջանակ: Ի՞նչ կարող է/պետք է պահպանվի ՏԱԿ մեթոդաբանության համար:

Թրեյնինգի շրջանակը

Ուսումնասիրել ՏԱԿ իրազեկության համապատասխան շրջանակներ (Տե՛ս համեմատական պատկերը ստորև) և որոշել, թե ինչը պետք է պահպանվի ՏԱԿ իրազեկության շրջանակը մշակելիս:

Խմբային աշխատանք

Մասնակիցներն աշխատում են փոքր խմբերում (3-4), այնուհետ արդյունքները ներկայացվում են բոլոր մասնակիցներին: Յուրաքանչյուր խումբ զեկուցող է առաջադրում:

Առաջադրանք 1

Ձեր խմբերում քննարկե՛ք SU կրթությանը վերաբերող որևէ փաստաթուղթ: Սույն շրջանակում զետեղված ցանկից որոշե՛ք, թե ինչը պետք է պահպանվի (թեկուզ և վերաշարադրված ձևով) և ինչից պետք է ազատվել, քանզի այն կա՛մ հակասում է ազգային համատեքստին, կա՛մ Ձեր հաստատության ընդհանուր նպատակներին:

Սույն առաջադրանքի համար կարող են օգտագործվել հետևյալ փաստաթղթերը.

- ՅՈՒՆԵՍԿՕ, Անդրսահմանային բարձրագույն կրթության որակի ապահովման ուղեցույցեր,
- ԵԽ/ՅՈՒՆԵՍԿՕ ՏԱԿ լավագույն փորձի վերանայված կոդեքս (2007)
- ՈԱԳ, ՄԹ բարձրագույն կրթության որակի կոդեքս, գլուխ *B10* ցուցիչներ

Ձեր գաղափարները զետեղե՛ք ստորև տրված աղյուսակում, այնուհետ դրանք համեմատե՛ք այլ խմբերի գաղափարների հետ:

Իրազեկության շրջանակ	
Պահպանել	Ազատվել

--	--

Վերոգրյալ առաջադրանքը դյուրին դարձնելու համար՝ ստորև ներկայացված է ՏԱԿ երեք հղման կետերի համեմատական պատկերը.

1. ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) ուղեցույցներ
2. ԵԽ կողերս
3. ՄԹ բարձրագույն կրթության որակի կողերս (այսուհետ՝ Որակի Կողերս)

	ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ ուղեցույցներ	ԵԽ կողերս	Որակի Կողերս, Գլուխ B10:
Գրանցում և լիցենզավորում	<ul style="list-style-type: none"> • հիմնել գրանցման և լիցենզավորման ամբողջական, արդար և թափանցիկ համակարգ 		
ՈԱ և հավատարմագրում	<ul style="list-style-type: none"> • կարողությունների մշակում անդրսահմանային բարձրագույն կրթության հուսալի ՈԱ համար 		
Տեղեկատվություն	<ul style="list-style-type: none"> • ապահովել ուղարկող և ընդունող երկրների ՈԱ 	<ul style="list-style-type: none"> • անհրաժեշտ է որակավորումների տեսակի 	<ul style="list-style-type: none"> • հսկողություն սահմանել ՏԱԿ իրականացման

	<p>մարմինների համագործակցություն</p> <ul style="list-style-type: none"> • ապահովել ճշգրիտ տեղեկատվություն գրանցման/լիցենզավորման/ ՈԱ և հավատարմագրման չափորոշիչների և չափանիշների վերաբերյալ 	<p>վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել SUԿ ուսանողներին</p>	<p>վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության վրա</p> <ul style="list-style-type: none"> • ծրագրերի կարգավիճակը պետք է պարզ լինի ուսանողների համար • ուսուցման հնարավորությունների տրամադրման բոլոր միջոցառումների վերաբերյալ պետք է համապատասխան գրառումներ պահվեն
<p>Համադրելի որակ (սկզբունք)</p>	<ul style="list-style-type: none"> • ծրագրերը պետք է համադրելի որակի լինեն և հաշվի առնեն ընդունող երկրի մշակութային և լեզվական առանձնահատկությունները 	<ul style="list-style-type: none"> • համադրելի չափորոշիչ կրթական որակ • SUԿ-ը պետք է խթանի մշակույթի և սովորույթների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերում և 	<ul style="list-style-type: none"> • բուհերը պատասխանատու են կրթական չափորոշիչների (չափորոշիչների համարժեքների) պատշաճ պահպանման համար

		տեղեկացվածություն	<ul style="list-style-type: none"> • բուհերը հաստատում են մոդուլներ և ծրագրեր, աջակցում են իրականացնողներին • բուհերը հավաստիանում են, որ ուսանողները կարող են ավարտել ծրագրերը
--	--	-------------------	---

<p>Ուսանողների ընդունում, ուսուցման և դասավանդման պայմանները, քննությունը, ծանրաբեռնվածությունը</p>		<ul style="list-style-type: none"> • ուսանողների ընդունելությունը, ուսուցման և դասավանդման գործընթացները և քննությանը ներկայացվող պահանջները պետք է համադրելի որակի լինեն • ուսումնական ծանրաբեռնվածությունը պետք է համադրելի լինի 	<ul style="list-style-type: none"> • որակավորում շնորհող մարմինները պետք է պարզաբանեն, թե որ կազմակերպություններն են պատասխանատու ուսանողներին այլ հաստատությունների կողմից իրականացվող մոդուլներին և ծրագրերին ընդունելու և գրանցելու համար
---	--	--	---

			<ul style="list-style-type: none"> • որակավորում շնորհող մարմինները պատասխանատու են ատեստավորման համար և պետք է հավաստեն, որ ուսուցման համար իրականացվող միջոցառումները համադրելի են հղման կետերի հետ • պետք է հավաստեն, որ ընդունող երկիրը հետևում է գնահատմանը ներկայացվող պահանջներին • պատասխանատու է արտաքին փորձագետի համար /examiner/
Ֆակուլտետի որակ	<ul style="list-style-type: none"> • ապահովել ֆակուլտետի 	<ul style="list-style-type: none"> • անձնակազմի 	

	որակը և նրանց աշխատանքային պայմանները	բարձրակարգ անդամներ	
ՈՆԱ	<ul style="list-style-type: none"> մշակել և պահպանել ՈՆԱ համակարգեր 		
Քաղաքականություն, առաքելություն, վարչարարություն և ֆինանսական կառավարում		<ul style="list-style-type: none"> SUԿ մատակարարների քաղաքականությունը և առաքելությունը պետք է հրապարակային դարձնել 	<ul style="list-style-type: none"> Որդեգրել SU կրթության ռազմավարական մոտեցում և բավարար միջոցներ հատկացնել որդեգրել վարչարարության համապատասխան միջոցառումներ develop written and binding agreement for TNE agreements with partners legally entitled to do so զգոնություն և ռիսկերի գնահատման համապատասխան

			<p>գործընթացներ,</p> <ul style="list-style-type: none"> • գործընթացներ, որոնք կերաշխավորեն ֆինանսական անձտություններից և շահերի բապումից
--	--	--	---

Հավելյալ աղբյուրներ

ՅՈՒՆԵՍԿՕ

Անդրսահմանային բարձրագույն կրթության որակի ապահովման ուղեցույցեր
<http://unesdoc.unesco.org/images/0014/001433/143349e.pdf>

ՅՈՒՆԵՍԿՕ

Անդրսահմանային բարձրագույն կրթության կարգավորման գործիքակազմ
www2.unescobkk.org/elib/publications/087/index.htm

ՅՈՒՆԵՍԿՕ-ԱԽՈՑ

Անդրսահմանային կրթության որակի կարգավորում
http://www.apqn.org/files/virtual_library/other_reports/unesco-apqn_toolkit-reprint.pdf

ԵՆ/ՅՈՒՆԵՍԿՕ

ՏԱԿ լավագույն փորձի վերանայված կոդեքս (2007)
www.enic-naric.net/documents/REVISED_CODE_OF_GOOD_PRACTICE_TNE.pdf

Հետազոտողների թիմ ԲԿԿ-ի գլխավորությամբ

ԵՄ տարածքում անդրսահմանային կրթության մատակարարումը
www.academia.edu/4143137/Delivering_Education_across_Borders_in_the_European_Union

ՈԱԳ

ՄԹ բարձրագույն կրթության որակի կոդեքս, Գլուխ B10
www.qaa.ac.uk/assuring-standards-and-quality/the-quality-code/quality-code-part-b

ՈԱԳ

Ամրապնդելով ՄԹ տրասպարանային կրթության ՈԱ
www.qaa.ac.uk/en/Publications/Documents/TNE-consultation-report-May14.pdf

ՈւԱՍՔ ավագ քոլեջ և համալսարանական հանձնաժողով

Հավատարմագրման ձեռնարկ
www.wascsenior.org/resources/handbook-accreditation-2013

ՀՈԱՄԽ (Դուբայ)

ՈԱ ձեռնարկ
www.khda.gov.ae/CMS/WebParts/TextEditor/Documents/UQAIB_EN.pdf

ԿՄՄԳՏՆ (Ճապոնիա)

Ուղեցույց Չինաստանի, Ճապոնիայի և Կորեայի համալսարանների ՈԱ փոխանակման և համագործակցության
www.mext.go.jp/a_menu/koutou/shitu/1303468.htm

Եզրափակում՝ գործողությունների ծրագիր

Գործողությունների ծրագիր

Որպես եզրափակիչ դրույթ, բոլոր մասնակիցներին առաջարկվում է իմի բերել ստացված գիտելիքը և փորձառությունը գործողությունների պլանի մշակման համար՝ ուղղված ՈԱ համակարգերի մշակմանն այն համատեքստում, որտեղ իրենք գործունեություն են ծավալում:

Գործողություն՝ ՈԱ պլանների մշակում

Թեյնինգի շրջանակը

Քննարկել, թե ՏՄԿ ՈԱ որ ոլորտները հաստատությունների և լիազոր մարմինների կողմից հետագա զարգացման կարիք ունեն՝ հղման կետերի հետ համապատասխանության և ՏԱ կրթության պատշաճ մատակարարման/ճանաչման գործընթացի դյուրինացման նպատակով: Մշակել գործողությունների պլան:

Խմբային աշխատանք

Մասնակիցներն աշխատում են փոքր խմբերում (3-4), այնուհետ արդյունքները ներկայացվում են բոլոր մասնակիցներին: Յուրաքանչյուր խումբ զեկուցող է առաջադրում:

Ցանկալի է, որպեսզի մասնակիցները ներկայացնեն միևնույն հաստատությունը/կազմակերպությունը:

Առաջադրանք 1

Վերցված ԵՈՒԶ-ից ըստ ՈԱԵԱ. վե՛ր հանք այն չափորոշիչները, որոնց տվյալ հաստատությունը/կազմակերպությունը լիովին համահունչ է, ինչպես նաև առանձնացրե՛ք նրանք, որոնց ուղղությամբ հետագա գործունեություն է անհրաժեշտ ծավալել:

Ուղեցույցներ, որոնք համահունչ են և առկա է լավագույն փորձ	Ուղեցույցներ, որոնց ուղղությամբ հետագա աշխատանք է անհրաժեշտ
--	---

--	--

Առաջադրանք 2

ՅՈՒՆԵՍԿՕ/SՀԶԿ ուղեցույցից վե՛ր հանել այն չափորոշիչները, որոնց տվյալ հաստատությունը/կազմակերպությունը լիովին համահունչ է, ինչպես նաև առանձնացնել նրանք, որոնց ուղղությամբ հետագա գործունեություն է անհրաժեշտ ծավալել:

Ուղեցույցներ, որոնք համահունչ են և առկա է լավագույն փորձ	Ուղեցույցներ, որոնց ուղղությամբ հետագա աշխատանք է անհրաժեշտ

--	--

Առաջադրանք 3

ՄԹ բարձրագույն կրթության որակի կողեքս, գլուխ B10. վե՛ր հանել այն ցուցիչները, որոնք տվյալ հաստատությունը/կազմակերպությունը արձանագրել է, ինչպես նաև առանձնացնել նրանք, որոնց ուղղությամբ հետագա գործունեություն է անհրաժեշտ ծավալել:

Ուղեցույցներ, որոնք համահունչ են և առկա է լավագույն փորձ	Ուղեցույցներ, որոնց ուղղությամբ հետագա աշխատանք է անհրաժեշտ
--	---

--	--

--	--

Առաջադրանք 4

Վերոգրյալ առաջադրանքներից ստացված արդյունքներն ընդհանրացնելով՝ առանձնացնել ՈԱ առվագն 5 գործողություն, որոնք կարող են կիրառվել՝ նշելով դրանց իրականացման վերջնաժամկետները: Վերոգրյալ գործողությունների օրինակ կարող են դիտարկվել այն ուղիները, որոնք միտված են հաստատության որակի խթանմանը որպես ընդհանրական նպատակ, կամ, ավելի կոնկրետ, պարարտ հող նախապատրաստելը տրանսագգային ձեռնարկումներն առավել հզորացնելու համար: Ներոգրյալ աղյուսակն օգտագործելով՝ մատնանշե՛ք գործողությունները (Աղյուսակ 1) և մանրամասնե՛ք դրանք (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ում գետեղվելիք մանրամասները ներառում են.

- Վերնագրերը ներառում են ինչպես լավագույն փորձի օրինակներ, այնպես էլ բարելավման կարիք ունեցող ոլորտներ: Եթե առկա են լավագույն փորձի օրինակներ, գործողությունների պլանը հնարավորություն կընձեռի ընդհանուր հայտարարի գալ առ այն, թե ինչպես պահպանել և տարածել այդ փորձը: Եթե դուրս էք բերել բարելավման կարիք ունեցող ոլորտներ, գործողությունների պլանը ի ցույց կդնի, թե ինչպես վարվել նման խնդիրների պարագայում:
- Գործողությունների իրականացման համար ժամկետների մատնանշումը հույժ կարևոր է, քանզի այն հնարավորություն է ընձեռում վերջնաժամկետներ ամրագրել:

- Պատասխանատու անձանց (ոչ թե հանձնաժողով, այլ տվյալ հաստատության որևէ պաշտոն) մատնանշումը, ինչպես նաև այն, թե ում են իրենք հաշվետու և ով է մշտադիտարկում իրենց գործողությունները նույնպես կարևոր է, քանզի հնարավորություն է ընձեռում դերերի հստակ բաժանում իրականացնել:
- Հաջողության ցուցիչները պետք է ամրագրվեն հենց սկզբից (ինչպե՞ս եք հավաստելու, որ նշված գործողություններն իրականացվել են): Ինչպիսի՞ կառուցակարգեր են գործում, կամ ինչպիսի՞ք պետք է գործադրվեն, որպեսզի նման չափումները լինեն հավաստի և հուսալի:
- Շահակիցների լայնածավալ ներգրավվածությունը պետք է հիմք հանդիսանա գործողությունների ծրագրի մշակման համար:

Աղյուսակ 1

Գործողություններ՝ մանրամասների ներառմամբ	Վերջնաժամկետ
1	
2	
3	
4	
5	

Աղյուսակ 2

<p>Նպատակ</p> <p>Ինչի՞ էք փորձում հասնել:</p>	<p>Ձեռնարկվելիք գործողություններ</p> <p>Ինչպե՞ս էք փորձում նպատակին հասնել:</p>	<p>Հիմնավորումը</p> <p>Ինչու՞ էք փորձում այդ նպատակին հասնել:</p> <p>Ինչու՞ է դա հենց հիմակարևոր:</p>	<p>Ում կողմից է իրականացվելու</p> <p>Ո՞վ է պատասխանատու կիրառության համար:</p>	<p>Ավարտի ամսաթիվը</p> <p>Ե՞րբ այն կավարտ էք:</p>	<p>Հաջողության և ցուցիչները</p> <p>Ինչպե՞ս էք հասկանալու այն գործու՞մ է, թե՛ ոչ:</p>	<p>Ում է զեկուցվելու</p> <p>Ո՞վ է մշտադիտարկելու այն:</p>	<p>Ապացույց</p> <p>Ի՞նչ փաստեր էք հավաքագրելու կիրառության և մշտադիտարկման ընթացքում:</p>	<p>Առաջընթաց</p> <p>Այս սյունակն օգտագործեք առաջընթացի հաշվետվության և/կամ ցանկացած փոփոխություն և արձանագրելու համար:</p>
Լավագույն փորձ								
<p>Ըստ անհրաժեշտության կարող էք սողեր ավելացնել:</p>								
Բարելավման ոլորտներ								
<p>Ըստ անհրաժեշտու</p>								

թյան կարող էք սողեր ավելացնել:								

Հավելված

Իրականացված առաջադրանքների օրինակները տրամադրվել են նախագծի մասնակիցների կողմից Լիոնում (ապրիլ 2004, Ֆրանսիա) և Գլոստերում (հունիս 2014, ՄԹ) կազմակերպված սեմինարների ընթացքում:

Օրինակ՝ փոխըմբռնման ձեռքբերում, ընդհանուր եզրութաբանության պարզաբանում

Որակի ապահովում

Մշակել և ներդնել համապատասխան կարողություններ և գործիքակազմ՝ ապահովելու բուհերի ներքին և արտաքին գործընթացների որակը:

Որակի խթանում

Որակի բարելավմանն ուղղված կառավարման, մշտադիտարկման և հետադարձ կապի հավաքագրման ֆորմալ և ոչ-ֆորմալ համակարգեր և կառուցակարգեր:

Որակի մշակույթ

Ոչ-ֆորմալ ուղիներով ապահովել անձնակազմի և շահակիցների մասնակցությունը ՈԱ գործընթացներին և նրանց տեղեկացվածությունը մարտահրավերների վերաբերյալ:

Որակի ներքին ապահովում (ՈՆԱ)

ՈԱ վերաբերյալ հաստատության ներսում իրականացված գործընթացներն ու հաղորդակցությունը

Որակի արտաքին ապահովում (ՈԱԱ)

- ուղղորդում է ՈՆԱ կառուցակարգերը,
- ի ցույց է դնում շահակիցներին, թե բուհն ինչպես է վերաբերում որակին,
- ապահովում է որակ:

Ուսանողների ներգրավվածություն

Ուսանողների ներգրավվածությունը բուհի կառավարման և ՈԱ գործընթացներում և ուսումնական ծրագրերում:

Հավատարմագրում

Գործընթաց, որով (ոչ-)պետական կամ մասնավոր կազմակերպությունը գնահատում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ կոնկրետ կրթական ծրագրի որակը՝ որոշակի նախասահմանված նվազագույն չափանիշներին կամ չափորոշիչներին դրա համապատասխանությունը պաշտոնապես ճանաչելու նպատակով:

Գնահատում

Համակարգված և քննադատական վերլուծության գործընթաց (որն իրականացվում է ներքին կամ արտաքին գործընթացներով), ինչը հանգեցնում է բուհի կամ ուսումնական ծրագրի վերաբերյալ դատողությունների և/կամ խորհրդատվության:

Չափորոշիչ

Ձևակերպումներ (որակական կամ քանակական), որոնք վերաբերում են պահանջների և պայմանների որոշակի ակնկալվող մակարդակներին, որոնց համեմատությամբ պետք է գնահատվի և ձեռք բերվի մասնագիտական հաստատության կամ կրթական ծրագրերի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ արտոնագիր ստանալու համար:

Ուղենիշներ

Խորհրդատվություն առ այն, թե ինչը պետք է մշտադիտարկվի և թե ինչպես պետք է իրականացվի որակի մշտադիտարկումը:

Սպասելիքներ

Ձևակերպումներ, որոնք կանխորոշում են այն, թե բուհերն ինչ պետք է ակնկալեն իրենք իրենցից և միմյանցից և այն, թե ինչ կարող է բուհերից ակնկալել հանրությունը:

Ցուցիչներ

Գործառնական փոփոխականներ, որոնք հղում են կատարում բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ կրթական ծրագրերի որոշակի չափերի բնութագրիչներին, որոնց հիման վրա կարելի է հավաքել ապացույցներ, որոնք հավաստում են, թե արդյոք չափորոշիչները պահպանվում են թե ոչ:

Օրինակ՝ ներկայացված հաստատություններում/կազմակերպություններում բարելավման կարիք ունեցող ՈԱ ոլորտները

Նշե՛ք ՈՆԱ լավագույն փորձի ներկայիս ոլորտները և մատնանշե՛ք նրանք, որոնք բարելավման կարիք ունեն: Խորհե՛ք այն գործողությունների շուրջ, որոնք կարող են համընդհանուր ուժերով իրականացվել վերոգրյալ ոլորտները բարելավելու համար:

Լավագույն փորձի օրինակներ՝

- ծրագրերի ներքին գնահատում. առցանց հարցաթերթիկներով իրականացված գաղտնի հարցախույզ դասախոսների ու ուսանողների շրջանում, որն իրականացվում է ամեն կիսամյակ,
- շահագրգիռ կողմերի հարցախույզ և մասնակցություն. տարեկան հարցախույզեր առ այն, թե որոնք են շրջանավարտների աշխատանքի նկարագրերը, աշխատավարձի չափը և արդյոք ստացված որակավորումները առնչվում են իրականացված աշխատանքի հետ,
- շրջանավարտների մասնակցությունն ուսումնական ծրագրերի խորհրդատվական մարմնի ինքնագնահատման գործընթացներում. յուրաքանչյուր ուսումնական ծրագրի ղեկավար իր ծրագիրը գնահատում է տարին մեկ անգամ՝ հիմք ընդունելով օրինակ այն ձևաթուղթը, որը ներկայացվել է ազգային գործակալության կողմից,
- ՈԱ ձեռնարկ և որակի մշակույթ՝ մշակված ինստիտուցիոնալ մակարդակում, որի մշակման գործընթացում ազգային մակարդակում իրականացվել է բենչմարք՝ գործընթացների մշակման և ներդրման տարբեր ուղենիշների հետ համեմատությամբ,
- ֆակուլտետի, հետազոտողների, անձնակազմի/կառավարող անձնակազմի, նյութատեխնիկական բազայի և ազգային և միջազգային ուսանողների

մատուցվող աջակցության ծառայությունների, հավատարմագրման փորձագետների և ՈԱ անձնակազմի դասավանդման և հետազոտական որակի վերաբերյալ որակավորման բարձրացման գնահատում:

Բարելավման կարիք ունեցող ոլորտները.

- տվյալների հավաքագրում. իրականացնել տվյալների հավաքագրում և վերլուծություն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ,
- փոխգնահատման գործընթաց (ներառյալ անկախ փոխգնահատում),
- հավասարություն և բազմազանություն. օրինակ՝ զանազանակերպել համալսարանի աշխարհագրությունը՝ հատկապես խրախուսելով օտարազգի ուսանողների կամ տարբեր ծագում ունեցող տեղացի ուսանողների ներգրավվածությունը ուսանողական մարմիններում,
- համագործակցություն հայաստանյան և վրաստանյան համալսարանների միջև՝ ուղղված ծրագրերի գնահատմանն ու փորձագետների փոխանակմանը,
- միջազգային ծրագրերի գնահատում (օր.՝ համատեղ որակավորումներ) միջազգային փորձագետների և միջազգային հավատարմագրման միջոցով,
- հաղորդակցություն և տեղեկատվություն բուհի բոլոր մակարդակներում,
- զարգացնել հարաբերությունները աշխատաշուկայի հետ և մասնագիտացնել ծրագրերը,
- մշակել հմտությունների մանրամասն ուղեցույց (համաձայն մասնագիտացումների) դասախոսական կազմի աշխատանքի ընդունման համար:

Օրինակներ՝ գործողությունների ծրագիր՝ միտված համատեղ ջանքերով ՈԱ Բարելավմանը	
Արդյունք	Ձեռնարկվելիք գործողություններ
Մշակել ըստ առարկաների դասակարգված միջազգային փորձագետների բազա (օր.՝ բժշկություն,	<ul style="list-style-type: none"> • ըստ որակավորումների ազգային շրջանակի առանձնացնել համապատասխան ոլորտները, • ընտրել փորձագետներին (ամբողջական գործընթացը ներառում է՝ չափանիշների սահմանում, հավաքագրում, ընտրություն), • թրեյնինգ մոդուլի ստեղծում,

ճարտարագիտություն)	<ul style="list-style-type: none"> • փորձագետների թրեյնինգ, • գործընթացի փորձարկում, • բարելավում՝ հիմնված գործընթացի փորձարկման արդյունքների վրա,
Մշակել միջազգային հավատարմագրման գործակալությունների ցանց	<ul style="list-style-type: none"> • հրավիրել նախագծի համապատասխան փորձագետների, • համատեղ աշխատել փորձնական նախագծերի վրա, • իրականացնել փորձագետների փոխանակում:

Օրինակ՝ արտաքին պահանջներ և գործընկեր հաստատությունների արձագանքը

Ներկայացնել այն օգուտներն ու մարտահրավերները, որոնք ՈԱԱ պահանջները ներկայացնում են բուհերին: Մշակել խորհրդատվություններ, որոնք ՈԱԱ-ի ուղղությամբ աջակցություն կցուցաբերեն հաստատություններին:

ՈԱԱ ունեցած խոշոր օգուտները ՈՆԱ վրա.

- խթանում է ՈՆԱ կանոնակարգվածությունը և ինքնագնատումը,
- խթանում է ՈՆԱ պարբերական կառուցակարգերի իրականացումն ու բարելավումը,
- խրախուսում է բուհերի միջև լավագույն փորձի փոխանակումը (արտաքին տեսակետ),
- անձնակազմի մասնակցություն այլ բուհերի ՈԱԱ գործընթացներում,
- արտաքին փորձագետներից խորհրդատվության ստացում,
- առավել թափանցիկություն և տեղեկատվություն բոլոր շահակիցների և հասարակության համար,
- բուհը և իր ՈՆԱ կճանաչվեն որպես որակյալ հաստատություն,
- թղթաբանություն, որն իր հետ բերում է թափանցիկություն և վերլուծություն,
- ՈԱԱ աջակցում է ՈՆԱ հավաքագրել և վերլուծել համապատասխան տվյալներ,
- համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին,

- փոխազնահատում, հայացք կողքից (արտաքին և ներքին) և ինքնազնահատման զեկույց:

Օրինակ՝ ՈԱԱ աջակցության խորհրդատվություն՝ ունենալով վեր հանված մարտահրավերներ	
Մարտահրավերներ	Խորհրդատվություն
Նոր ծրագրերը ի սկզբանե հավատարմագրված չեն	<ul style="list-style-type: none"> • մեկնարկից ի վեր հավատարմագրեք նոր ծրագրերը և առաջին շրջանավարտների շրջափուլի ավարտին այն կրկին վերանայեք
ՈԱԱ կապը ֆինանսավորման հետ խոչընդոտում է նորարարությանը	<ul style="list-style-type: none"> • ֆինանսավորումը պետք է իրականացվի ըստ առաջնահերթությունների, որոնք սահմանվում են պետության կողմից
ՈՆԱ անձնակազմը պետք է ուսուցանվի	<ul style="list-style-type: none"> • ՈԱԱ մարմինները պետք է ուղորդում և թրեյնինգներ իրականացնեն, • ՈԱ գործակալությունների հետ պարբերական սեմինարների անցկացումը կարող է հավելյալ աջակցություն ապահովել
Դժվարություններ, որոնք ի հայտ են գալիս ՈԱԱ և ՈՆԱ հաղորդակցության ընթացքում	<ul style="list-style-type: none"> • ՈԱԱ մարմինները պետք է պարբերաբար հաղորդակցվեն հավատարմագրման պաշտոնական գործընթացից դուրս ևս
ՈԱԱ խորհրդատվությունները կարող են դժվարություններ ստեղծել տեղական համատեքստում ներդրվելու դիտանկյունից	<ul style="list-style-type: none"> • օգտագործել ՈԱ գործակալությունների ազգային հարցաթերթիկները՝ առավել լավ հասկանալու տեղական դաշտը և տատանումները
Ոչ բոլոր շահեկիցներն են ներգրավված գործընթացում	<ul style="list-style-type: none"> • մշակել վերապատրաստումների փաթեթ, որում ներառված կլինի մասնագետներից և շահակիցներից ետադարձ կապ ստանալը

<p>Ոչ միշտ է հետադարձ կապ իրականացվում և միշտ չեն համապատասխան գործողություններ ձեռնարկվում</p>	<ul style="list-style-type: none"> մշտադիտարկել համալսարանների կողմից ներկայացված գործողությունների ծրագրերը և ստուգել, թե արդյոք փորձագետների զեկույցում տրված խորհրդատվություններն ըստ հավուր պատշաճի են կիրառվում
<p>Նորարական դասավանդումը կարող է ճնշվել</p>	<ul style="list-style-type: none"> իրականացնել նորարական դասավանդման լավագույն փորձի փոխանակում և առավել շատ նախագծեր իրականացնել այդ ուղղությամբ
<p>Հաշվի առնել (շարունակական) բարելավումը, այլ ոչ թե ներկայիս դիրքավորումը</p>	<ul style="list-style-type: none"> չափել ժամանակի ընթացքում գրանցված առաջընթացը որակի չափորոշիչների հաշվառմամբ, այլ ոչ թե կենտրոնանալ ներկայիս իրավիճակի վրա:
<p>Չափորոշիչի չափման գործընթացում չափազանց կախվածություն քանակական ցուցիչներից:</p>	<ul style="list-style-type: none"> Չափորոշիչի չափման գործընթացում հաշվի առնել ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցիչները:
<p>ՈԱԱ միշտ չէ, որ խթանում է որակի մշակույթի զարգացումը</p>	<ul style="list-style-type: none"> ՈԱ գործակալությունները պետք է աշխատանք ծավալեն սեկտորի ներկայացուցիչների հետ՝ որակի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ:
<p>ՈԱԱ համակարգը միշտ չէ, որ ձկուն է և տեղայնացված:</p>	<ul style="list-style-type: none"> իրականացնել ՈԱԱ համակարգի հետազոտություն և վերլուծություն՝ հավաստիանալու, որ որակի չափորոշիչները և ցուցիչները համապատասխանում են բարձրագույն կրթության որակի ապահովման փոփոխվող էությանը:

--	--

Օրինակ՝ միջազգայնացումը և տրանսազգային կրթությունը բարձրագույն կրթության եվրոպական տարածքում

Մատնանշել միջազգայնացման ռազմավարության հիմնական նպատակները, ինչպես նաև հետագա ներդրում պահանջող ոլորտները:

Միջազգայնացման նպատակները.

- խթանել բազմալեզվությունը (հասարակական, քաղաքացիական, միջմշակութային հմտություններ, աշխատունակություն) և շրջանավարտներին դարձնել մրցունակ,
- խթանել ուսումնական ապագա հետազոտությունը և մասնագիտական ցանցի հաստատումը,
- նոր հնարավորություններ բացել դեպի աշխատաշուկա (օր.՝ խթանել աշխատանք գտնելու հնարավորությունները),
- գրավել տեղացի և միջազգային ուսանողներին (օր.՝ համալսարանը դիրքավորել և՛ տեղական և՛ միջազգային համատեքստում),
- խթանել համալսարանի միջազգային պրոֆիլը,
- զարգացնել բարձրագույն կրթական եվրոպական/միջազգային առավել լայն ընդգրկվածություն:

Բարելավման ոլորտները.

- ուսանողների, ֆակուլտետի և անձնակազմի փոխանակում,
- լեզվակիր միջազգային անձնակազմի աշխատանքի ընդունում,
- ուսումնական պլանի միջազգայնացում և ուսուցման/դասավանդման մոտեցումներ,
- օտարազգի ուսանողների համար լեզվական կուրսերի մշակում (որպեսզի վերջիններս կարողանան հաղթահարել ուսումնական ծրագրերին գրանցելու պահանջները),
- ենթակառուցվածքների զարգացում (լաբորատորիաներ, գրադարան),
- ամառային կուրսերի, թրեյնինգների, սեմինարների կազմակերպում և մասնակցություն,

- միջազգային ուսումնական ծրագրերի (անգլերենով) մշակում,
- համատեղ իրականացվող ուսումնական ծրագրերի մշակում (նախընտրելի է բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի համար),
- սփյուռքի մոբիլիզացում, որպեսզի նրանք իրենց երեխաների ուղարկեն Հասատան և Վրաստան միջազգային ծրագրերին մասնակցելու:

Օրինակ՝ ՏԱԿ ՈԱ միջոցառումները և այլն, թե ինչպես վերջիններս կարող են բարելավվել գործընկեր համալսարաններում

Քննարկել Հայաստանում և Վրաստանում իրականացվող տարատեսակ ՏԱ կրթությունը: Մատնանշել ՏԱԿ վերաբերյալ իրականացված որակի ներքին ապահովման միջոցառումների լավագույն փորձը, ինչպես նաև առանձնացնել բարելավման կարիք ունեցող ոլորտները:

Ի հավելումն ներկայացված տարակարգերի՝ դուրս է բերվել ներոգրյալը.

Տարակարգ	Շարժունակության ձևերի/տեսակների սահմանում
Մոդելի շարժունակություն, մշակույթի հնարավորինս անցավ փոխանցում	<p>Կանոնադրական միջավայրի մոդելի մոդելավորում</p> <ul style="list-style-type: none"> • Ընդունող Ա երկրի կրթության մատակարարը մոդելավորում է Բ երկրի մատակարարների շրջանում հայտնի բնութագրիչները: • Կրթություն մատակարարը հետևում է Ա երկրի կրթական կանոնակարգերին, լավագույն փորձին և կրթական միջավայրի մշակութային արժեքներին: Սա որոշակի առումով մշակույթի փոխանցում է: • Դիպլոմներն անուղղակի կերպով են ճանաչվում՝ մոդելի ադապտացիայի ուժեղ կողմերի գնահատումից հետո:
Կանոնակարգերի շարժունակություն,	<p>Երկրի կանոնակարգերի և չափորոշիչների փոխանցում</p> <ul style="list-style-type: none"> • Ա երկրի պետական լիազոր մարմինները

<p>մշակույթի փոխանցում</p> <p>«բռնի»</p>	<p>Ֆինանսավորում են Բ երկրում պետության կողմից ճանաչված և ֆինանսավորվող մատակարարի հիմնումը:</p> <ul style="list-style-type: none"> • Կրթության մատակարարը երկու երկրների որակավորումների շնորհման լիազորություն ունի: • Կոնֆլիկտային իրավիճակներում, սովորաբար ընդունող երկրի որոշ կանոնակարգեր «լռում են», մինչդեռ Ա երկրի կանոնակարգերին առաջնահերթություն է տրվում: • Բ երկրի կանոնակարգերը պետք է ընդունվեն: • Շնորհվող դիպլոմները ճանաչվում են երկու երկրների կողմից:
--	---

Լավագույն փորձի օրինակներ.

- գործընկերային համաձայնագիր,
- համատեղ հաստատված գնահատման ընթացակարգ,
- ծրագրեր, որոնք հարմարեցված են ընդունող երկրի պահանջներին,
- որակի ներքին և արտաքին ապահովման շրջանակի մշակում,
- իրականացվող գործընթացներ՝ միտված հավատարմագրման ձեռքբերմանը,
- համագործակցություն միջազգային գործակալությունների հետ՝ փորձ ձեռք բերելու և գաղափարներ փոխանակելու նկատառումներով,
- համապատասխան համակարգերի առկայություն՝ բազմալեզու կրթություն իրականացնելու համար,
- ուսանողների շրջանում իրականացված հարցումներ, ինչպես նաև ուսանողների խորհրդատվություն այլ ուսանողներին,
- հետազոտական գործունեության խրախուսում,
- ծրագրերի/նախագծերի փոխանակում դասախոսների և ուսանողների համար,
- առանցքային շահակիցների ներգրավում գործընթացում,
- ուժեղ ղեկավարություն, որը կարող է հավասարակշռությունը պահպանել մանկավարժության և բիզնես մոդելների միջև:

Բարելավման կարիք ունեցող ոլորտները.

- ուսանողներին ապահովել համապատասխան և թարմացված տեղեկատվությամբ,
- կենտրոնանալ ուսանողների փորձի վրա՝ միջազգային ուսանողներին ուսումնական խորհրդատվություն տրամադրելու նկատառումներով,
- ապահովել համապատասխան թրեյնինգներ դասախոսների համար՝ մասնավորապես օտար լեզուների գծով,
- մշակել միջազգայնացման ռազմավարություն,
- խորհրդատվություն ստանալ ՈԱՍ-ից՝ ՈԱ գործընթացների կառուցվածքի հետ կապված,
- զարգացնել չափորոշիչների փոխադարձ ճանաչումը,
- ծրագրերի ներդրման գործընթացում գործատուների առավել ներգրավվածություն ապահովել,
- որդեգրել ԿԿՓՀ-ն:

Օրինակ՝ ինչպես են բուհերն արձագանքում տրանսազգային/անդրսահմանային կրթության արտաքին պահանջներին

Ստորև ներկայացված է այն առավելությունների և մարտահրավերների ցանկը, որոնք պարտադրվում են բուհերին տրանսազգային կրթության որակի ներքին ապահովման պահանջների ձևով.

Արտաքին պահանջների առավելությունները.

- միջազգային ճանաչում և դասակարգում,
- շարժունակության աճող հնարավորություններ,
- ֆինանսավորման աճող հնարավորություններ,
- ուսանողների համար առավել ճկունություն/հնարավորություններ,
- կարգավորման ընթացակարգերի առավել դյուրին ներդրում,
- խթանում մշակելու տրանսազգային կրթությունը ներառող միջազգայնացման ռազմավարություն,
- ուսանողների առավել ներգրավում և համալսարանի զարգացում,
- ֆակուլտետի գործունեության և ծրագրերի որակի բարելավում,
- թափանցիկության խթանում:

Առանցքային կետ

Այն ներառում է ամբողջ գործընթացի որակի կառավարումը՝ տանելով դեպի կայուն բարելավման:

Արտաքին պահանջների մարտահրավերները

- ռեսուրսների համահավասարեցում՝ մասնավորապես աշխատակազմի ժամանակի և ֆինանսների,
- lack of sufficient (WHAT?) for training staff within HEIs to meet requirements – What is meant here,
- արտաքին գործակալությունների պահանջների պարբերաբար փոփոխություն,

- տրանսազգային չափորոշիչների ապահովման պահանջների համադրելիություն,
- պահանջ ցուցադրելու, որ տրանսազգային կրթությունը օգուտ է բերում ընդունող երկրին,
- թղթաբանության համահավասարեցում և ճկունության պակաս:

Առանցքային կետ

Ձեռք բերել ֆինանսական աջակցություն և մեծացնել ֆակուլտետի ներգրավվածությունը:

Առանձնացնել այն ոլորտները/գործողությունները, որոնք բեկումնային են տրանսազգային կրթության ապահովման համար և առաջարկություն ներկայացնել առ այն, թե արտաքին պահանջներն ինչպես կարող են ձևակերպվել այս ոլորտները հասցեագրելու համար:

Օրինակ` համազգային պահանջների սահմանում, որոնք հնարավորություն են ընձեռում SUԿ որակի արդյունավետ ապահովման համար	
Ոլորտները/գործողությունները, որոնք բեկումնային են SUԿ ապահովման համար	Արտաքին պահանջներն ինչպես կարող են ձևակերպվել այս ոլորտները հասցեագրելու համար.
Պարզ օրենսդրական գործընթաց, որի արդյունքում SUԿ գործընկերության կանոններն ու ընթացակարգերը հրապարակայնորեն մատչելի են` ներառյալ ֆինանսական կայունությունը	<ul style="list-style-type: none"> • համաձայնության գալ լեզվի և եզրութաբանության շուրջ, • այնուհետ, համապատասխան մարմինները կարգավորում են օրենսդրական դաշտը և մշակում են ներդրման մեթոդաբանություն` այս ամենը հրապարակայնորեն մատչելի դարձնելով
Կարգավորել SUԿ չափորոշիչների օրենսդրական դաշտը` շնորհիվ ու որակավորումների և	<ul style="list-style-type: none"> • վերանայել հավատարմագրման կանոնադրությունը պարզաբանելու համար SUԿ չափորոշիչներն ու չափանիշները` դրանք զուգակցելով

<p>դիպլոմների ճանաչումը խթանելու համար:</p>	<p>որակավորումների ազգային շրջանակին՝ հավաստելու, որ ուսումնական չափորոշիչները վտանգված չեն,</p> <ul style="list-style-type: none"> • ՈԱ, հավատարմագրումն ու ճանաչումը պետք է հանգեցնեն չափորոշիչների և ցուցիչների ձևակերպմանը, որոնցով կգնահատվեն շնորհվող որակավորումներն ու դիպլոմները
<p>SUԿ իրականացման համատեղ հավատարմագրում՝ համոզվելու, որ այն գործընկերներին երկուստեք ձեռնտու է:</p>	<ul style="list-style-type: none"> • հնարավորության սահմաններում պետք է խրախուսվեն միջկառավարական համաձայնագրերը, ինչը կարող է հանգեցնել այնպիսի համակարգերի, որոնք հնարավորություն են ընձեռում SUԿ ծրագրերի համատեղ հավատարմագրման համար, որոնք ճանաչված են համապատասխան կառավարությունների և համալսարանների կողմից:
<p>ԿԿԵՀ կիրառման առողջ և համապատասխան համակարգ:</p>	<ul style="list-style-type: none"> • մշակել կրեդիտների փոխանցման համագոր համակարգ՝ սահմանելով ուսումնառության հստակ վերջնարդյունքներ, ինչպես նաև իրականացնել նմանօրինակ ծրագրերի բենչմարք այլ երկրներում/համալսարաններում, • թույլատրել ուսանողներին կրեդիտներ փոխանցել
<p>Միջազգայնացված ծրագրեր, որոնք ճանաչված են տարածաշրջանում և ամբողջ աշխարհում:</p>	<p>համապատասխանեցված և ճանաչված ծրագրեր, որոնք դասավանդող անձնակազմի համար ապահովում են համապատասխան որակավորում SUԿ-ի իրականացման</p>

	համար:
Ծրագրերի մշակման գործընթացում գործատուների ներգրավվածություն՝ հատկապես, երբ դրանք պետք է տեղայնացվեն տեղական շուկայի համատեքստում:	պետք է ներդրվի աշխատաշուկայի կարիքների տարեկան վերանայման համակարգ
Համալսարանի համբավը պետք է պաշտպանված լինի՝ հատկապես այն դեպքերում, երբ մշակվում են համագործակցային եզրեր:	<ul style="list-style-type: none"> • չափանիշներ առ այն, թե ինչն է կարելի համալսարան անվանել և ինչ պահանջներ կան ՏԱԿ իրականացման համար (օրինակ՝ անհրաժեշտ է նպաստել որպեսզի համագործակցության որոշակի ծավալ իրականացվի հետազոտության ոլորտում)
Առկա են անձնակազմի զարգացման հնարավորություններ՝ վերջիններիս ՏԱԿ ներգրավվելու և իրենց առջև դրված պահանջներն իրականացնելու համար համապատասխան հմտություններով զինելու:	<ul style="list-style-type: none"> • կառուցակարգերի առկայություն և ֆինանսավորման հնարավորություններ, որոնք կխթանեն ուսումնական շարժունակությունը (այն կապելով կրեդիտների կուտակման հետ)

Օրինակ՝ ՏԱԿ իրագեկության շրջանակ: Ի՞նչն է պետք/ցանկալի պահպանել ՏԱԿ մեթոդաբանության համար:

Դիտարկե՛ք ստորև ներկայացված ՏԱԿ իրազեկության 3 շրջանակները և քննարկե՛ք, թե սույն համատեքստում որ սկզբունքներն ու ցուցիչներն են համապատասխան և որոնք՝ ոչ այդքան:

Անդրսահմանային բարձրագույն կրթության որակի ապահովման ուղեցույցներ¹⁵

Հաշվի առնելով, որ կառավարությունների, ՈԱ և հավատարմագրման մարմինների, բուհերի ու կրթության մատակարարների համար գրված ուղեցույցները ընդհանրական են, գրեթե բոլոր առաջարկությունները պետք է պահպանվեն ՏԱԿ ՈԱ մեթոդանաբության համար, քանզի դրանք կարող են հրաշալի մեկնարկային կետ հանդիսանալ սկզբունքների և գործընթացների նախաձեռնման համար:

ՅՈՒՆԵՍԿՕ/ԵԽ լավագույն փորձի վերանայված կոդեքսը՝ սկզբունքներ.¹⁶

ՏԱԿ կազմակերպում. (1) մշակույթ և սովորություններ, (6) շնորհող հաստատության պատասխանատվությունները որակի նկատմամբ, (8) ուսումնական ծանրաբեռնվածության հավասարաբեռնությունը, (10) և ԵԽ/ՅՈՒՆԵՍԿՕ ճանաչման կոնվենցիայի պահանջները, (11) համաձայնեցվել են սույն ծրագրին համապատասխան:

Ուսումնական որակ և չափանիշներ. (2) ևս համապատասխան է համարվել, չնայած այն կարելի է պարզեցնել, քանզի բավական խրթին է իր ներկայիս ձևակերպմամբ:

Քաղաքականություն և առաքելություն. (3) ևս համապատասխան է, այդուհանդերձ, անհրաժեշտ է տեղեկանալ, թե ովքեր են լինելու այն ղեկավար մարմիններն ու շահառուները, ովքեր կստանան սույն տեղեկատվությունը:

Տեղեկատվություն. (4) այն կարելի է 2 մասի բաղդատել՝ որոնցից մեկը կվերաբերի համագործակցային միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությանը, մյուսը՝ ուսանողներին տրամադրվող տեղեկատվությանը:

¹⁵Guidelines available here: <http://unesdoc.unesco.org/images/0014/001433/143349e.pdf>.

¹⁶ Principles available here: http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/documents/lrc/code_tne_rev2007.pdf

Անձնակազմ. (5) համապատասխան է համարվել, բայց ավելի կոնկրետ պետք է լինի, երբ խոսքը վերաբերում է ուսումնական անձնակազմի գիտելիքներին և լեզվական հմտություններին: Այս սկզբունքը կիրառելի է հաստատության ողջ անձնակազմի համար:

Գործակալներ. (7) հստակեցման կարիք ունի առ այն, թե որն է գործակալների դերակատարությունը, ինչպես նաև այն, որ գործակալները միշտ չէ, որ օգտագործվում են:

Ընդունելություն. (9) տեղ-տեղ համապատասխան է համարվել, այդուհանդերձ, հարկ է հաշվի առնել այն, որ որոշակի երկրներում այն հնարավոր չի լինի կիրառել տեղական կանոնակարգային դրսևորումներից ելնելով:

ՄԹ Բարձրագույն կրթության որակի նորմերը. գլուխ B10 ցուցիչներ¹⁷

Որակի նորմերի գլուխ B10-ի 19 ցուցիչները գետեղված են ներոգրյալ 6 տարակարգերում.

- ռազմավարություն և վարչարարություն,
- այլոց հետ ուսուցման հնարավորությունների մշակման, համաձայնեցման և կառավարման պայմանավորվածություններ,
- կրթական չափորոշիչների նկատմամբ պատասխանատվություն և համագործություն,
- որակի ապահովում,
- տեղեկատվություն ուսանողներին և կրթություն մատակարարող կազմակերպություններին, աջակցություն կրթություն մատակարարողներին կամ գործընկերներին,
- ուսումնառության գրառումներ և վկայականներ:

19 ցուցիչների մեծամասնությունը համապատասխան են և պետք է ինչ-որ ձևով պահպանվեն տրանսազգային կրթության մեթոդաբանության մշակման ընթացքում: 16-րդ ցուցիչը վերաբերում է արտաքին փորձագետներին, ինչը պարտադիր պահանջ չէ շատ երկրների բարձրագույն կրթության օրենքներում և ուստի կարող է անտեսվել: 14-րդ

¹⁷UK Quality Code for Higher Education, Chapter B10, available here: www.qaa.ac.uk/assuring-standards-and-quality/the-quality-code/quality-code-part-b

ցուցիչը վերաբերում է ուսանողների գրանցման ու ընդունելության քաղաքականության մշակմանը՝ մասնավորապես այն, թե արդյոք ընդունելությունը համահունչ է որակավորումների շնորհման մարմինների քաղաքականություններին: Սա միշտ չէ, որ կիրառելի է միջազգային համատեքստում՝ հատկապես այն դեպքերում, երբ որակավորումները շնորհվում են կենտրոնացված՝ կառավարական իշխանությունների կողմից:

Գործողություն՝ Որակի ներքին ապահովման ծրագրերի զարգացում

Օգտագործելով եվրոպական չափորոշիչներն և ուղեցույցերը (Բարձրագույն կրթության եվրոպական ասոցիացիա)՝ յուրաքանչյուր բուհի համար մատնանշել այն չափորոշիչները, որոնք լիովին համադրելի են և նրանք, որոնք համադրելու համար հետագա քայլեր են անհրաժեշտ: Յուրաքանչյուր բուհի համար գործողությունների ծրագիր կազմել՝ առանձացնելով ՈԱ 5 գործընթացներ, որոնք պետք է ներդրվեն առաջիկա վեց ամիսների ընթացքում:

Մշակվելիք և ներդրվելիք գործողությունների ինստիտուցիոնալ ծրագրերի օրինակները ներկայացված են ստորև.

Ակակի Ծերեթելիի անվան պետական համալսարան (Վրաստան)

- էլ. կայքն առավել հասանելի դարձնել շահագրգիռ տարբեր կողմերի համար,
- մշակել շահակիցների ներգրավման արդյունավետ ծրագիր,
- որակի մշակույթ. մշակել ՈԱ ռազմավարություն՝ յուրաքանչյուր ֆակուլտետի որակի գծով պատասխանատուներին առավել ներգրավվելու նպատակով,
- գնահատման չափանիշներ. վերլուծել, թե գնահատման չափանիշներն ինչպես են կապված ուսումնառության վերջնարդյունքերի հետ և ապահովել արդյունավետ հաղորդակցություն,
- մշակել համապատասխան համակարգ ներկայիս ՈԱ գործընթացների հետադարձ կապն ապահովելու համար:

Հայաստանում ֆրանսիական համալսարան (Հայաստան)

- A Որակի քաղաքականություն.
- ա. ձևակերպել որակի ինստիտուցիոնալ քաղաքականություն,
 - բ. վերակազմավորել ՈԱ հանձնաժողովը,
 - գ. համապատասխան շահակիցների հետ բանակցություններ կազմակերպել:
- B Պրոֆեսորադասախոսական անձնակազմի զարգացում.
- ա. լեզուների դասավանդման համար,
 - բ. մասնագիտական առարկաների դասախոսների համար:
- C Տեղեկատվական համակարգ (ներառյալ IT և տեխնիկական անձնակազմ):

Կառուկատու համալսարան (Վրաստան)

- վերանայել տրանսագային կրթության ներքին քաղաքականությունը և ընթացակարգերը,
- մշակել անձնակազմի զարգացման կարճաժամկետ ուսուցում (ուս. պլանի մշակում),
- քննարկել էլ. ուսուցման համակարգի մշակման հնարավորությունները՝ արտաքին փորձաքննության ներգրավմամբ,
- վերանայել հարցաթերթիկները (աշխատանքի տեղավորման, գոհունակության),
- վերանայել և թարմացնել ֆակուլտետի գնահատման հարցաթերթիկները:

Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան (Հայաստան)

- մշակել ծրագրերի և շնորհվող որակավորումների մշտադիտարկման համակարգ (ներկայումս նման համակարգը բացակայում է),
- մշակել ուսանողների գնահատման չափանիշներ,
- պարզաբանել աշխատանքի ընդունման և նշանակման պատասխանատվություններ,
- ապահովել մատուցվող ծառայությունների վերաբերյալ հետադարձ կապը,
- բարելավել տեղեկատվության հավաքագրման համակարգը:

Բաթումի պետական համալսարան (Վրաստան)

- բարելավել հեռավար հեռակա ուսուցումը,
- բարելավել վիճակագրական համակարգը (աշխատանքի տեղավորում, շրջանավարտներ, ուսանողների առաջընթաց),
- բարելավել ուսանողների գնահատման ընթացակարգերը,
- դասավանդող անձնակազմի ՌԱ (ինքնագնահատման ընթացակարգեր, ՌԱ առցանց ուսուցում),
- ՌԱ ծրագրային մշակում:

Հայաստանի ամերիկյան համալսարան (Հայաստան)

- Բարձրացնել ուսանողների ներգրավվածությունը հանձնաժողովներում (ըստ վերահանված կարիքների անձնակազմի, ֆակուլտետի և ուսանողների վերապատրաստում),
- ուսանողների ավելի մեծ ներգրավվածություն ՌԱ գործընթացներում (ըստ վերահանված կարիքների վերապատրաստում),
- խթանել աջակցության ծառայությունները ավարտական կուրսերում,
- վեր հանել և աջակցել հատուկ կարիք ունեցող ուսանողներին:

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Միացյալ Թագավորության Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալության և Ֆրանսիայի Կրթության պլանավորման ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային ինստիտուտի համատեղ ջանքերով: Ստեղծմանն իրենց աջակցությունն են ցուցաբերել նաև ՏԵՄՊՈՒՄ-ի “Տրանսազգային կրթության որակի ապահովումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում” նախագծի մասնակիցները:

www.qaa.ac.uk և www.iiep.unesco.org

Սույն փաստաթղթն առանց թույլատվության կամ գումարի գանձման կարող է օգտագործվել միայն անձնական, կրթական և հետազոտական նկատառումներով և ցանկացած այլ պարագայում, երբ օգտագործումը շահույթ չի ենթադրում: Օգտագործումը ենթադրում է համապատասխան վկայակոչում: